


ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԲ
1998

ԾԴ ՏԱՐԻ

Է. ՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. Է. ՋՄԻԱԾԻՆԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ
1998



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ծավը ցավն ապրողինն է 3

ՊԱԾՏՈՆԱԿԱՆՔ

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ - Հայրական խօսք

Գիւմրիի շրջանի երկրաշարժի տասնամեակին առիթով 8

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ոգեկոչվեց 1998-ի երկրաշարժի անմեղ

գոհերի ճիշատակը 11

Ֆրանսիայի Մախազաթի քարեմաղթամըը դեկտեմբերյան երկրաշարժի

10-րդ տարեդիցի առիթով 14

Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասակը Ֆրանսիայի

մախազաթ ժակ Օիրակին 15

Վեհապետ Հայրապետի մամակները Ֆեդերիկո Մայորին և

Կոմրադ Ռայգերին՝ Հին Զուդայի հայկական գերեզմանատան
ոչնչացման կապակցությամբ 16

ՀՀ մախազաթն ընդունեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ

Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանին 17

Իրանը Հայոց Եկեղեցուն առաջարկում է մասնակից դառնալ

Իսլամ-քրիստոնեական երկխոսությանը 18

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը

Գեղարքունյաց թեմի առաջնորդ գերշ. Տ. Ամանիա եպիսկոպոս

Արաքսյանին արքայության պատիվ շնորհելու մասին 19

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը

տորոնտոյաքմակ Անդրե Նազարյանին «Ա. Գրիգոր Լուսավորիչ»

շքանշանով պարգևատրելու մասին 21

Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնության գիրը Ելենա

Ալեքսանյանին՝ մշակութային գործունեության 65-ամյակի առիթով 22

Բարեմաղթամքի մամակներ Ամենայն Հայոց Կաթողիկոսին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց Վեսչեստրի հայոց

եկեղեցու օծման արարողությանը 25

Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդն ընդունեց թեմակալ

առաջնորդներին և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին 26

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Գերագույն Հոգևոր Խորհրդի ղեկավար

Գիստը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 27

ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաջարյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում դեկտեմբերի 7-ին՝ 1988 թ. երկրաշարժի 10-րդ տարելիցի առիթով	30
Տ. Միքայել Ծ. Վրդ. Աջապահյանի քարոզը՝ խոսված Էջմիածնի Սուրբ Աստվածածին եկեղեցում	32
Տ. Մակար արքեպ. Հովհաննիսյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնի առիթով	37
Տ. Արամշ արքեպ. Նալբանդյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Մայր Տաճարում	39

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԱՉ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐԹԱՆ - Նամականու ժանրը հիմնորդի դարի հայ պատմագրության մեջ	42
Հ. Ղ. ՄԻՐՋՈՅԱՆ - Հնդկահայ լուսավորականության ակունքները	57
ԱՍԱՏՈՒՐ ՓԱՇԱԹԱՆ - 18-19-րդ դարերում վենետիկի Միսիթարյան միաբանության հրատարակած բնագիտական աշխատությունները	64

ԳՐԱԿԱՆ - ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ԼԵՎՈՆ ՄԻՐԻՋԱՆԹԱՆ - Համազգային երգչուհին	70
ԳԷՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ - Ակադեմիկոս ՍԷՄ Արեշտանյանի վաստակած 70-ամեակը	76
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿԵԱՆ - Երկար սպասված հրատարակություն	80
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿԵԱՆ - «Ինձ տուր քո ցավը»	83

ՄԱԹՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆԵԱՆ - Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանի մամլո ասուլիսը	86
ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆԵԱՆ - Արքայության պատիվ շնորհվեց Գեղարքունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ամանիա եպիսկոպոս Արաքսյանին	95
ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ - Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին ցվիրված հանդիսությունը Գևորգյան Հոգևոր Մեմարանում	100
ՎԱՀԵ ԴՊԻՐ ԲԵԳՈՅԱՆ - Հույս, հավատ, սեր և մկրտություն՝ Հայոց բանակի զինվորներին	102

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԻՋԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱԶԱՊԱՀԹԱՆ - Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ութերորդ համաժողովը Հարարեում՝ «Դարձիր առ Աստված. ցնձա հույսի մեջ» ճշամաքանով	104
---	-----

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿԹԱՆ – Նա միշտ բարձր մնաց իր ապրած ժամանակից.....	108
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ – Եկեղեցական բեմ. լուրեր	111
ԽՈՐԵՆ ԱՐԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍԹԱՆ – «Էջմիածին» ամսագրի մատենագիտությունը (1974–1983)	115
Ծանկ «Էջմիածին» ամսագրում 1998 թվականի ընթացքում տպագրված նյութերի	140
«ԵՇՄԻԱԾԻՆ» официаль печатный журнал Эчмиадзинского Католикосата	158
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	161
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	163

ԽՄԲԱԳՐԻ ՊԵՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.


ԴԱՍԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՉ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՑԱՎԸ ՑԱՎՆ ԱՊՐՈՂԻՆՆ Է

Բայց հիմ ու մոր քո վերքերով կամզված ես դու կեցողանի...

ՀՈՎԷ. ԹՈՒՄԱՆԹԱՆ

Ինչպես ցավով արձանագրել են մեր պատմագիրները, հայ ժողովրդի պատմությունը դարերի ընթացքում եղել է երկրաշարժի ու գաղթի տարեգրություն: Ժամանակագրություններում հատկապես շեշտվել են այն տարեթվերը, երբ այս երկու աղետները միաժամանակ են եկել: Այսպես եղավ ման տասը տարի առաջ՝ 1988 թվականի վերջին:

Մեր երկիրը մեկ ամսվա ընթացքում ունեցավ թե՛ գաղթականներ և թե՛ աղետյալներ: Եթե առաջինները մորմոքելու էին իրենց կորցրած տների համար, ապա երկրորդներն իրենց տների փլատակների առջև մորմոքելու ոչ թե իրավունք, այլ ժամանակ իսկ չուներին, քանի դեռ այդ փլատակների տակ կենդանի ու անկյանք էակներ կային, որոնց հասնելու համար մեր Հայրենիքի երկու պատմական նահանգներում՝ Օրդասկում և Լոռիում, ավելի քան տասն օր ցերեկը արևի, գիշերները՝ վեր բարձրացող խարույկների բոցերի, մեքենաների այրվող դողերի կամ վառվող լույսերի ցերքո մարդիկ քարերի հետ կոփվ էին տալիս՝ քարերից մաքրելու երբեմնի տների տարածքը, ճախ գտնելու և ապա՝ կա՛մ կյանքի վերադարձնելու և կա՛մ էլ հողին հանձնելու համար:

Լեռնականում, Սպիտակում, Նալբանդում և էլի շատ ու շատ բնակավայրերում կյանքն ու մահը ոչ թե միմյանց հետ կոփվ էին տալիս, այլ միմյանց էին խառնվել փլատակների դիմաց գտնվող բաց տարածություններում, թիթեղյա ավտոտնակներում, մեքենաների մեջ, առաջին նորաբաց վրաններում՝ իրար կողք-կողքի հոգնատանը ընկած և դրված մարդկանց շարքերում:

Աղետի առաջին իսկ օրերին, Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագից հետո, ավերակված Գյումրի ուղղվեց երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ապագա վերականգնումի տեսիլքն այլերում՝ ծերունագարդ և առաքելատիպ Հայրապետը Հայոց, շրջապատված քաղաքի բնակիչներով և կամ նրանց ուժասպառ հայացքների ուղեկցությամբ, փողոց առ փողոց առաջ էր շարժվում փլատակների փռուց գորշացած և կիսահալ ձյան վրայով՝ իր քայլերով ցավի ու տառապանքի այս ճանապարհներին բացերով արահետները ՀՈՒԹՄԻ, ՀԱՎԱՏԻ և ՍԻՐՈ: Իր ժողովրդի ազգային-հոգևոր վերագարթոնքը տեսնելու բերկրանքն ապրած Կաթողիկոսին վիճակված էր ման, մեր երանաշնորհ Հայրապետների նման, կատարել զոհվածների ընդհանրական հոգեհանգիստը:

Դեկտեմբերի 7-ը Հայոց Եկեղեցու՝ իր իսկ կողմից հայ ժողովրդի հանդեպ սահմանած ծառայական պարտքն ավելացրեց ևս մի ծանր՝ ավերված շրջանների վերաշինության հոգսով: Դեկտեմբերյան աղետից անմիջապես հետո, Հայրենիք շտապեց ման Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը:

Դեկտեմբերի 18-ին, Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագի ժամա-

մակ, «Հայր մեր»-ից առաջ, վազգեն Վեհափառի հետ Ս. Խորան բարձրանալով. Գարեգին Բ Կաթողիկոսն ասաց. «Այսօր, այս Խորանին վրա, որպեսզի ես մեկ հայ զավակի, մեկ հայ մանուկի աչքերում արցունքը սրբեմ ու մեկ հայ ընտանիքի սեղանին վրա պատառ մը հաց հայթայթեմ, իբրև Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, ընտրությանս ատեն ինձի տրված այս ոսկի արծիվը, ձեր բոլորին առջև կհանեմ ու զայն կդնեմ այս Սուրբ Խորանին: Թող Աստված ընդունի զայն իբրև խմոր մը ապագա նվիրահավաքության»:

Այս ընծայումը Գարեգին Վեհափառի համար մինչ այսօր շարունակվող ինքնաընծայում դարձավ՝ հանուն աղետյալ շրջանների, Արցախի և նորանկախացյալ Հայաստանի: Հատկանշական է, որ, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո, Նորին Արքայությունը հայրապետական իր առաջին ուղևորությունը տվեց Օհրակի, որպես հայության բաց վերքի, իսկ երկրորդը՝ Արցախի, որպես հայության հավաքական պատասխանատվության կիզակետի, թեմերին:

Ժողովրդական իմաստությունն ասում է, որ դժբախտության ժամանակ է իսկապես երևում, թե ով ով է: Ինչպես Մեծ եղեռնին հաջորդած տարիներին սփյուռքահայ միջավայրում, այնպես էլ 1988 թ. դեկտեմբերի 7-ից հետո աղետի գոտում, որպես մի ոսպնյակում, բեկվեց յուրաքանչյուրի ծավալած գործունեությունը՝ օպտիկական ճշտությամբ ցույց տալով, թե ով ինչ նպատակ ունի: Առաջին աշխարհամարտի օրերին և հաջորդող տարիներին տարբեր Եկեղեցիների և քրիստոնեական բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչներ ու անհատ մտավորականներ ինքնամվիրումի և ինքնագոհողության ցնցող օրինակներ ցույց տվեցին, զաղթի ճանապարհներից մինչև Միջագետքի անապատներն ու Մերձավոր Արևելքի երկրները՝ իրենց մասնակցությունը բերելով որբահավաքությանն ու որբախնամությանը:

Նույն կերպ, դեկտեմբերի 7-ից հետո, անկախ Արցախյան հիմնահարցի հանդեպ ունեցած քաղաքական դիրքորոշումից, Խորհրդային Միության հանրապետություններն ու աշխարհի երկրները եղբայրական և համամարդկային օգնության ձեռք մեկնեցին աղետյալներին: Իրենց ցավակցությունը հայտնեցին և նյութական-բարոյական աջակցությունը բերեցին աշխարհի հոգևոր շատ Վեհապետեր, իսկ Մալո Թերեզան և իր քույրերը եկան՝ մեկ անգամ ևս հավաստեղու, թե ավանդական Եկեղեցիներն ինչպես են իրենց ծոցում կենդանիորեն կրում քրիստոնեության առաջին դարերի քրիստոնեական գթասիրության, բարեգործության ու անձնագոհության կենդանի շունչը: Նրանք եկան, որպեսզի օգնեն հայ մարդուն, որ մա չկորցնի իր հավատը, այլ վերագտնի այն, ոչ թե դավաճանի, այլ հավատարիմ մնա իր ինքնությանը: Այսպիսով, նրանք, ովքեր որպես ճշմարիտ քրիստոնյաներ եկան, եկան և գործեցին Հայոց Եկեղեցու հետ համատեղ:

Դժբախտաբար գծագրվեց մահ պատմական մյուս զուգահեռը: Կրոնական այն հարանվանություններն ու ուղղությունները, որոնք 1915-ից առաջ անգործ էին հայրենի բնաշխարհում իր Եկեղեցու հովանու ներքո ապրող արևմտահայությանը մոլորեցնել, այնուհետև կարողացան սողոսկել եղեռնազարկ ժողովրդի գաղթականացները՝ տրված հացով և հագուստով եղեռնը շարունակելով հոգևոր ու ռազմամար: Ինչպես այդ օրերին գրում էր Մեծի Տանն Կիլիկիո տարագիր և

ծերունազարդ Սահակ Բ Խապայան Կաթողիկոսն իր նշանավոր «Կտակ»-ում. «Այս անկարկատելի վերջերում ու անբուժելի ցաւերում հետ հոգեկան նոր վերքեր ու ցաւեր կը յաճախեն օրըստօրէ, նոր կրօններու նոր առաքելներ Հայ խաչաչար Եկեղեցին՝ հին խրամատներու վրայ նոր խրամատներու կ'ենթարկեն օտար դրամով ու թելադրութեամբ: Մի քանի ժամգահար դրուշով, պատառ մը օթեկ հացով, քուտ մը ալիւրով եւ հոնտի զգեստով Աստուծոյ արքայութեան նոր զինուորներ կը պատրաստեն»:

Նույնը տեղի ունեցաւ նաև մեր օրերում: Խորհրդային տասնամյակներին իսկ Ս. Էջմիածնի, Գևորգ Զ Չորեքչյան և Վազգեն Առաջին Հայրապետների նկարներն իրենց տներում, մեքենաներում և աշխատավայրերում պահող ժողովուրդը, 1988 թ. փետրվարյան վերազարթոնքից հետո էլ ամբողջական դարձ կատարելով դեպ իր ազգային-հոգևոր ակունքները, այնուհետև կրոնական տարբեր հարանվանությունների ցանցով չպիտի պատվեր, եթե չլինեն երկրաշարժը, քանի որ աղանդները, որպես շեղում և հերձված, կարող են կենսունակ դառնալ և տարածվել միայն բնականոն կյանքից շեղված արտակարգ և հատկապես դժբախտ իրավիճակներում:

Քանի որ Աղետի գոտու հետ հարաբերվող գլխավոր երկու հասկացություններն են ՎԵՐԱԿԱՆ ԳՆՈՒՄԸ և ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ, հաճախ, միտումնավոր կերպով կամ անտեղյակությամբ, այն հարցն է տրվում, թե ինչո՞ւ կրոնական տարբեր կազմակերպություններ բազմաձև նյութական օգնություն են տալիս իրենց համայնքի անդամներին, իսկ Հայոց Եկեղեցին, այդքան մեծ հնարավորություններ ունենալով համդերձ, նման ծավալի օգնություն չի ցուցաբերում: Ինչո՞ւ և ինչի՞ համար է պահում իր միջոցները և կամ մի՞թե ավելի կարևոր այլ գործեր կան: Այսօրվա սոցիալական ծանր պայմաններում առավել հնչել մեկ այլ հարցադրում թերևս դժվար է գտնել:

Նախ ասենք, որ օգնությունը Եկեղեցու փրկագործական և քարոզչական-բարեգործական առաքելության միայն մեկ բաժինն է կազմում: Չնայած այս իրողությանը, իր թեմերի միջոցով աշխարհասփյուռ հայությունից կատարված հանգանակությամբ Հայոց Եկեղեցու ցուցաբերած օգնությունը Աղետի գոտուն, Արցախին և ընդհանրապես նորանկախ Հայաստանին, հարյուրապատիկ գերազանցելով կրոնական բոլոր հարանվանությունների բաժանածին, հաճախ ստվերում է մնում, որովհետև տարբեր են մեր Եկեղեցու և այս հարանվանությունների ցուցաբերած օգնության նպատակը, բնույթը և ընդգրկման շառավիղը:

Ո՞րն է այս տարբերությունը:

Կրոնական հարանվանությունների բաժանածը թե՛ Աղետի գոտում և թե՛ հանրապետության մյուս շրջաններում գերազանցապես տրվում է տվյալ համայնքի անդամներին, իսկ Հայոց Եկեղեցու ցուցաբերած օգնությունը կրոնական բաժանում և խտրություն չունի: Այն չի բաժանվում ըստ թեմերի ծխերի, այսինքն՝ միայն Հայ Առաքելական Եկեղեցու հավատացյալներին չի ուղղված, այլ, անկախ հավատի աստիճանից, կրոնական համոզումներից և ազգային պատկանելությունից, հասցեագրվում է հանրապետության բոլոր քաղաքացիներին՝ ունենալով բաշխման երկու սկզբունք:

ա) ըստ վարչա-տարածքային բաժանման՝ տվյալ շրջանի, մարզի և ողջ հանրապետության ընակչությունը:

բ) ըստ սոցիալական խմբերի և դասակարգման՝ մոտածիններ, երեխաներ, կարիքավոր ընտանիքներ, հաշմանդամներ և թոշակառուներ:

Այս պայմաններում, ընականաբար, հարյուր մարդ ունեցող համայնքի ստացածը պետք է տարփոփվի և շահարկվի, թե ինչ օգնություններ են տրվում, իսկ համահանրապետական ընդգրկում ունեցող ձեռնարկումները տարրալուծվելու են իրենց ընդգրկումի մեջ և ստացողները հաճախ չեն էլ իմանալու, որ այն տրվել է Հայոց Եկեղեցու կամ նրա բարեգործական որևէ կառույցի կողմից:

Երկրորդ՝ եթե հարանվանությունների օգնությունը սահմանափակվում է համայնքի անդամներին մյուսապես օգնելով՝ այլուր, մարզարին և հագուստ բաժանելով, և այդ օգնությամբ մոտանոր մարդիկ գրավելով, Հայոց Եկեղեցին, բուն սոցիալական օգնությանը զուգահեռ, հսկայական միջոցներ է հատկացնում Հայաստանի տնտեսության զարգացմանը: «Ո՞ր է Եկեղեցին» հոետորական հարցումը հաճախ կրկնել՝ սիրող մեր որոշ մտավորականները և հասարակական գործիչներն արդյոք երբևէ հաշվե՞լ են, թե Հայաստանի զարգացմանը և Աղետի գոտու վերականգնմանը նպատակամիտված ամենատարբեր ծրագրերից յուրաքանչյուրին Եկեղեցու բերած աջակցությունն այս հարանվանությունների բաժանած այլուրի քանի՞ պարկերին և մարզարիցի արկղերին է հավասար: Իսկ այդ օգնությունները դրանից այն կողմ չեն անցնում, քանի որ Հայաստանի առաջընթացը ոչ միայն իրենց մարդոթությանը չի նպաստի, այլև կվերացնի սոցիալական այն միջավայրը, որում հնարավոր է ծավալել այն:

Երրորդ՝ ի տարբերություն կրոնական զանազան հարանվանությունների, որոնք միայն իրենց ըմբռնումներին համապատասխան քարոզչություն են ծավալում, Հայոց Եկեղեցին իրեն տեր և պատասխանատու է համարում նաև հայ ժողովրդի անցյալի հոգևոր մշակույթի հանդեպ, որի պահպանության և փոխանցման համար ևս մեծ ուժեր ու միջոցներ են ծախսվում՝ վանքերի ու եկեղեցիների մոտոգությունից մինչև մոր դպրոցների ու մշակույթի օջախների կառուցումն ու հայագիտական ուսումնասիրությունների հրատարակությունը, իսկ հարանվանությունների կառուցածը կամ հրատարակած մակերեսային քարոշախոսությամբ պարզունակ գործույկները միայն իրենց քարոզչությանն են ծառայում:

Այսպիսով, մինչ օրենսդիրներն ու իրավապաշտպանները քննարկում են այն հարցը, թե ժողովրդավարական երկրում քաղաքացիական հասարակության պայմաններում Հայոց Եկեղեցուն ի՞նչ առանձնաշնորհումներ պետք է վերապահել և կամ որքանո՞վ այն դիտարկել որպես մեկը Հայաստանում գրանցված մի քանի տասնյակ կրոնական կազմակերպություններից, Հայոց Եկեղեցին, անկախ այս ամենից, իր գործելակերպով շարունակ հավաստում է, որ ինքը Հայաստանի հանրապետության հանդեպ պետական պատասխանատվություն և հոգածություն ունեցող ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ է և թե, անկախ նրանից, ով ի՞նչ հունձ կանի աղետի ցավով լեցուն դաշտերում, այս ցավի ամոքման ակունքները բացելն է Հայոց Եկեղեցու ԱՌԱՋԵԼՈՒԹՅՈՒՆԸ, քանի որ ցավը ցավից օգտվողինը չէ, այլ՝ ցավը կրողինը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿՆՏՈՆԱԿԱՆՔ



ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔ ԳԻՒՄՐԻՒԻ ՇՐՋԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Համահայկական ամբողջական եւ միասնական ուշադրութեան կեդրոնը 1998-ի Դեկտեմբերի այս առաջին օրերուն, վերլիշումն է այն ահաւորագոյն երկրաշարժի աղէտին, որ պատահեցաւ տասը տարիներ առաջ Դեկտեմբերի 7-ին /1988/, եւ որ ցնցեց Հիւսիսային Արեւմտեան կողմն աշխարհին Հայաստանեայց: Քարուքանդ վիճակի մատնուեցան շէն քաղաքներ՝ ինչպէս Գիւմրի, Սպիտակ, Ստեփանաւան եւ բազմաթիւ գիւղեր, եւ նիւթեղէն կառոյցներու անհաշուելի քանդումներուն հետ միասին պատճառ հանդիսացաւ տասնեակ հազարաւոր մարդկային զոհերու, եւ անտուն եւ անգործ թողուց հարիւր հազարաւոր հայորդիք:

Ոչ միայն Հայութիւնը Մայր Հայաստանի եւ արտասահմանի մէջ յուլման եւ զօրակցութեան շարժում մը ծաւալեց, ալլեւ բազմաթիւ ազգեր, պետութիւններ, Եկեղեցիներ, այլ կրօններու պատկանող անձինք, միջազգային բարեսիրական հաստատութիւններ ուղքի կանգնեցան եւ անմիջական օգնութեան իրենց լայն բաժինը բերին աղէտի հետեւանքներու դարմանման կենսական գործին, շտապ օգնութեան հետ միասին նուիրուելով վերականգնումի մնայուն ծրագիրներու, բնակարանային շինութեան եւ աշխատանքային հաստատութիւններու վերակերտման ու կրթական եւ մշակութային գործունէութեան վերակենդանացման ու վարգացման:

Պատմութիւնը կը վկայէ այդ բոլորի մասին, որոնց համար Մենք որպէս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր առաջին սպասաւորը, Կաթողիկոսն Ամենայն Հայոց, սրտի պարտք կը զգանք անգամ մը եւս, տասնամեակի այս առիթով յանուն Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ Մեր ջերմ շնորհակալութիւնները եւ խոր երախտագիտութիւնը յայտնել բոլորին, անխտիր, առանց կրօնական, քաղաքական եւ այլ կարգի տարբերութեանց: Հայ ժողովուրդը կը մնայ միշտ երախտագէտ բոլոր երախտարժան անձերուն եւ պետութիւններուն, կրօններուն, Եկեղեցիներուն եւ մարդասիրական հաստատութիւններուն կամ կապմակերպութիւններուն:

Այժմ, տասը տարիներ ետք, ահա ազգովին կանգնած ենք այդ աղէտին դեռեւս շարունակուող հետեւանքներուն դիմաց: Մեր Կաթողիկոսութեան վերջին երեք տարիներուն ընթացքին ամէն Դեկտեմբերի 7-ին, անձամբ այցելեցինք աղէտի շրջանը եւ եղանք մեր սգաւոր եւ հարուածեալ ժողովուրդի վաւականներուն հետ,

աղօթեցինք - եւ կը շարունակենք աղօթել - մահուան զոհ գնացած մեր հարապատ եղբայրներուն եւ քոյրերուն հոգիներուն երկնային խաղաղութեան համար, միշտ Մեր հայրախնամ սէրն ու հոգածութիւնը յայտնելով ժողովուրդին բանիւ եւ գործով: Այս տարի, 1998, ցաւօք սրտի, առողջական լուրջ պատճառներով հեռու ըլլալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն եւ Մայր Հայրենիք Հայաստանէն՝ պիտի չկարենանք անձամբ ներկայ գտնուիլ տասնամեակի առիթով տեղի ունենալիք համապգային միջոցառումներուն:

Ուստի, սրտի պարտք զգացինք Հայրական այս պատգամը ուղղել մեր ողջ հայ ժողովուրդին. -

Նախ ձեզի, աղէտի շրջանին մէջ ապրողներուդ. ձեր բնակարաններու եւ գործատեղիներու վերակառուցման գործը ձեր առաջնահերթ պարտաւորութիւնն է: Ողբալը, ափսոսալը, ասաղելը, դժգոհիլը, գանգատիլը, ընդվզիլը զգացական բնական երեւոյթներ են, բայց չեն կրնար ըլլալ տիրական եւ առաջնորդող ու որոշադրիչ ապրումներ: Կեանքը պիտի շարունակուի, եւ դուք մահէն աւելի՝ կեանքին պէտք է նայի՛ք, եւ հայոյ յատուկ պարկեշտ նկարագրով ու չարքաշ աշխատանքով լծուիք ձեր աւերեալ տուններու եւ գործարաններու վերականգնման գործին:

Բնականօրէն ձեր սեփական ոյժերը, ձեր տեղական միջոցները բաւարար չեն այդ մեծ գործը զլուխ հանելու համար: Անհրաժեշտ ու կենսական է արտաքին օգնութիւնը: Հայաստանի այլ շրջաններու եւ մանաւանդ արտասահմանի հայութեան լայնատարած վանգուածներուն՝ մեր եկեղեցիներուն, բարեգործական հաստատութիւններուն, քաղաքական կուսակցութիւններուն, անհատ բարերարներուն եւ պարզ ժողովուրդի վաւականներուն աջակցութիւնը մեծ նշանակութիւն ունի աղէտի շրջանի վերաշինութեան եւ վերականգնման գործին մէջ:

Պէտք է ընդունիլ, որ աղէտի առաջին տարիներու յուպական վիճակներու մեղմացումէն ետք՝ որոշ դանդաղեցում մը կրնց աղէտի շրջանի մէջ կատարուելիք անմիջական եւ անյետաձգելի գործերու ընթացքը: Մեր Հայրենի պետութիւնը յստակ, ճշգրիտ եւ լայն տեղեկութիւններ կը հաղորդէ ստիպողական կարիքներու եւ անելիքներու մասին: Յարդ կատարուած վերականգնողական աշխատանքը հեռու է գոհացուցիչ ըլլալէ:

Մեր ցանկութիւնն է, որ Տասնամեակը դառնայ անդրադարձումի եւ պարտաւորութեանց վերանորոգումի սքանչելի առիթ մը ողջ հայութեան համար, առանց խտրութեան: Ուստի, կոչ կ'ուղղենք որ յառաջիկային մեր ժողովուրդի վաւականները իրենց ուշադրութեան պաքը ուղղեն դէպի աղէտի շրջանը: Կարելի չէ թոյլ տալ հայութեան անունին եւ վարկին՝ որ բնական աղէտին դիմաց հայութիւնը հարկ

եղած արի, խոհեմ եւ նուիրեալ աշխատանք ցոյց չի տար՝ ի սէր հայրենաշինութեան գործնական առաջնահերթութիւն ունեցող վերակառուցման աշխատանքներուն:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր Միաբանութեամբ, հոգեւորական դասով, թեմերով եւ միջ-եկեղեցական յարաբերութիւններու ճամբով իր ամբողջական բաժինը պիտի շարունակէ բերել այդ սուրբ եւ ազգապատիւ գործին: Անհրաժեշտ է ծրագրեալ եւ դասաւորեալ աշխատանք: Բարձրօրէն գնահատելով «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի, Համաշխարհային Դրամատան եւ այլ հայկական եւ միջազգային միջ-եկեղեցական կապմակերպութիւններու ներդրումը՝ կը յորդորենք, որ շարունակեն եւ նոր թափ տան այս մարդասիրական եւ ազգակերտական գործին:

Մարմնի վրայ բացուած վէրք մը միայն բացուած տեղին ցաւ ու տառապանք չի պատճառեր, այլ՝ ամբողջ մարմնին: Աղէտի շրջանի վէրքը ողջ հայութեան մարմինը տառապեցնող վէրք է: Սեւ ա՛յս գիտակցութեամբ ու ըստ այնմ գործնապաշտ վերաբերումով պէտք է Տասնամեակը վերածենք պարտաւորութեան վերականգնման բացառիկ առիթի մը, որպէսզի գալիք սերունդները այլեւս դադրին «աղէտի գօտի» բառը գործածելէ եւ համահայրենական ոգիով զգան, մտածեն եւ գործեն որպէս մէկ Հայրենիքի մէկ ժողովուրդ:

Ի խորոց սրտի կ'աղօթենք որ Ամենաբարին Աստուած նոր ոյժ ու կորով ներշնչէ մեր ժողովուրդին, յոյսի, յաւատեւութեան կամքով պրկէ եւ ուղղէ բոլորին գործունէութիւնը վասն շինութեան եւ բարեկարգութեան հայրենեաց մերոց:

Ողջ լերուք ի Տէր, պօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւէտ օրինեալ ի Մէնք:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՈԳԵԿՈԶՎԵՅ 1988-Ի ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Տասը երկար տարիներ են մեզ բաժանում 1988 թվականի դեկտեմբերյան ամեղ օրերից: Մի տարեթիվ, որ ցնցեց ոչ միայն Հայոց աշխարհն ու հայ ժողովրդին, այլև համայն մարդկությանը: Հաշված վայրկյանների ընթացքում պատմության մորթոյա էջում հայ ժողովրդի անվան դիմաց գրանցվեց 25 հազար զոհ, 19 հազար վիրավոր, հազարավոր խեղված ճակատագրեր, ավերված տներ, դպրոցներ ու հիվանդանոցներ: Երկրաշարժն ընդգրկեց հանրապետության տարածքի 40 տոկոսը՝ շուրջ մեկ միլիոն ազգաբնակչությանը: Մասամբ կամ ամբողջությամբ ավերվեցին 21 քաղաք ու շրջկենտրոն, 324 գյուղ: Ավելի քան 530 հազար մարդ մնաց անօթևան: Այդ օրերին մեր վիշտը մեզ հետ կիսեց ողջ աշխարհը:

Աշխարհացունց երկրաշարժի 10-րդ տարեդիցի օրը ողջ հայությունը, ի Մայր Հայրենիք, ի Լեռնային Ղարաբաղ և ի Սփյուռս աշխարհի, իր հարգանքի ու խոնարհության տուրքը մատուցեց անմեղ զոհերի հիշատակին: Դեկտեմբերի 7-ին, վաղ առավոտյան, այս էլ տասներորդ անգամ աղետի գոտի մեկնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատվիրակությունը՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գաբրեղին արքեպս. Ներսիսյանի նախագահությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ողջ դեկավարությունը՝ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ:

Հայ ժողովրդի հետ մրա զավակների հիշատակի ոգեկոչման արարողությամբ մերկա գտնվելու համար տարածաշրջան էին ժամանել քույր եկեղեցիների մերկայացուցիչներ, օտարերկրյա քարձրաստիճան այրեր, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագետներ:

Ասեմք, որ դեկտեմբերի 6-ին Ֆիլհարմոնիայի «Արամ Նաչատրյան» համերգասրահում տեղի ունեցավ հիշատակի ու ոգեկոչման հանդիսություն, հընթացս որի հոգեշնորհ Տ. Արտակ արքեպս Տիգրանյանն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրեղին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական ուղերձը՝ «...Գյույրիի շրջանի երկրաշարժի տասնամեակի առիթով» (տե՛ս էջ 6-8):

Դեկտեմբերի 7-ի առավոտյան, ճիշտ մույն ժամին, երբ տեղի ունեցավ սոսկալի աղետը, համաձայն երջանկահիշատակ վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինության, քարձր ու հնչեղ դողամեջեցին Հայաստանյայց եկեղեցու քույր աղոթատների զանգերը ոչ միայն Մայր Հայրենիքում, այլև աշխարհի քույր ծագերում:

Իսկ այդ մույն ժամանակ պաշտոնական պատվիրակություններն ու Հայաստան ժամանած հյուրերը աղետի գոտու տարբեր քաղաքներում մասնակից եղան ոգեկոչման բազմաբնույթ հանդիսությունների: Նրանք նախ ուղևորվեցին Սպիտակ, ուր մոր կառուցվող Սուրբ Հարություն եկեղեցում մերկա գտնվեցին անմեղ զոհերի հոգիների հանգստության ու խաղաղության համար կատարված հոգեհամզուտյան արարողությամբ: Այնուհետև հենց

եկեղեցու քակում տեղի ունեցավ սգո միտինգ, որի ընթացքում ներկաներին իր ուղերձը հղեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

«Լրացավ տասնամյան Սպիտակի աշխարհացունց երկրաշարժի: Այսօր վերհիշում է ահաարսուտ այդ օրերի: Այսօր այստեղ ենք՝ ոգեկոչելու մահա-սփյուռ տարերքի բյուր ամենդ զոհերի հիշատակը, բայց նաև՝ հանրագումարի բերելու վերջին տասնամյակը հայության կյանքի, գնահատելու հուզումներով, ամհաղթահարելի թվացող դժվարություններով, արագափոփոխ իրադարձու-թյուններով ու վճռորոշ շրջադարձերով առկա փոքրիկ այդ ժամանակա-հատվածը, որի բնորոշ առանձնահատկությունը հերոսականությունն է և որի արդյունքը միանշանակ՝ հասունացումը:

Կան տասնամյակներ, որոնք ժողովուրդներին փորձառություն են բերում առավել, քան հարյուրամյակները: Դրանք որակական փոփոխությունների տասնամյակներն են, որ ուղեկցում են հետագա երկարատև ժամանակի ըն-թացքը և ուրվագծում նրա դիմագիծը: Դարակազմիկ այդպիսի նշանակու-թյամբ հայության կյանքում առանձնացավ անցնող վերջին տասնամյակը:

88-ի ամեն արշալույս քաջվում էր արցախյան հիմնախնդրի մտահոգու-թյամբ, Արցախի վերամիավորման տեսլականով, մեր մեկտեղված կամքի գիտակցությամբ, արդարության հաղթանակի լավատեսությամբ: Տաս-նամյակներով խեղդված ազգային ոգու պոռթկումը, համախմբման աննա-խադեպ վերելքը և համընդհանուր պայքարի ալիքը, երբ մենք միմյանց որոնելու կարիքը չէինք զգում, դարձավ այն ամխորտակ հենարանը, որի վրա բարձրացավ և ահագնացավ տարերային մահասփյուռ աղետին դիմակայելու կամքը, համազգային կենսատուժը: «Ո՛ւր է, մահ, յաղթութիւն քո. ո՛ւր է, դժոխք, խայթոց քո» (Ա. ԿՈՐՆԹԱՅԻՍ ԺԵ 55):

Հարության հաղթական խորհրդին առհավետ վստահած մեր ժողովուրդը վերապրեց: Վերապրեց Արցախի ազատագրական պայքարի, բարեշեն, ազատ ու անկախ Հայրենիք կերտելու դժվարին ճանապարհին՝ համազգային վիշտն ու մորմոքը վերափոխելով հավատավոր հաղթական երթի:

Վերապրեց՝ իր կողքին ունենալով աշխարհի մեծ ու փոքր բազում երկրների ու ժողովուրդների փութաջան ու անկեղծ աջակցությունը: Բարի Սամարացու կամեցողությամբ բազմաթիվ ձեռքեր մեզ մեկնվեցին՝ օգնության և միախառնության փափագով: Մեր տառապյալ և հերոսական հողում այդ ազնիվ ձեռքերը միավորվեցին՝ իրենց մեկտեղված ափերում կրելով մարդ-կության բարի կամքի վկայությունը: Անսակարկ այդ օգնության համար աշխարհասփյուռ հայ հոգիներում ամբարված երախտագիտությունն այսօր, երկրաշարժի տասնամյա տարեդիցին, վերստին աղոթքի մրմունջով բարձրանում է առ Աստված:

Հավատում ենք, որ հետո չէ այն ցանկալի ժամանակը, երբ մեր ժողո-վուրդն իր ինքնիշխան ու ազատ Հայրենիքում նոր շնչով բարձրացնելու է խորտակված ամեն տուն, խոնարհված ամեն եկեղեցի: Նոր ծնունդներով

մխիթարված ու երջանիկ՝ բազմապատկվելու և առավել ամուր եմ դառնալու հայ ընտանիքները: Հավատում ենք, որ, վերաբժեկորած հայրենի իր հավատը, վերագտած ազգային ոգին ու նկարագիրը, հայ ժողովուրդը կերտելու է իր նոր Հայրենիքը՝ որպես առհասկա ավանդ կարևորելով ու պահպանելով ութսունության դժնդակ, բայց մահ հերոսական օրերին գտած իր նոր միաբանությունը:

Մեր աղոթքն է առ Աստված, որ մոլորակի հավերժ պտույտը դեպի արևելք բոլոր ժողովուրդներին բերի խաղաղ, երջանիկ ու ապահով կեցություն: Մեր աղոթքն է, որ մարդիկ ու ժողովուրդները մեկտեղվեն միայն ուրախ ու բերկրայի առիթներով, և ամենուր թագավորի Տիրոջ օրհնությունը: «Ջի բարի կամ գի վայելույ, գի բնակեն եղբարք ի միասին» (ՍԱՂՄ. ԾԺԲ 1):

Հարգանք և խոնարհություն, խումկ և աղոթք և հավերժ օրհնություն ութսունության երկրաշարժի քյուր զոհերի անմեռ հիշատակին»:

Հանրապետության երկրորդ քաղաքում՝ Գյումրիում ևս տեղի ունեցան հոգեհանգստյան արարողություններ: Սուրբ Աստվածածին կամ, ինչպես ժողովուրդն է անվանում՝ Յոթ Վերք եկեղեցում կատարված հոգեհանգստյան կարգին ևս ներկա գտնվեցին պաշտոնական պատվիրակությունները: Այստեղ Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Տիխոն եպիսկոպոսն ընթերցեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի հղած ցավակցական գիրը:

Հայ ժողովրդի զավակներին, համուն Վատիկանի ու Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու, խոսք ասաց մահ Հոռմի Պապի ներկայացուցիչը:

Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակը մույմպես մարդաշատ էր: Ներկաները ցավ ի սիրտ մասնակցեցին եկեղեցու բակում կատարված հոգեհանգստյան կարգին, որտեղ իր սրտի խոսքն ասաց Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Զուլջյանը:

Հիշատակի ոգեկոչման ու հոգեհանգստյան բազմամարդ արարողություններ տեղի ունեցան Ստեփանավանում, Ախուրյանում, ինչպես մահ աղետի գոտու այլ բնակավայրերում:

Պատմության հուշամատյանում գրանցվեց մեկ տարելից ևս: Վշտի ու վերքի ցավից դեռ տնքում է հաջ հավատավորի սիրտը, սակայն մտքի թռիչքը չի բանտվում: Արարչագործ հայը դարձյալ իր վեհաթոռիչ սլացքի համար գտնում է ուղիներ, որոնցով առաջնորդում է իր զավակներին դեպի Երկնառաք Վարդապետը, դեպի իսկական լույսը, դեպի հավիտենություն...

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔԸ ԴԵԿՏԵՄԲԵՐՑԱՆ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 10-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

Դեկտեմբերի 3-ին Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրան Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերշաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանձնեց Ֆրանսիայի մախազաթի Ժակ Շիրակի նամակը՝ ուղղված Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, 1988 թ. երկրաշարժի 10-րդ տարելիցի առիթով:

«Կյանքն այսօր հաղթանակել է: Հայաստանը հաղթահարում է անկախությանը և զարգացմանը առնչվող խոչընդոտներն ու պարզորոշ կերպով ամրապնդում իր ինքնությունը», - ասվում է Ֆրանսիայի մախազաթի նամակում:

Պարոն Լեգրան շուտափույթ ապաքինում մաղթելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, միաժամանակ շնորհավորեց Սրբազան Հորը՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ մշանակվելու կապակցությամբ:

Վեհափառ Հայրապետի և իր անունից Գարեգին արքեպս. Ներսիսյանը շնորհակալություն հայտնեց Հայաստանի Հանրապետությանն և կատմամբ Ֆրանսիայի մախազաթի և ժողովրդի ցուցաբերած ուշադրությանն համար և հավաստիացրեց, որ ամեն ինչ կանի՝ արդարացնելու Վեհափառ Հայրապետի վստահությունը, ջանք չի խնայի՝ իր վրա դրված պարտականությունները կատարելու ընթացքում: Փոխանորդ Սրբազանը միաժամանակ ուրախությամբ տեղեկացրեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ռիվանդությունը կանխված է, իսկ ապաքինումն ընթանում է քարեհաջող:

Հանդիպման ընթացքում շոշափվեցին մասն հայ-ֆրանսիական հարաբերությունների հետագա զարգացմանն առնչվող հարցեր՝ մասնավորապես կրթական ասպարեզում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ԺԱԿ ՇԻՐԱԿԻՆ

Նորին Սուրբ Օծություն S.S. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը դեկտեմբերի 7-ին Նյու Յորքից շնորհակալական հետևյալ մամակն է հղել Ֆրանսիայի մախագահ Ժակ Շիրակին՝ 1988 թ. երկրաշարժի 10-րդ տարելիցի կապակցությամբ Վեհափառ Հայրապետին ուղղված Ֆրանսիայի մախագահի մամակի առիթով:

Նորին Գերազանցություն

Պրն. Ժակ Շիրակին՝

Ֆրանսիայի Հանրապետության մախագահին,

Փարիզ, Ֆրանսիա

Պրն. Նախագահ,

Թանկագին Բարեկամ,

Ես խորապես զգացված եմ մոյեմբերի 21-ի Ձեր մամակով և համակրանքի ու համերաշխության ազնիվ զգացմունքներով, որ Դուք արտահայտում եք մամակում՝ երկրաշարժի 10-րդ տարվա առիթով, որը 1988 թ. ողբերգական հետևանքներով ցմեց Հայաստանը: Դուք իրավացի եք՝ ասելով՝ «կյանքը հաղթանակեց»: Հայաստանը դուրս է գալիս վշտի խավարից և ազգի տեսիլքով քայլում է դեպի իր ապագան՝ ոտքի կանգնելով ու զարգանալով:

Հայաստանյայց Եկեղեցու և մրա՝ Հայաստանի ու Սփյուռքի զավակների անումից ես կցանկանայի արտահայտել մեր ողջ երախտագիտությունը այն օրինակելի աջակցության համար, որ Ֆրանսիան ցուցաբերեց Հայաստանին՝ Ձեր մախագահությամբ: Սակայն Ֆրանսիան միշտ էլ հատուկ հոգատարություն է ցուցաբերել Հայաստանի նկատմամբ: Մենք ամբողջ սրտով ցանկանում ենք, որ Ֆրանսիան ծաղկման անհամար տարիներ վայելի և կարողանա մնալ որպես առաջընթացի աղբյուր մյուս ժողովուրդների համար:

Սիրելի պրն. Նախագահ, ընդունեցեք իմ խորին հարգանքի հավաստիքը և իմ օրհնությունը Ձեզ, Ձեր ընտանիքին և Ֆրանսիայի մեծ ընտանիքին:

Սիրով և աղոթքով՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

7 դեկտեմբեր, 1988 թ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՖԵԴԵՐԱԿՈ ՄԱՅՈՐԻՆ ԵՎ ԿՈՆՐԱԴ ՌԱՅՁԵՐԻՆ՝ ՀԻՆ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՈԶՆԶԱՅՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը դեկտեմբերի 7-ին Նյու Յորքից նամակ է հղել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Ֆեդերիկո Մայորին, որտեղ Վեհափառ Հայրապետն իր ընդվզումն է արտահայտում Նախիջևանում ադրբեջանական իշխանությունների կողմից Հին Զուղայի (այժմ՝ Զուլֆա) հայկական գերեզմանատան վերացման կապակցությամբ:

Վեհափառ Հայրապետը խնդրում է պրն. Մայորին ամել հնարավոր կարելի՛ն՝ պատմական և քրիստոնեական մեծ արժեք ներկայացնող հայկական հուշարձանը ոչնչացումից փրկելու համար, և հայտնում իր շնորհակալությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հայկական երկու այլ հուշարձաններ՝ Կիպրոսում Սբ. Մակար հայկական պատմական վանք-եկեղեցին թուրքական և Բաքվում հայկական եկեղեցական համալիրը ադրբեջանական իշխանությունների ոտնձգություններից պաշտպանելու համար:

«Թե՛ Հայաստանի և թե՛ սփյուռքահայության անունից դիմում եմ Ձեզ՝ խնդրելով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ վերջ տալու այս վանդալիզմին, որը մարդկային արժեքների աղաղակող ոտնահարում է և սրբապղծություն սրբազան հուշարձանների, որ եղել են ուխտի և աղոթքի վայրեր:

Մենք իրոք խորապես վրդովված ենք, որ նման ոտնահարումները կատարվում են քացահայտորեն, իսկ աշխարհը մնում է անտարբեր»,- ասվում է Վեհափառ Հայրապետի նամակում:

Նույն խնդրի առնչությամբ Վեհափառ Հայրապետը նամակ է հղել նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար Կոնրադ Ռայզերին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Դեկտեմբերի 9-ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընդունեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանին, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Տնօրինությանը նշանակվել է Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ:

Միացյալ Նահանգներից մոր վերադարձած Գարեգին Սրբազանը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին հանձնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական ուղերձը:

Սրբազան Հայրը միաժամանակ հանրապետության նախագահին տեղեկացրեց Վեհափառ Հայրապետի առողջական վիճակի մասին, մշեց, որ ապաքինման շրջանն ընթանում է բավականին հաջող և սպասվածից արագ:

Զրուցակիցները քննարկեցին նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին մվիրված միջոցառումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը:

Ինչպես հավաստիացրեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդը, Հայաստանյայց Եկեղեցին պատրաստ է ըստ ամենայնի օժանդակել մեր վերանկախացյալ պետականության կայացման նվիրական գործընթացին և նրա զորացմանը:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՍԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ



ԻՐԱՆԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Ե ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՌՆԱԼ ԻՍԼԱՄ-ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆԸ

Դեկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանն ընդունեց Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի պատասխանատու Մարիի Աբադիին:

Խոսելով Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության թիվնական ուղղությունների մասին, պրն. Աբադինը կարևորեց կրոնների միջև երկխոսության ճատատուումը՝ ընդդեմ աշխարհում մկատվող բարոյական սկզբունքների անկման: Մշակույթի պատասխանատուն տեղեկացրեց, որ այդ նպատակով Իրանում ստեղծված է իսլամ-քրիստոնեություն երկխոսությանն ուղղված մշակութային կազմակերպություն, որի պատվիրակությունն առաջիկայում կժամանի Հայաստան: Պրն. Աբադինը համոզմունք հայտնեց, որ Հայոց Եկեղեցին կարևոր դեր կարող է ստանձնել երկխոսության ծավալման գործում, և հույս հայտնեց, որ Երևանում վերակառուցված Կապույտ մզկիթը կարող է դառնալ մման երկխոսության համգրվաններից մեկը:

Գարեգին Սրբազանը ողջունեց Իրանի այս նախաձեռնությունը՝ միաժամանակ կիսելով երիտասարդության շրջանում հոգևոր դաստիարակության շուրջ եղած մտահոգությունները: Սրբազան Հայրը վստահեցրեց, որ Իրանի կողմից արված առաջարկը կներկայացվի Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսի ուշադրությանը՝ համոզմամբ, որ այն կարժանանա վեհափառ Հայրապետի քաջալերանքին:

Սրբազան Հայրը միաժամանակ իր երախտագիտությունն արտահայտեց Իրանին, որն իր ընվգումի ձայնը քարձրացրեց աղրբեջանական իշխանությունների կողմից վերջերս Զուլֆայի հայկական գերեզմանատան ոչնչացման առիթով:

Անդրադառնալով ԱՄՆ-ի և Անգլիայի կողմից մույն օրը Իրաքի դեմ սկսված ռազմական գործողություններին, Սրբազան Հայրը ցավ հայտնեց խաղաղ բնակչության շրջանում եղած զոհերի համար՝ հավաստիացնելով, որ բարի կամքը կլինի հաղթողը:

Հանդիպման ավարտին պրն. Աբադինը Գարեգին Սրբազանին հանձնեց ՄԱԿ-ում ԻԻՀ նախագահ Մոհամադ Խաթամիի արտասանված ելույթը, որտեղ պրն. նախագահը 2001 թ. հայտարարում է կրոնական և մշակութային երկխոսությունների տարի:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐՇ. Տ. ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋՅԱՆԻՆ
ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ՝ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄՆԻ
ԳԵՐՇ. Տ. ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋՅԱՆԻՆ,
ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԵԱՅ ԹԵՄԻ
ՈՐ Ի ԳԱԻԱՌ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ**

Սրտի խոր գոհումակութեամբ տեղեկացանք, որ այս տարի մշտում է Ձեր քահանայական ձեռնադրութեան 25-ամեակը և եպիսկոպոսական ձեռնադրութեան 15-ամեակը:

Նախ գմահատում ենք Թեմական Խորհուրդի գաղափարը՝ արժանաւորապէս տօնելու այդ զոյգ համգրումները Ձեր հոգևորական կեանքի և գործունէութեան:

Քաջածանօթ ենք այն ամբողջական և անվերապահ սիրոյն և հաւատարիմ ու մախանձախնդիր մոտիւրաբեւման, որ ցոյց տուիք այնքան պերճախօս կերպով, քայց գովելի համեստութեամբ Ձեր հոգևորական սպասատրութեան ամբողջ շրջանին: Դուք տէր կանգնեցիք Ազերպէյջանի, յատկապէս Բաքուի մեր սիրեցեալ ժողովուրդին, մամաւանդ այն տաղապալից օրերին, երբ նրանք զոհ դարձան ազերի իշխանութեանց վայրագ վերաբերումին:

Դուք Ձեր կարողութեան գերագոյն չափով Ձեր մպաստը բերիք Հոգևոր Ընտարանի Տեսչական և դատտիարակչական այնքան մոտիւրական գործին:

Իսկ այս վերջին տարիներին Դուք ամեն ջանք ի գործ էք դնում՝ Գեղարքունեաց պատմական Թեմում կրօնական ու ազգային նոր շունչ տարածելու տեսակէտից կազմակերպական, վարչական և կրօնադատտիարակչական ու շինարարական մարզերում:

Ի գմահատութիւն Ձեր 15-ամեայ եպիսկոպոսական սպասատրութեան՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզ շնորհում ենք

ԵՐԲՈՒԹԵԼՆ պատիւ և տիտղոս:

Աղօթում ենք առ Ամենաբարին Աստուած, որ Ձեզի շնորհի բազում տարիներ լիառատ ու քեղմնալից սպասառորոշեամբ՝ Գեղարքունեաց թեմին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւետ օրինեալ ի Մեծք. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 9 Նոյեմբերի
Թամի Տեառն 1998 և ի Թուին Հայոց ՌՆՆԷ
ի Մայրափանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ Քամարաւ Է/204

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՏՈՐՈՆՏՈՅԱԲՆԱԿ ԱՆԴՐԵ ՆԱԶԱՐԵԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

ՏԻՍՐ ԱՆՏՐԷ ՆԱԶԱՐԵԱՆԻՆ

ՈՐ Ի ԹՈՐՈՆԹՕ. Ի ԳԱՆԱՏԱ

Խորապէս հրճուեցանք երբ իմացանք Գանատայի Հայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանէն Ձեր ջերմ սիրոյն և ամբողջական մոլորաբերումին մասին՝ հանդէպ մեր Հայոց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ և հայեցի դաստիարակութեան ու Հայ մշակոյթին:

Ձեր այդ սիրոյն վերջին գործնական և պերճախօս վկայութիւնը եղաւ Ձեր իշխանական մոլորատուտիւնը, որով «Ամտրէ և Սեզա Նազարեան» անուամբ մնայուն հիմնադրամ մը հաստատեցիք Գանատայի Հայոց Թեմի հովանաւորութեան և տնօրինութեան ներքև, որուն տարեկան եկամուտը պիտի յատկացուի հայ համալսարանական ուսանողներու և Առաջնորդարանի կարիքներուն:

Բարձրօրէն գնահատելի կը գտնենք Ձեր ազգասէր և եկեղեցամուէր ոգին, որով Ղուք շարունակական բարիքի աղբիւր մը բացիք Ազգ. Առաջնորդարանի մէջ՝ յօգուտ և ի վայելումն մեր ժողովուրդի գաւակներուն:

Ի գնահատութիւն Ձեր այս աստուածաբաժնոյ և ազգաշէն բարերարութեան՝ Ձեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարձրագոյն կարգի շքանշանը՝

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ:

Կաղօթենք առ Ամենակալն Աստուած, որ Ձեզի, Ձեր մոլորեալ Տիկնոջ՝ Սեզային և ընտանիքի բոլոր անդամներուն պարգևէ երկար օրեր քաջառողջութեան, գործոց յաջողութեան և երջանկութեան բարիքներով ապցուն:

Ողջ լըրուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ա. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուալ Կոմդակս ի 6 Դեկտեմբերի

Թամի Տեառն 1998 և ի Թուին Հայոց Ռէնիէ

Ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

Ընդ համարաւ Է/205

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԵԼԵՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ՝
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
65-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ՍԻՐԵՅԵԱԼ ՍՊԱՍԱԽՈՐԻՆ ՀԱՅ ԳԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՆ
ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԻԿԻՆ ԵԼԵՆԱ ԱԻԵՏԻՍԵԱՆԻՆ
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍ, Ի ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ**

Արտի խոր գոհումակութեամբ տեղեկացանք Ամերիկահայոց Արևմտեան Թեմի բարեջան Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Վաչէ Արքեպս. Յովսէփեանէն, որ Իրանահայ Միութիւնը Լոս Անճելեսի մէջ արժանաւայել շուքով պիտի մշէ Ձեր՝ արուեստագէտի գործունէութեան 65-ամեակը:

Նախ բարձրօրէն կը գնահատենք Իրանահայ Միութիւնը իր այս գեղեցիկ և գովելի մտածումին և մախաձեռնութեան համար: Արուեստագէտը գնահատել՝ կը մշանակէ մշակոյթի զարգացման թափ տալ: Ապրի՛ք:

Մենք անձնապէս քաջածանօթ ենք Ձեր իրագործած մեծարժէք վաստակին Իրանի մէջ: Արուեստի սիրահար մը եղաք, մանաւանդ որպէս դերասանութի և պարուստոյ և հոգեկան վայելքի անհաշուելի առիթներ ստեղծեցիք Իրանահայութեան համար թէ՛ Պարսկաստանի և թէ՛ Լոս Անճելեսի մէջ:

Ձեր վաստակին կարևոր մէկ բաժինը եղաւ արուեստի ուսուցումը մոր սերունդին: Եղաք ոչ թէ պարզ ուսուցիչ ու սովորական իմաստով տնօրէնութի, այլ ամբողջ արտով մոլորութեան Ձեր աշակերտներու տաղանդներու մշակման մարք և ազմիւ գործին:

Ի գնահատութիւն Ձեր քաղաքածէք մշակութային ծառայութեանց, Ձեզի կը շնորհենք յաճում մեր ազգի քրիստոնէական ծննդավայրին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ մեր այս

ՀԷՅՐԸՊԵՏԸԿԸՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ:

Կ'աղօթենք առ Բարձրեայն Աստուած, որ Ձեզի պարգևէ երկար տարիներ՝ որպէսզի վայելէք բարիքները Ձեր թանկագին և երախտարժան ծառայութեանց:

Ողջ լըրուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւիտ օրինեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*Տուալ Օրինութեան Գիրս
ի 12 Դեկտեմբերի 1998
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համախա Է/156*

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔԻ ՆԱՄԱԿՆԵՐ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ապաքինման շրջանում Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաքինը շուտափույթ և կատարյալ ապաքինման մաղթանքներով մամակներ է ստացել Հայաստանի Հանրապետության մախազահից, աշխարհի տարբեր հոգևոր պետերից:

Ուրբաթ, հոկտեմբերի 16-ի երեկոյան, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի հետ միասին այցելելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ՄԱԿ-ում ՀՀ լիազոր և մշտական ներկայացուցիչ Մովսես Աբելյանը Վեհափառ Հայրապետին է հանձնել Հայաստանի Հանրապետության մախազահ Ռոբերտ Քոչարյանի մամակը: Հանրապետության մախազահն իր լավագույն բարեմաղթանքներն է հայտնում Վեհափառ Հայրապետին և սպասում Նորին Սրբության վերադարձին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին:

«Այս պահին, երբ առավել ցայտուն է դարձել Եկեղեցու դերը հայոց պետականության ամրապնդման գործում, հատկապես կարևոր է, որպեսզի Դուք, Ձեր իմաստուն ղեկավարությամբ և համաժողովրդական հեղինակությամբ, մոր հոգևոր լիցք հաղորդեք հայ ժողովրդին», - ասվում է Ռ. Քոչարյանի մամակում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխան մամակով շնորհակալությունն է հայտնել մախազահին մամակի համար՝ մշելով. «Ինձի հոգեկան ուժի աղբյուր է այս օրերին՝ երբ Աստուծո կամքով վերագտնում եմ իմ առողջությունը»:

Վեհափառ Հայրապետը ողջույններ է հղել Հայաստանի Հանրապետության մախազահին, Ազգային Ժողովին ու կառավարությանը՝ ավելացնելով. «Թող ապագայի օրերն ըլլան ավելի պայծառ, և հարաճում զարգացման ճամփով ընթանա մեր սիրեցյալ ժողովուրդը»:

Նամակն ավարտվում է հայրապետական ջերմ ողջույններով՝ ուղղված Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հավատավոր հոտին:

ԱԼԵՔՍԻ ԵՐԿՐՈՐԳԻ ՆԱՄԱԿԸ՝ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր բարեմաղթանքն է հայտնել մահ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Երկրորդը:

«Սիրեցյալ եղբայր ի հրիստոս,

Իմացա կատարված վիրահատության մասին և ուրախ եմ, որ բարեհաջող է ընթացել:

Թող որ Աստված շնորհի Ձեզ ուժ ու կարողություն՝ հաղթահարելու հիվանդության տրտմությունը:

Ես միշտ ջերմությամբ եմ հիշում մեր հանդիպումները և հուսով եմ, որ ապագայում մոր հանդիպումներ կլինեն: Ձերդ Սրբության զուտ մարդկային ջերմությունը և իմաստությունը, որպես Եկեղեցու պետ, նեցուկ են շատերին Հապաստանում, հայկական Սփյուռքում, Ռուսաստանում, Եվրասիայում և ամբողջ աշխարհում:

Թող որ Աստծո ողորմածությունը պահպանի Ձեզ:

Եղբայրական սիրով ողջագություն եմ Ձերդ Սրբությանը», - ասվում է Համայն Ռուսիո Պատրիարքի մամակում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ՎԵՍՉԵՍՏՐԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Վերջին երկու ամիսների ընթացքում, առաջին անգամը լինելով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը դուրս եկավ իր առանձնատնից՝ մերկա գտնվելու եկեղեցու օծման արարողությամբ և բաժանելու իր սիրեցյալ ժողովրդի ուրախությունը:

Դեկտեմբերի 6-ին Նորին Սրբությունը մեկնեց Վեսչեստր /Նյու Յորքի արվարձան/, ուր մերկա գտնվեց Ս. Գրիգոր Լուսավորիչ ճորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությամբ:

Նորին Սրբությամբ ողջունեցին ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը և Վեսչեստրի քաղաքապետը: Խաժակ Սրբազանը քարոզի սկզբում փառք և գոհություն առաքեց առ Բարձրյալն Աստված, որ Ամենայն Հայոց Վեհափառն իր առողջությունն ամբողջությամբ վերագտնելու ճանապարհին է և մերկա է եկեղեցու օծման արարողությամբ:

Վերջում, Նորին Սուրբ Օծությունը մերկա հավատավոր հայորդիներից հղեց իր հայրական օրհնությունն ու հայրապետական պատգամը: Ներկաները Հայոց Հայրապետին դիմավորեցին հոտմկայս և բուռն ծափահարություններով:

ՄԱՄՆՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԳԵՐԱԴՈՒՅՆ ՀՈԴԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին և թեմակալ առաջնորդներին մերկայացրեց Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի Հայրապետական Տնօրինությունը՝ Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդական Փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ նշանակելու մասին:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներն ու թեմակալ առաջնորդները հաջողություն մաղթեցին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդին՝ Վեհափառ Հայրապետի քաջակալության շրջանում Մայր Աթոռի աշխատանքները հաջողությամբ իրականացնելու դժվարին գործում::

Սրբազան Հայրը վստահեցրեց, որ ջանք ու եռանդ չի խնայի Վեհափառ Հայրապետի վստահությունն արդարացնելու համար՝ միաժամանակ ակնկալելով Գերագույն Հոգևոր Խորհրդի, հոգևոր դասի և Մայր Աթոռի պաշտոնեության աջակցությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին մաս 1988 թ. երկրաշարժի 10-րդ տարեդիցին Հայաստանյայց Եկեղեցու մասնակցությամբ վերաբերող կազմակերպչական հարցեր:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը բացվեց դեկտեմբերի 24-ի երեկոյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանի ընդարձակ սրահներից մեկում՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի նախագահությամբ:

Նիստին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Տ. Գևորգ արքեպս. Սեբադադյանը, Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը, Տ. Անանիա արքեպս. Արաքաջյանը, Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, տիար Գրիգոր Խանջյանը, տիար Ռաֆայել Պապայանը, տիար Վլադիմիր Բարխուդարյանը:

Նիստը բացվեց աղոթքով, որից հետո փոխանորդ Սրբազան Հայրը ողջունեց Խորհրդի ներկա անդամներին՝ շնորհակալություն հայտնելով ժողովին իրենց մասնակցությունը բերելու համար: Այնուհետև Գարեգին Սրբազանը տեղեկություններ հաղորդեց Վեհափառ Հայրապետի առողջական վիճակի մասին՝ ավելացնելով, որ Նորին Սրբությունն ամենայն հավանականությամբ Մայր Աթոռ կվերադառնա փետրվարի կեսերին:

Ծառունակելով խոսքը՝ կաթողիկոսական ընդհանուր փոխանորդը տեղեկություններ տվեց իր նշանակման, հանրապետության նախագահի հետ հանդիպման, իր կողմից հրավիրված մամլո ասուլիսի, ինչպես նաև երկրաշարժի 10-ամյա տարելիցի պետական և եկեղեցական միջոցառումներին Մայր Աթոռի մասնակցության մասին: Նշվեց, որ միջոցառումներին մասնակցեցին Հոռմեա-Կաթուիկ և Ռուս Եկեղեցիների ներկայացուցիչները:

Խորհուրդն անդրադարձավ Եկեղեցու ներքին կյանքին, առանձին հոգևորականների առջև ծառացած խնդիրներին, դրանց կարգավորման ուղիներին: Որոշվեց այդ ուղղությամբ արված առաջարկները ներկայացնել Վեհափառ Հայրապետին՝ առ ի քննություն և տնօրինություն:

Գարեգին Սրբազանը տեղեկացրեց նաև առաջիկայում Հոռմում, Ժնևում և Մոսկվայում կայանալիք միջեկեղեցական հանդիպումներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մասնակցության մասին:

Ապա իրենց հակիրճ զեկույցները ներկայացրեցին Մայր Աթոռի վարչա-տնտեսական բաժնի կառավարիչ տիար Ներսես Կարամանուկյանը և գլխավոր հաշվապահ տիար Հաբություն Մելլյանը:

Որոշվեց առանձին քննարկման նյութ դարձնել հարկային քաղաքա-

կանության հարցը և այդ քաղաքականության մեջ Հայ եկեղեցու իրավունքների ու արտոնությունների խնդիրը՝ առաջարկները ներկայացնելով Ազգային ժողով և կառավարություն:

Այնուհետև փոխանորդ Սրբազան Հայրը խոսեց Ամանորյա և Սուրբ Ծննդյան հանդիսություններին Մայր Աթոռի նախապատրաստական աշխատանքների, մասնավորապես ԶԴԶԿ-ի կողմից Արամ Նաչատրյանի անվան ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում կազմակերպվելիք հանդիսությունների և Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվելիք Սուրբ Ծննդյան հանդիսության մասին:

Ամդրադարձ եղավ նաև Մայր Աթոռ կատարված պաշտոնական այցելություններին, քարոզչական աշխատանքների աշխուժացման խնդրին (մասնավորապես՝ Արմավիրի թեմում): Նշվեց, որ աշխատանքներ են տարվում ժողովրդի կյանքում տնօրենքի իմաստալից ավանդույթը վերականգնելու ուղղությամբ:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության կազմակերպմանը ևս ամդրադարձավ խորհուրդը՝ առանձնակի շեշտելով այն բազմաբնույթ ու բազմաբովանդակ դարձնելու անհրաժեշտությունը:

Լուսաբանվեց նաև Երևանի Մայր եկեղեցու շինարարական աշխատանքների ընթացքը, իսկ Սրբազան Հոր հորդորով առաջարկվեց այդ խնդրի հետ առնչվող մտահոգություններով դիմել տաճարի շինարարության վերահսկիչ պարոն Բալասանյանին, քանի որ Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ շինարարության վերահսկողությունը կատարում է վերջինս:

Այսքանով Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական միստն ավարտեց իր աշխատանքները:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ԿՐՈՆԵԿԱՆՆ

**Տ. ՀԱՅԿԱՋՈՒՆ Ծ. ՎՐԴ. ՆԱԶԱՐՅԱՆԻ ԶԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՊԵԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ՝ 1988 Թ. ԵՐԿՐԱՇԱՐԺԻ
10-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ**

*«Կա ժամանակ ճնանելոյ, եւ ժամանակ մեռանելոյ...
ժամանակ քակելոյ եւ ժամանակ շինելոյ,
ժամանակ լալոյ եւ ժամանակ ծիծաղելոյ...»:*

(ԺՈՂՈՎՈՐ Գ 1-3)

Այս զանգերի ծայնը, որ լսում եք, սիրելի հավատացյալներ, մեզ հիշեցնում է տասը տարիներ առաջ, ճիշտ նույն այս ժամին, Հայաստանի հյուսիսային մասում տեղի ունեցած ահավոր երկրաշարժը, որ մի քանի թուպենների ընթացքում հազարավոր տներ քանդեց, հազարավոր կյանքեր խլեց: Տասը երկա՛ր ու «կարճ» տարիներ, ինչե՛ր ասեք չկատարվեցին աշխարհում այդ ընթացքում՝ կառավարությունների փոխվեցին, երկրաշարժեր, մրրիկներ եղան, միլիոնավոր մարդիկ մահացան: Սակայն ինչո՞ւ ենք հիշում այս օրը, այն էլ՝ տասը տարիներ հետո: Այս հարյուրամյակը մեր ժողովրդի պատմության մեջ երևի ամենախավար շրջաններից է՝ լեցուն հույզերով ու ահավոր ողբերգություններով: Մեր պատմության մեջ, մոնղոլ-թաթարական շրջանից այն կողմ, որևէ ժամանակահատված հնարավոր չէ հիշել, որ լինի այսքան հակասություններով լի, որ մեր ժողովուրդը այսքան արյունաքամ եղած լինի: 1895 թ. Սասունի ջարդերը, Կիլիկիո, Ադանայի ջարդերը և ապա Մեծ եղեռնը, երբ կորցրինք մեր երկրի ու ժողովրդի կեսից ավելին, այնուհետև՝ սովետների «մաքրագործման» շրջանը և տակավին՝ երկրորդ համաշխարհային պատերազմը, որտեղ միայն հայ ժողովուրդը ավելի քան 325000 զոհ տվեց, այնքան, ինչքան ԱՄՆ-ը:

Տեր Աստված, մի՞թե այս փոքրիկ ժողովրդի համար այսքանը քիչ էր, որ երկրաշարժն էլ պիտի զարկեր: Մեռնողները մեռան, սակայն կյանքը պետք է շարունակվեր: Այդ մի քանի թուպենների ընթացքում որքան հայորդիների ծայներ բարձրացան առ Աստված՝ ողորմություն և գթություն հայցելով Երկնավորից: Բոլորս տեսանք, թե ինչպես այս ողբերգությունը համախմբեց ողջ մարդկությանը, և ամեն կողմից եկան, օգնության ձեռք մեկնեցին, եկան՝ կարեկցելու, զոդավիզ կանգնելու մեզ այդ դժվարին պահերին: Այս բոլորի համար, իհարկե, մենք շնորհակալ ենք: Սակայն տասը տարիներ են անցել, բայց ի՞նչ է փոխվել: Մեզանից յուրաքանչյուրն արեց ամեն ինչ՝ թե՛ հոգեպես և

թե՛ ֆիզիկապես զորավիգ լինելու այդ ահավոր աղետից տուժածներին, նրանք, ովքեր մեռան՝ մեռան, զնացին, խոսքը վերաբերում է նրանց, ովքեր ողջ մնացին: Տասը տարիներ են անցել, սակայն դեռ վերջը չի ապաքինվել: Որքան էլ օգնեն մեզ, մեր տունը մենք պիտի շինենք, մեր ուժերով պիտի կառուցենք: Այսօր, սիրելի հավատացյալներ, մենք պետք է համախմբվենք, ինքներս մեզ գտնենք, չպետք է հուսահատվենք՝ ասելով, թե ինչ կարող ենք անել այսքան տառապանքի, չարիքի առջև: Մեր նախնիները մեզ համար աղոթեցին՝ Սուրբ Գրիգորները՝ Լուսավորիչը, Նարեկացին, Տաթևացին, աղոթեցին ոչ միայն իրենց ժամանակի ժողովրդի համար, այլ նաև մեզ համար աղոթեցին: Իրենք մոռ դարձան՝ լուսավորելու համար մեր ժամանակը, որպեսզի մեր կյանքի ճանապարհին լուսավորվել կարողանանք իրենցից բխող լույսով:

Մեր շուրջը շատ են թշնամիները՝ թե՛ արտաքին և թե՛ ներքին, ովքեր աշխատում են ամեն կերպ խավարի մեջ ձգել մեզ: Սակայն մեզանից յուրաքանչյուրի առաջին պարտավորությունը հայ քրիստոնյա լինելու հանգամանքի գիտակցումն է: Հազար-հազարներ մեռան, որպեսզի այսօր մենք ապրենք, գոյություն ունենանք, որպեսզի շարունակենք իրենց կիսատ թողած գործը: Եթե կարողանանք այդ ապրումը, այդ հոգևոր թռիչքն ունենալ, զգալ մեր նախորդների բյուրավոր այդ բանակը, հավատացե՛ք, որ ոչ մեկ ուժ մեզ չի կարող տապալել, և հանգիստ սրտով կարող ենք ավետարանչի խոսքերով ասել. «Ո՛ր է, մահ, յաղթութիւնք քո, ո՛ր է, դժոխք, խայթոց քո» (Ա Կորնթ. ԺԵ 55): Մենք որ մահից չվախենանք, մեզ այլևս ոչնչով վախեցնել չեն կարող: Սակայն այդ հոգեվիճակն ունենալու համար պետք է աղոթել կարողանանք, պետք է հետևել կարողանանք մեր հայրերի սուրբ ճանապարհին: Մեր աղոթքները վեր առաքենք առ Աստված՝ խնդրելով Նրանից, որպեսզի այս աղետը վերջինը լինի մեր պատմության մեջ. ամեն:

ՍԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱԶԱՊԱՅՅԱՆԻ ԶԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ ԷԶՄԻԱԾՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(27 դեկտեմբերի, կիրակի, 1998 թ.)

*«Զի ոյր գուցէ՝ տացի նմա եւ յաւելցի. եւ
ոյր ոյն գուցէ՝ եւ գոր ունիցին բարձցի ի
նմանէ»:*

*«Բոլոր նրանց, ովքեր ունեն, տրվելու է.
եւ ովքեր չունեն, այդ նվազագույնն էլ որ
ունեն, իրենցից վերցվելու է»:*

(ՄԱՏԹ. ԺԳ 12):

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր, այսօր վերստին մեր Տեր Դիսուս Քրիստոս մեզ հետ խոսում է առականերով: Եվ այսօր ընթերցված ավետարանական առակը Ղուկաս Ավետարանչի կողմից մեզ փոխանցված տասը մնասների առակն է, որտեղ մեր Տեր Դիսուս Քրիստոս պատմում է, թե ինչպես մի ազնվական այր, որ պետք է գնար հեռու մի երկիր՝ իր թագավորության թագն ստանալու, մեկնելուց առաջ կանչեց իր երեք ծառաներին և մեկին տվեց տասը, մեկին հինգ, իսկ երրորդին մեկ մնաս, այսինքն՝ դրամ, և պատվիրեց նրանց գործածել այն, արժևորել՝ մինչև իր վերադարձը:

Պարզվում է, ոմանք իր թագավորությունից չէին ուզում իր տիրապետությունն իրենց վրա և նման ևն ուղարկում նրա հետևից, որ չեն ուզում նրա թագավորությունը: Սակայն ազնվականը կարողացավ ստանալ թագը, վերադարձավ և կանչեց ծառաներին: Եվ նա, ով ուներ տասը մնաս, ասաց, որ ինքը գործածել է տիրոջ տված մնասները և տասին տասը շահել, որն էլ վերադարձնում է նրան: Տերը նրան ասաց. «Բարի և ազնիվ ծառա, քեզ կարգում եմ տասը քաղաքների իշխան և տեր»: Նա, ով ստացել էր հինգ մնաս, ասաց. «Տեր, ես շրջանառության մեջ դրեցի հինգ մնասները և ահա հինգով ավելի վերադարձնում եմ»: Նա նույնպես իր հերթին իշխան ու տեր կարգվեց հինգ քաղաքների վրա: Իսկ այն ծառան, որ ուներ ընդամենը մեկ մնաս, եկավ և տիրոջ առջև համարձակորեն հայտարարեց, թե «գիտեի, որ դու խիստ մարդ ես, վերցնում ես այնտեղից, ուր չես դրել, և հնձում ես այնտեղից, ուր չես սերմանել, ուստի քո տված մեկ մնասը ծրարած պահեցի վարչամակի մեջ և ահա, քանի որ վերադարձել ես, քեզ եմ հանձնում այն»:

Տերը խստորեն քարկանում է ծառայի վրա եւ ասում. «Եթե գիտեիր, որ ես խիստ մարդ եմ, գալու եւ պահանջելու եմ, ինչո՞ւ չդրեցիր շրջանառության մեջ այդ դրամը, որպեսզի երբ վերադառնայի, ստանայի ավելիով»: Եվ հրամայում

է պատժել ծառային: Տերը հրամայում է պատժել այն բոլոր թշնամիներին, ովքեր չէին ցանկանում իր վերադարձը՝ որպես թագավոր և տեր:

Վերջում, որպես բարոյական խրատ, մեր Տեր Հիսուս Քրիստոս արտասանում է այն խոսքերը, թե «նրանց, ում տրված է, պետք է ավելացվի, և նրանք, ովքեր չունեն, նրանցից այդ նվազագույն ունեցածն իսկ պետք է վերցվի»:

Մեր ականջներին հնչող, մանավանդ այսօրվա իրականության հետ կապված խորթ մի արտահայտություն: Ինչպե՞ս կարելի է այդ արտահայտությունը համատեղել աստվածային բարության, աստվածային գթության, աստվածային ողորմության հետ, և ինչպե՞ս կարելի է այս արտահայտությունը համատեղել այն մտքի հետ, թե Աստված կամենում է մարդկանց հավասարությունը, ցանկանում է մարդկանց եղբայրությունը, որպեսզի նրանք ապրեն որպես քույրեր ու եղբայրներ և հավասարապես կիսեն իրենց ունեցվածքը: Եվ ինչպե՞ս է, որ ընկերային արդարություն, ընկերային հավասարություն քարոզող մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, հանկարծ հայտարարում է, թե «նրանք, ովքեր ունեն, պետք է ավելիով ունենան, և նրանք, ովքեր չունեն, ունեցածն էլ իրենցից վերցվելու է»: Դրա համար, սիրելի եղբայրներ և քույրեր, պետք է իրապես խորամուխ լինել, մտնել առակի իմաստի ու բովանդակության մեջ՝ հասկանալու համար, թե այդ ի՞նչ է, որ տրված է ու պետք է ավելանա, և ի՞նչ է այդ տրված նվազագույնը, որ կարող է վերցվել:

Ինչպես ամեն մի առակ, այս առակը նույնպես հիմնված է պատմական իրականության և պատմական հողի վրա: 2000 տարի առաջ Հրեաստանում իրոք նման իրադրության հետ եթե ոչ ամեն օր, ապա մի քանի տարին մեկ անգամ ստեղծվում էր, որովհետև Հրեաստանում երկրի թագավորը իր արքայական թագն ստանալու համար պետք է մեկների Դոռմ՝ կայսեր ձեռքից ստանալու թագը և, որպես Հրեաստանի թագավոր, վերադառնալու իր երկիրը:

Այս առարկայական, պատմական իրողությունն է վերցնում Հիսուս Քրիստոս՝ պատկերելու համար այն առակը, որը պետք է ունենար նաև այլաբանական ու բարոյական իմաստ: Պատմական ենթահող ունեցող այս առակի հետևում կարող ենք տեսնել նաև նրա այլաբանական իմաստը, որովհետև Քրիստոս այս առակը պատմում է Երուսաղեմ մուտքից մի քանի օր առաջ, երբ բոլորն սպասում էին, թե Քրիստոս պետք է մտնի Երուսաղեմ և վերականգնի թագավորությունը: Սակայն Քրիստոս այս առակով այլաբանորեն ցույց է տալիս, որ Ինքը, արքայությունն ստանալու համար, նախ պետք է հեռանա, խաչի վրա քարծրանա, հարություն առնի, վեր ելնի, Դոր աջ կողմում նստի և հետո միայն վերադառնա՝ որպես Թագավոր ու Տեր և այդ ընթացքում պետք է տա մարդկանց մեկին տասը, մեկին հինգ և մեկին մեկ հնարավորություն՝ ապրելու, ստեղծագործելու և Հիսուսի Ավետարանը տարածելու:

Այո՛, շատերը կլինեն, որ կդիմեն Աստծուն, որպեսզի Քրիստոս չվերադառնա Իր Արքայությամբ, Իր զորությամբ և Իր փառքով: Սակայն մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, վերադառնալու է որպես Արքա ու Տեր և հաշիվ է պահանջելու բոլոր նրանցից, ում տվել է, տվել է տասը, տվել է հինգ և տվել է մեկ: Նրանք,

հարաբերությունն ու հաշվեկշիռը: Եթե, շնորհների իմաստով, մեկին տրված է առավել, իսկ մյուսին՝ փոքր-ինչ պակաս, սակայն այդ շնորհներն օգտագործելու, փորձելու մեջ, բազմապատկելու մեջ բոլորը հավասար են: Յուրաքանչյուրը կարող է իր շնորհը բազմապատկել: Այս բազմապատկելու հնարավորության մեջ են բոլոր մարդիկ հավասար, և այստեղ է թաքնված աստվածային ողորմության ու հավասարության սկզբունքը:

Մենք այս առակից քաղում ենք նաև մեկ այլ բարոյական դաս: Նրանք, ովքեր հինգ կամ տասն ունեին, բազմապատկեցին այն, նրանք հանգստի, անդորրության ու անտարբերության մեջ չընկղմվեցին, Տերը նրանց չմղեց անգործության, այլ առավել պատասխանատվության կոչեց: Մեկին կարգեց տասը քաղաքի իշխան, երկրորդին՝ հինգ, որը նշանակում է, թե նրանք դրանով չհանգստացան, հանգստի չկոչվեցին, այլ իրենց պատասխանատվությունն ավելի մեծացավ: Այստեղ նույնպես թաքնված է աստվածային կամքի արտահայտություններից մեկը. ում շատ է տրված, նրանից ավելի շատ է պահանջվում, իսկ ով շատ ունի, նա ավելի մեծ պատասխանատվություն ունի Աստծու առջև: Դասեր քաղելու առումով երբ մոտենում ենք այս երրորդ ծառային, որը թաքցրել էր դրամը թաշկինակի մեջ, տեսնում ենք, որ նրա մեղքը, հանցանքը ոչ թե սոսկ ծրարելու և պահելու մեջ է, այլ ճիգ չգործադրելու, ցանկություն չդրսևորելու, եղածը բազմապատկելու փորձ չանելու մեջ:

Մենք չգիտենք, թե ի՞նչ մղումով նա այդ չարեց: Արդյոք վախեցա՞վ տիրոջից, վախեցավ, թե կարող է կորցնել նաև այդ մե՞կը, կամ արդյոք չէ՞ր սիրում տիրոջն ու այդ պատճառով չկամեցավ նրա ունեցվածքն ավելացնել: Զգիտենք: Առակն այդ մասին լուծ է: Սակայն նրա հիմնական զանցանքն ու մեղքը կայանում է այդ ցանկությունը չդրսևորելու մեջ, այդ ճիգն ու ջանքը չգործադրելու մեջ: Ամենավերջին ու հիմնական դասը, որ քաղում ենք մենք այս առակից, այս խոսքերից, որոնք արտասանեց Քրիստոս՝ որպես առակի վերջին բաժին, վերջին մաս, այս խոսքերի ճշմարտացիությունն է: Երբեմն մեր ականջին այն կարող է հնչել տարօրինակ և անըմբռնելի: Եթե մայենք մեր շուրջը, հետևենք մեր ամենօրյա նիստ ու կացին, ամենօրյա հնարավորությունների օգտագործմանը, կտեսնենք, որ իրոք Քրիստոսի այս խոսքն առավել, քան ճշմարիտ է, բայց ոչ երբեք տարօրինակ: Նայենք մեր շուրջը և կտեսնենք, թե որքան բազմապիսի մարդիկ, մենք՝ ինքներս, չօգտագործելով մեզ տրված շնորհները, կորցրել ենք դրանք: Իսկ մեկ ուրիշը, իրեն տրված շնորհներն օգտագործելով, կարողացել է բազմապատկել դրանք: Քանի-քանիսները մեր մտերիմներից, կարող ենք վկայել, որ ունեցել են երգելու տաղանդ, սակայն չեն գործածել և կորցրել են: Մեկ ուրիշն ունեցել է արհեստ ծեռք բերելու տաղանդ, սակայն իրեն տալով հարբեցողության կամ մեկ այլ մոլության, կորցրել է այն: Այստեղ է, որ մեկ անգամ ևս ճշմարտորեն և իրապես հաստատվում է Քրիստոսի այն խոսքը, թե ով ունի, նրան տրվելու է, և ով չունի, նրանից այդ նվազագույնն էլ վերցվելու է: Վերցնողը բնավ էլ Աստված չէ, այլ ինքը՝ մարդը, որ պահելով, թաքցնելով, չօգտագործելով իրեն տրված շնորհը, պարզև, ի վերջո կորցնում է այն:

Սիրելի եղբայրներ և քույրեր, բնավ պատահական չէ, որ այս առակն ընթերցվեց այսօր՝ այս կիրակի, որով մենք եզրափակում ենք տարին: Սեր եկեղեցու Հայրապետների իմաստուն կարգադրությամբ, մենք մեկ անգամ ևս ունկնդրեցինք այս առակը տարվա վերջին կիրակի օրը, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը խորհրդածի ոչ միայն այս տարի, այլ ընդհանրապես մեր ողջ կյանքում մեզ տրված պարգևների իրականացման, օգտագործման, բազմապատկման, առավել արժևորման մասին:

Մենք, որպես քրիստոնյաներ, ունենք ամենահիմնական պարգևը, շնորհը, որ է Քրիստոս: Այսօր, ինքնաքննության այս պահին, ինքներս մեզ պետք է հարց տանք, թե, որպես քրիստոնյաներ, այդ շնորհը, պարգևը՝ Քրիստոս, որ մենք ունենք, բաժանեցի՞նք արդյոք ուրիշների հետ, այն ուրախությամբ, երջանկությամբ փոխանցեցի՞նք ուրիշներին, որ մենք ունենք, ուրիշները բաժնեկից եղա՞ն մեր այս ցնծությանն ու ուրախությանը, կարողացա՞նք վկայել Քրիստոսին աշխարհի տարբեր հորիզոնականներում և նամանավանդ մեր ժողովրդի ծոցում, մեր եղբայրներին և քույրերին, ովքեր այսօր, այս պահին, եկեղեցում լինելու փոխարեն, առօրյա տարբեր զբաղումներով են տարված: Ինքնաքննության այս պահին մենք պետք է ուշադիր լինենք, որպեսզի չլինի, թե վաղը, երբ Քրիստոս՝ մեր Տերը, մեզանից հաշիվ պահանջի, մեր ունեցած պարգևը թաշկինակի մեջ ծրարված մնա:

Աղոթենք և աղոթելուց առավել ու աղոթելուց առաջ գործենք, քարոզենք, և թող այս տարվա վերջին կիրակին մեզ համար լինի մղում, ջանք, ծիգ, որպեսզի առավել ևս քարոզչության բնագավառում, Քրիստոսին վկայելու բնագավառում հաջորդ տարի՝ 1999 թվականին, կարողանանք մեր ունեցած շնորհները կրկնապատկել, եռապատկել և բազմապատկել ի փառս Աստուծո և ի փառս մեր եկեղեցու, ամեն:

Տ. ՄԱԿԱՐ ԱՔԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԶԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ա. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱԿԿԱՅԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(26 դեկտեմբերի, շաբաթ, 1998 թ.)

*«Որ քոյին յօժարակամ համբերութեամբ
զքարկոծումն յանձն առեր, շնորհեալ քեզ
յևստուծոյ լինել չարչարակից Քրիստոսի. զի եւ
մեզ ուսուսցես փառաւորել Սուրբ զերրորդո-
թիւնն»:*

(Շարական)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Դու, որ քո հոժար կամքով, հոժարականությամբ և համբերությամբ հանձն առիր քարկոծվել, նահատակվել վասն Հիսուսի. որով և քո անձը ընծայեցիր, նվիրեցիր, շնորհեցիր Աստուծո, դարձար չարչարանակից Քրիստոսի, մեզ ցույց տվեցիր ձեզ, կերպը, մեզ ցույց տվեցիր, թե ինչպես կարելի է և պետք է փառավորել Ամենապուր երրորդությանը:

Սիրելի հավատացյալներ, այսպես է բնութագրում շարականագիր վարդապետը Սուրբ Ստեփաննոսի անձնավորությունը: Այսօր մեր եկեղեցին տոնակատարում է հիշատակը Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի տիեզերասփյուռ վարդապետության համար առաջին նահատակի, որ է Ս. Ստեփաննոս նախասարկավազը, և որի մասին կարդում ենք «Գործք Առաքելոցում»: Գիտենք, թե ինչպես նա իր կյանքը ընծայաբերեց վասն Հիսուսի՝ քարկոծվեց, չարչարվեց, նահատակվեց և դրանով իսկ վկան հանդիսացավ Քրիստոսի վարդապետության ճշմարտության:

Ս. Ստեփաննոսի անձը յուրաքանչյուր քրիստոնյայի հավատքի մեծացման, փառավորման համար շատ կարևոր նշանակություն ունի: Մենք հաճախ հիշում ենք Սրբին՝ հայցելով նրա բարեխոսությունը մեր մեղքերի թողության և մեր մաքրագործման համար: Այսօր, երբ նրա հիշատակի օրն է, մենք պարտավոր ենք մեր մտքերում մի քանի կարևոր գաղափարների շուրջ խորհել, որոնք առնչվում են Ս. Ստեփաննոսի նահատակության, ինչպես նաև այն ուժի հետ, որը նրան առաջնորդեց դեպի կյանքի ընծայաբերում: Որքան հրաշալի է, երբ մեր եկեղեցու հայրերը, հատկապես այսօր, Ս. Ավետարանի ընթերցումը նշանակել են Հովհաննես Ավետարանչի ԺԲ գլխի 24-րդ համարից, որտեղ խոսվում է ցորենի հատիկի մասին ու ասվում, որ եթե այդ ցորենի հատիկը միմիայն ինքն իրենով ապրեր, ոչինչ կտար, սակայն պայման էր, որ այդ հատիկը ինքնագոհաբերվեր, ընկներ հողի մեջ և ծլարձակեր մեկի փոխարեն տասը, տասի փոխարեն հարյուր, հարյուրի փոխարեն հազար: Այսպես էր և Ս. Ստեփաննոսը: Նա իր գիտակից գոհաբերումով վկան հանդիսացավ

Քրիստոսի քարոզությունների ճշմարտության: Ուրեմն, խոսելով Ստեփաննոսի մասին, նախ և առաջ մեր մտքում հայտնվում է նվիրվածության գաղափարը: Յուրաքանչյուրս երբ լծվում ենք մի գործի, պետք է քաջ գիտակցենք, որ այդ գործի հաջողությունն ու փառավորումը մեզանից պահանջում է ամենից առաջ նվիրում:

Նվիրվածությամբ է, որ կարող ենք արդյունքի հասնել: Այն անձը, ով իր աշխատանքը չի սիրում, չի կարող հաջողություն ունենալ, այն աշակերտը, ով դպրոց հաճախել չի սիրում, չի սիրում ուսանել, չի կարող համալսարան ավարտել: Պաշտոնյան, որ իր գործի նկատմամբ անտարբեր է, չի կարող օգուտ տալ ժողովրդին: Ուրեմն, նվիրվածությունը յուրաքանչյուր գործում մեծագույն գրավակաճն է այդ գործի հաջողության: Ահավասիկ, Ս. Ստեփաննոս սարկավազը, հրաշալի կերպով գիտակցելով այս, ինքն իրեն նվիրաբերեց Քրիստոսի լույս Ավետարանի տարածմանը: Նվիրագործմանը վստահաբար հաջորդում է մի այլ կարևոր գաղափար, որ է ծառայության ոգին: Իր գործին նվիրված մարդը անպայմանորեն ծառայասեր կլինի: Եթե չաշխատենք ու չծառայենք, վստահաբար ոչնչի չենք կարող հասնել:

Ահավասիկ, Ստեփաննոս սարկավազը ծառան հանդիսացավ Քրիստոսի Ավետարանի, նա ծառայեց, ինչպես իր Տերը, և ինչպես առաքյալն է ասում, խոնարհեցրեց իր անձը, մեր Տիրոջ նման ունայնացրեց իր անձը՝ մեզ հավասարվելու համար: Ծառայությունը ուրիշ բան չէ, եթե ոչ Աստծո փառքի ի հայտ բերումը մեր անձերի միջից: Ս. Իրենիոս Հայրապետն ասում է՝ Աստծո փառքը կենդանի մարդն է: Ուրեմն, մարդու աշխատանքը, ծառայությունը Աստծո փառքի ներկայությունն է մեր մեջ: Նվիրվածությունը, ծառայությունը մարդուն տանում են դեպի ամենաբարձր և ճշմարիտ գաղափարը, որ է վկայությունը մեր գործերի, մեր առաքելության ճշմարտության: Սենք մեր եկեղեցու Սրբերին, նահատակներին կոչում ենք մարտիրոսներ, վկաներ: Իրենք իրենց անձերով, իրենց վարքով, իրենց նահատակությամբ վկաներն են հանդիսանում Քրիստոսի ճշմարիտ վարդապետության:

Սիրելի հավատացյալներ, ահավասիկ՝ նվիրաբերում, ծառայություն և վկայություն, երեք կարևոր գեները այսօրվա յուրաքանչյուր հավատավոր անհատի համար: Այսօր նշում ենք տոնը սարկավազների, և այս առիթով շնորհավորում եմ մեր սարկավազ եղբայրներին՝ նրանց համար երկնավոր Տիրոջից հայցելով ծառայության գիտակցություն, նվիրվածության ոգի, քարի և մաքրամաքուր վարք, որպեսզի իրենց այդ կենցաղով վկաները հանդիսանան մեր Մայր եկեղեցու ճշմարտության: Մեզանից յուրաքանչյուրի կյանքի ապրելու ձևով է նաև պայմանավորված հավատացյալների թվի մեծությունը:

Սիրելի սարկավազ եղբայրներ, թող Տերը ձեզ ուժ, կամք և առողջություն պարգևի, որպեսզի դուք իրապես, ինչպես Ստեփաննոս սարկավազը, վկաները հանդիսանաք մեր առաքելահաստատ Մայր եկեղեցու:

«Ընդորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն»:

Տ. ԱՐՄԱՃ ԱՔԵՂԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍԿԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(20 դեկտեմբերի, կիրակի, 1998 թ.)

«Աստուած, քաւեա զիս զմեղաւորս»:

(ԴՄՈՒԿԱՍ ԺԸ 13)

«Յանուն Զօր եւ Որդւոյ եւ Զոգւոյն Սրբոյ. ամեն»:

«Աստուած, քաւեա զիս զմեղաւորս»:

«Աստված, քավիր ինձ՝ մեղավորիս»:

Մեր Տերը՝ Դիսուս Քրիստոս, մի առակ պատմեց նրանց, ովքեր պարծենում են, իրենցից բացի բոլորին անարգում ու անարժան համարում:

Երկու մարդ տաճար գնացին՝ աղոթելու: Նրանցից մեկը՝ փարիսեցի, իսկ մյուսը՝ մաքսավոր: Փարիսեցին՝ բոլորից օրինապահ, պատվավոր մի անձ, ինքն իր մասին մեծ կարծիք ունեցող, այնպես էր աղոթում, ասես Աստված պարտավոր էր իրեն շնորհներ տալու, քանզի արժանավոր է: Նա աղոթում էր և ասում. «Փառք Զեզ, Աստված, որ նման չեմ ուրիշ մարդկանց՝ անիրավ, շնացող, հափշտակող, նման չեմ այս մաքսավորին, այլ պահում եմ բոլոր օրենքներն ու պատվիրանները»: Իսկ մաքսավորը, քաշված մի անկյուն՝ մեկուսի, չէր համարձակվում անգամ հայացքը բարձրացնել և սրբության տաճարին նայել, այլ երկյուղածությամբ, աչքերը դեպի ներքև հառած, ձեռքով ուժգին հարվածում էր կրծքին ու աղոթում. «Աստուած, քաւեա զիս զմեղաւորս»:

Սինչ փարիսեցին իր բարոքությունն էր հռչակում, մաքսավորը խոստովանում էր մեղքը ու ողորմություն հայցում:

Եթե մենք այդ պահին տաճարում ներկա լինեինք, պիտի կարծեինք, թե Աստված գոհ պիտի լինի օրինապահ փարիսեցուց և երես պիտի դարձնի գողացող մաքսավորից: Սակայն Դիսուս այլ կերպ է մտածում: Աստծո առաջ, ասում է Նա, մաքսավորն արդարացած վերադարձավ իր տուն, իսկ օրինապահ փարիսեցին՝ ոչ: Նա, դատելով բոլորին՝ շնացողներին, հափշտակողներին, գողերին, անիրավներին, դառնում է դեպի մաքսավորն ու ասում. «Ես նման չեմ այս մաքսավորին»՝ առանց իմանալու և գիտակցելու, որ ինքն իրեն խայտառակում է Աստծո առջև: Սա մեծ ամբաստանություն է և հոգու չարություն: Եկեղեցում, աղոթավայրում մեր կողքին մեղավոր լինելը հիշելով՝ երբեք մեզ չենք կարող արդարացնել, այլ, ընդհակառակը, կընկնենք մահացու մեղքի մեջ: Փարիսեցին պարծենում էր իր արդարությամբ, իր բարեպաշտությամբ, քանզի ծոմ էր պահում, պարծենում էր իր բարեբարությամբ, որովհետև տասամորդ էր տալիս, սակայն, այս բոլորով հանդերձ, ինքն իր մեջ սեր չուներ: Առանց սիրո թե՛ բարեպաշտությունը և թե՛ բարեբարությունը ունայն են: Այդ սիրո չգոյության պատճառով փարիսեցին իր հոգում սպանեց իր կողքին կանգնած և արտասովալից աղոթող մաքսավորին: Սա եղբայրասպանություն էր: Եթե նա սեր ունենար, խղճմտանքի խայթ ունենար, սրտացավություն ունենար, այսպես պիտի աղոթեր՝ «Փառք Զեզ, Աստված, որ նման չեմ անօրեն

մարդկանց, իսկ անօրեն մարդկանց և այս մաքսավորին գթա և ողորմիր. տուր նրանց առիթ ապաշխարելու և բարիքներ գործելու»: Սակայն մաքսավորը, գիտակցելով իր մեղավոր լինելը, շարունակ աղոթում էր. «Աստուած, քաւեա զիս զմեղաւորս»:

Այս առակում, սիրելի հավատացյալներ, հիշվում են երկու անձեր՝ երկու իրարամերժ նկարագրերով: Քրիստոս այս առակին նախորդող «Ամիրավ դատավորի» առակով աղոթքի հետևողականությունն ու հարատևությունն էր պատգամում, իսկ «Փարիսեցու և մաքսավորի» այս առակով մեզ ցույց է տալիս աղոթքի հոգին ու էությունը: Պետք է, որ մենք մեր աղոթքներում զուսպ լինենք, զգուշանանք մեր անձերը արդար նկատելուց: Մաքսավորն արդարացած վերադարձավ իր տուն, իսկ փարիսեցին՝ ոչ: Արդարացած, այսինքն՝ մեղաց թողություն ստացած, որի մասին խնդրում էր Աստծուց, իսկ փարիսեցին մեղաց թողություն չէր խնդրում, ուստի և այն նրան չճշորիվեց: Փարիսեցին վստահ էր, թե ինքն արդար է, այդ իսկ պատճառով էլ չէր հայցում Աստծո ողորմությունը, ողորմություն, որը մարդ ստանում է՝ ի պատասխան հավատո ու արտասովոր աղոթքի:

Սիրելի հավատացյալներ, փառք Աստծո, որ Տերը աղոթողի ոչ պաշտոնին է նայում, ոչ աստիճանին և ոչ նրա աղոթքի երկարությամբ, այլ նայում է աղոթողի սրտին, աղոթողի սիրտ, որ հայցում է երկնքի Արքայություն, փրկություն: Բոլորս էլ փնտրտուքի մեջ ենք և ձգտում ենք ինչ-որ ձևով, ինչ-որ ճանապարհով հասնելու փրկության: Անձամբ ես, հետևելով իմ ներքին ծայրին և կոչմանը, որ ունեի մանուկ հասակից ի վեր, ընտրեցի կուսակրոն քահանայության ճանապարհը և այսօր, փառք Աստծո, հետ քահանայական ձեռնադրության և պահեցողության, մատուցում եմ անդրանիկ Ս. Պատարագը՝ կոչվելու համար մեր եկեղեցու և մեր ժողովրդի ծառայության: Այսօրվա այս շնորհը ինձ պիտի չտրվեր, եթե չլիներ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Անդրանիկ Ս. Պատարագիս հոգուս պարտքն եմ համարում, հավարտ քարոզիս, իմ որդիական հարգանքն՝ ու սերը մատուցել երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ում օրոք զինվորագրվեցի Մայր Աթոռի միաբանությանը: Որդիական սերս և հնազանդությունս եմ հայտնում Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ աղոթելով և հայցելով Աստծուց կատարյալ առողջություն իր անձի համար: Երախտագիտության և որդիական շնորհակալանքի խոսք ունեմ ասելու նաև իմ հոգևոր ծնողին՝ Գերմանիայի Հայոց առաջնորդին, ում ձեռքի հովանու ներքո և հայրական շնչի տակ արժանացա այս շնորհին: Թող նրա ձեռքերը միշտ դալար մնան: Երախտագիտությունս պիտի անպայման հայտնեմ այն հոգևոր դարբնոցին՝ Հոգևոր Դեմարանին, որի ճրագով վառված ահա այսօր կանգնած եմ ձեր առջև, դասախոսական կազմին, տեսչությանը, որոնց շնչի տակ կերտվեցի և դարձա զավակը մեծ տեսիլքի և հույսով վառված հուր-հոգի, վառվեցի և այսօր գնում եմ վառելու մեր հավատացյալ ժողովրդի հոգիները:

Աղոթեցեք, սիրելիներ, նվաստիս համար, թող Աստված կյանքի բոլոր դժվարությունների մեջ ուժ և կարողություն տա բոլորիս՝ աղոթելու և ասելու. «Աստուած, քաւեա զիս զմեղաւորս»:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն»:



ՊԼՏՄԸ - ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ

ՀԲԸԳ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԽԱԿԱՆՈՒԹԱՆՐԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

5-րդ դարի հայ պատմագրությունը շատ է ուսումնասիրվել բանասերների, հայագետների կողմից, որոնք թարգմանել, կազմել են պատմագրական այս երկերի բնագրերը, կատարել մանրազնից քննությունը նրանց ոճի, լեզվի, հաղորդվող պատմական իրադարձությունների վավերականության: Այդ բոլոր ուսումնասիրությունների կողքին, մեծ փորձեցի՞ք վերլուծել մեր պատմագրության մեջ հաճախ հանդիպող մասնակագրության ժանրի գործերը: Յուրաքանչյուր մասնակ վերլուծելիս, սկզբում մերկայացրել ենք տվյալ մասնակի գրության պատճառները, թե ինչ պատմական դեպքերով, շարժառիթներով է պայմանավորված դրանց գրությունը:

Հայոց ՊատմաՌոր՝ Մովսես Խորենացու Պատմությունում տեղ է գտել մասնակների միմյանց հաջորդող մի շարք: Այն սկսում է Աբգարի թողով՝ ուղղված Հիսուս Քրիստոսին, ապա թղթի պատասխանը, այնուհետև գալիս են Աբգարի մասնակները՝ ուղղված Տիրեքիոս կայսեր, Ներսեհ և Արտաշես արքաներին՝ իրենց պատասխաններով հանդերձ: Որտեղի՞ց և ումի՞ց է օգտվել Խորենացին: Այս հարցերի պատասխանը տալիս է հենց ինքը՝ ՊատմաՌայրը՝ մշտով Արդադատի որդի Աբգար թագավորի դիվանագիտի Ղեքուքնայի (Լաքուքնա) անունը. «Գրեաք զամենայն գործս, որ ինչ յառաքս Աբգարու եւ Սանատրիկոյ, եւ եղ ի դիւանին Եղեսիայ»¹: Նշանակում է, թե ՊատմաՌայրը, Ղեքուքնայից օգտվելով, գրել է երկու թագավորների գործերի մասին, որոնց հիշատակությունները պահվում էին Եղեսիայի դիվանում, մինչև իր ժամանակները: Երկար ժամանակ, մինչև 19-րդ դարի կեսերը, Խորենացու այս աղբյուրը կորած էր համարվում, և շատ հայագետներ կասկածանքով էին վերաբերվում ՊատմաՌոր աշխատության վավերականությանը:

1852 թ. Փարիզի կայսերական գրադարանում գտնվեց մի մատղնտիր (գրված ժ.Ղ. դարում), որի մեջ կար «Աբգարի թուղթը» վերնագրով մի փոքր պատմություն: Այս պատմությունը շատ ընդհանրություններ ուներ Խորենացու քերած վկայությունների հետ: Համարյա թառացի այն մեջ էր քերված նաև եկեղեցական մշակմամբ դեմքերից մեկի՝ Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական Պատմության» մի դրվագի մեջ², որում, սակայն, ճշգրտորեն հիշվում էր հեղինակի անունը՝ տառերի որոշակի հնչյունափոխությամբ և ոչ ճիշտ դասավորումով: Հավելումն այս ամենի և հապացույց Խորենացու ճշմարտացիության, ավելացնենք նաև հաջորդ գտածոն: 1865 թ. Մայր Աթոռի մատենադարանում կար մի մատղնտիր, որի հատվածներից մեկը կրում էր հետևյալ վերնագիրը. «Թուղթ Աբգարու

¹ Մ. Խորենացի, «Պատմություն Հայոց», Բ 36:

² Եվսեբիոս Կեսարացի, «Պատմություն Եկեղեցույց», գիրք Բ, գլ. Բ:

թագաւորին եղեսիայ քաղաքի՝ որ թարգմանի յԱսորի լեզու Ուռհայ, որդւոյ Մանուկայ»։ Իսկ վերջում գրված էր. «Ղաքուքնա (Ղեքուքնա) որդի Արդա-շարադա դարի թագաւորին, գրեաց զամենայն ինչ. զոր միանգամ իրք եղեն Աւդէի առաքելոյ ի սկզբանէ մինչեւ ի կատարած... եւ եղին ի տան յիշատակաց քարտիսից»։ Այս գործի թարգմանութեան կատարման ժամանակը դրվում է 5-րդ դարը, Եզնիկի և Հովսեփ Պաղնացու կողմից, քանի որ նրանք, գրելի գյուտից հետո, Մեսրոպ Մաշտոցի պատվերով մեկնեցին Եղեսիայ՝ թարգմանական գործին լծվելու։ Այս երկու ձեռագրերի հայտնաբերումը հնարավորություն ընձեռեց նրա ուսումնասիրութեան և երկու հրատարակութեան համար, որոնք կատարվեցին միաժամանակ՝ 1868 թ., մեկը՝ Երուսաղեմում, իսկ մյուսը՝ Վենետիկում։

Հաջորդ նամակը, որ ուսումնասիրութեան նյութ է դարձել, Ղազար Փարպեցու թուղթն է՝ ուղղված Հայոց մարզպան Վահան Մամիկոնյանին։ Այն ուսումնասիրել և հրատարակել է 19-րդ դարի հայագետ Մկրտիչ Էմինը, 1853 թ. Մոսկվայում։ Նախաբանում նա չի կենտրոնացնում գրութեան ժամանակի և պայմանների վրա, այլ, այն թողնելով հետազային, նշում է, որ դրան ավելի կօգնեն ապագա ուսումնասիրությունները³։ Մկրտիչ Էմինի գրած առաջաբանից տեղեկանում ենք, որ այս թուղթը գտնվել է Ս. Էջմիածնի վանքի մատենադարանում, որի մասին նա իմանում է Էջմիածնից կատարած ուխտագնացութեան ժամանակ, 1848 թ.։ Ըստ Էջմիածնի միաբան Հովհաննես արքեպս. Օսթիաթունյանցի տեղեկության, 1829 թ. նա Մսեր Զմյուռնացու հետ կարգի է բերում մատենադարանը, որի ժամանակ գտնվում է Ղազար Փարպեցու «Հայոց Պատմությունը», իսկ վերջում՝ Ղազարի թուղթը՝ ուղղված Վահան Մամիկոնյանին։ Այդպիսի երկու ձեռագրեր են լինում։ Մսեր Զմյուռնացին, ընդօրինակելով օրինակներից մեկը, տանում է հետաքրքիր։ Երբ Մկրտիչ Էմինն է լինում Էջմիածնում, Հովհաննես արքեպիսկոպոսից խնդրում է մի օրինակը, իսկ հաջորդը վերցնելով Մսեր Զմյուռնացուց, ուսումնասիրում և հանձնում է տպագրությանը⁴։

Ղազար Փարպեցու թուղթն ուսումնասիրել է նաև նշանավոր հայագետ, բանասեր Մանուկ Աբեղյանը։ Ուսումնասիրությունը տեղ է գտել իր Երկերի Գ հատորում⁵։ Նա հանգամանորեն վերլուծում է թուղթը և տալիս իր գնահատականը ժամանակի տիրող իրավիճակի, ինչպես նաև հոգևոր դասի տարբեր հոսանքների՝ միմյանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի վերաբերյալ։

Ա. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

5-րդ դարի հայ պատմագրության մեջ Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը» առանձնակի նշանակություն է ունեցել։ Այն մեծ գնահատանքի, ինչպես նաև քննադատության է ենթարկվել հայագետների կողմից։ Սակայն միշտ էլ, չնայած այս ամենին, Պատմությունը մնացել է ամենամեծ ժողովրդակա-նություն վայելող գործերից մեկը։ Պատմության հատկանշական կետերում

³ «Թուղթ առ Վահան տերն Մամիկոնէից», Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1853, էջ 31։

⁴ Նույն տեղում, էջ 30։

⁵ Մանուկ Աբեղյան, հտ. Գ, էջ 347-50։

կարևոր տեղ է գրավում նաև մամականու ժանրի առկայությունը: Խորենացու Պատմությունը, 5-րդ դարի մեր պատմիչների գործերի կողքին, թերևս, միակն է, որ այսքան առատ է մամակներով, հրովարտականերով, թագավորական գրերով:

Եղած մամակները մեզ պատկերացում են տալիս հին ժամանակներից մինչև 5-րդ դարի առաջին կեսին տեղի ունեցած պատմական դեպքերի մասին: Այդ մամակներից շատերը, կարծես, իրեղեն ապացույցներ են, որոնք գալիս են կնքելու և հաստատելու տվյալ իրողությունը, պատմական երևույթը:

Խորենացու Պատմության մեջ տեղ գտած մամակները կարելի է բաժանել երկու խմբի.

ա) Նամակներ, որոնք առանց պատասխանի են, գրված են թագավորի, իշխանի կամ մի այլ երևելի անձի կողմից.

բ) Նամակների հերթականությամբ դասավորված շարքեր, որոնք պատասխաններով միմյանց հասցեագրված մամակներ են:

Այդպիսի մամակների երեք խումբ կա Պատմության մեջ: Առաջինը գտնվում է Բ գրքի ԼԳ գլխում: Հինգ մամակներ հաջորդում են միմյանց: Ընդհանուր առմամբ, այս մամակները կապված են Աբգարի՝ քրիստոնյա դառնալու և դարձի գալու հետ: Առաջին երեք մամակները փոխանակվել են Աբգար թագավորի և Տիբերիոս կայսեր միջև, մյուս երկուսը Աբգարի կողմից ուղղված են Ներսես և Արտաշես թագավորներին:

Երկրորդ խումբը գտնվում է Գ գրքի Ծ գլխում, որը պարունակում է Վրթանես Հայրապետի և մախարարների մամակը՝ Կոստանդ կայսեր և նրա պատասխանը:

Երրորդ խումբը գտնվում է Գ գրքի Ծ գլխում: Այս գլխում հինգ մամակներ են իրար հաջորդում, որոնցից առաջին երեքը Սահակի թղթերն են՝ ուղղված Թեոդոսին, Աստիկոսին, Ամատոլիոսին, իսկ հաջորդ երկուսը՝ Ամատոլիոսի և Թեոդոսի պատասխաններն են: Այս մամակները վերաբերվում են գրերի գլուխին և Հայաստանի հունական տարածքում կրթական գործը սկսելու համար թույլտվություն ստանալուն:

Ա) Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» առաջին, այսպես ասած, վավերական փաստաթուղթը Հայոց Վաղարշ թագավորի իր եղբորը՝ Պարսից Արշակ արքային գրած մամակն է: Ըստ Խորենացու, Արշակը կարողացել է իրեն հպատակեցնել Արևելքը և Ասորեստանը, իսկ Հայոց աշխարհում թագավոր է մշանակում իր եղբորը՝ Վաղարշակին: Վաղարշակը ցանկանում է իմանալ, թե ի՞նչ հողի վրա է ինքը թագավորում, ովքե՞ր են մայրենիները: Նա մամակով եղբորը խնդրում է, որ իր ուղարկած մարդուն՝ Մար Աբաս Կատինային, թույլ տան օգտվել արքունական դիվանից՝ իրեն պետք եկած տեղեկությունները հավաքելու համար⁶:

Բ) Խորենացու գործի մեջ է գտնվում նաև Մարաստանի թագավոր Ածյառակի մամակը Հայոց Տիգրան արքային:

Ավանդության համաձայն, Ածյառակը մի վատ երազ է տեսնում, որը մեծ անհանգստություն է պատճառում արքային: Այդ երազով նա հասկանում է, որ Հայոց աշխարհից է գալու իր թագավորության վախճանը: Այս ամենը կանխելու համար Ածյառակը մի մամակ է գրում Տիգրանին: Նամակում նա ասում է, որ երկու երկրներն էլ պետք է ապահով և հանգիստ ապրեն, և դա հնարավոր է

⁶ Մ. Խորենացի, գիրք Ա, գլուխ Թ:

միմյանց հետ բարեկամություն անելու շնորհիվ: Ուստի Ածղաթական առաջարկում է Տիգրանին, իր քրոջը՝ Տիգրանուհուն, իրեն կնության տալ⁷:

Գ) Պատմության երկրորդ գրքում է գտնվում մի շատ գեղեցիկ վավերական փաստաթուղթ, որի պարունակությունը հայ ժողովրդի համար դարեդար փոխանցվել է՝ որպես նվիրական մի փաստ, որը վկայում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հայոց աշխարհի հետ ունեցած առնչությունների մասին:

Այս ցամակը Հիսուսին է ուղարկում Եդեսիայի Աբգար թագավորը: Նամակում Աբգարն ասում է, որ լսել է Նրա (Հիսուսի) կատարած հրաշքների մասին, թե ինչպես կոյրերին տեսնել է տալիս, կաղերին՝ քայլել: Այդ ամենը կատարում է ո՛չ դեղերով, ո՛չ քույսերով: Աբգարը հավատացած է, որ դա սովորական մարդը չի կարող անել: Նա ընդունում է Հիսուսի Աստված լինելը: Ուստի Աբգարը Հիսուսին խնդրում է գնալ իր մոտ, Եդեսիա, բուժել իրեն և բնակվել իր մոտ, քանի որ լսել է հրեաների՝ նրան հալածելու մասին: Ինչպես գիտենք պատմությունից, Հիսուս չի գնում, այլ ուղարկում է մի մամակ, Թովմաս առաքյալի ձեռքով, որը գտնվում է հաջորդ գլխում⁸:

Դ) Նամակում Հիսուս ասում է՝ երանի նրան, ով առանց տեսնելու իրեն հավատում է: Ինչ վերաբերում է Եդեսիա գնալուն, ապա դա չի կարող անել, քանի որ իր բոլոր գործերը այնտեղ՝ Հրեաստանում պիտի կատարի, սակայն խոստանում է Համբարձվելուց հետո իր աշակերտներից մեկին ուղարկել արքայի մոտ: Այս ցամակը թագավորին է տանում նրա սուրհանդակ Անանը⁹:

Ե) Հիսուսի ասածի համաձայն, իր Համբարձումից հետո, Աբգարի մոտ է գնում Թադեոսը՝ յոթանասուն աշակերտներից մեկը, որն էլ բժշկում է Աբգարին և քարոզում Ավետարանը: Ընդունելով փրկության լույսը՝ Աբգարը ավետիսի ցամակներ է ուղարկում Տիբերիոս կայսեր, Ասորեստանի Ներսես և Պարսից Արտաշես թագավորներին:

ԱԲԳԱՐԻ ԹՈՒՂԹԸ ՏԻԲԵՐԻՈՍԻՆ - Աբգարը խոսում է Հիսուսի հրաշքների, մարդկանց հարություն տալու մասին, որը կարող էր անել միայն Աստված: Այդ ամենի վկայությունն այն է, որ Հիսուսի խոսքը քարոզվում է ողջ աշխարհում: Աբգարը Տիբերիոսին խնդրում է ճիշտ վերաբերմունք ցույց տալ հրեաների՝ Հիսուսի նկատմամբ գործած քայլի համար և Քրիստոսին երկրպագել իբրև ճշմարիտ Աստված:

ԱԲԳԱՐԻ ԹՂԹԻ ՊԱՏԱՆԱՆԸ ՏԻԲԵՐԻՈՍԻՑ - Տիբերիոսն ասում է, որ ինքը լսել է Քրիստոսի գործերի և քարոզության մասին և նույնիսկ ցանկացել է ընդունել նրան, որպես Աստված, սակայն սինկլիտոսը այդ առաջարկը չի ընդունել: Այնուհետև կայսրը ազատ է թողել Քրիստոսի պաշտամունքը և նրան հավատացողներին: Իսկ ինչ վերաբերում է հրեաների՝ Հիսուսի նկատմամբ կատարած քայլին, ապա այն կքննի, երբ ազատվի ծանր հոգսերից:

ԱԲԳԱՐԻ ԹՈՒՂԹԸ ՏԻԲԵՐԻՈՍԻՆ - Աբգարն ասում է, որ սինկլիտոսի վերաբերմունքը շատ սխալ է աստվածներ ընտրելու հարցում, քանի որ դրանից հետևում է, թե մարդիկ են աստվածներ ընտրում: Ապա Տիբերիոսից խնդրում է Պիղատոսին հեռացնել իր պաշտոնից, քանի որ կատարել է հրեաների կամքը՝ Քրիստոսին անմեղ տեղը խաչ բարձրացնելով:

⁷ Նույն տեղում, գիրք Ա, գլուխ ԻԸ:

⁸ Մ. խորենացի, գիրք Բ, գլուխ ԻԱ:

⁹ Մ. խորենացի, գիրք Բ, գլուխ ԼԲ:

ԱՐԳԱՐԻ ԹՈՒՂԹԸ ՆԵՐՍԵՀԻՆ - Ներսեհ թագավորը լսել էր Արգարի բժշկության մասին և ցանկացել տեսնել բժշկին: Արգարն ասում է, որ մա ոչ թե մարդ է, այլ Աստված, և եթե ցանկանում է նրա մասին լսել և հավատալ, ապա թող փնտրի նրա ընկերակից Սիմոնին, որը Պարսկաստանի կողմերն է գտնվում:

ԱՐԳԱՐԻ ԹՈՒՂԹԸ ԱՐՏԱՇԵՍԻՆ - Նախորդ ցամակի բովանդակության մեջն է մահ այս ցամակը: Արգարը Արտաշեսին ասում է, որ Քրիստոսի աշակերտներից մեկը՝ Սիմոնը, գտնվում է իր տերության սահմաններում: Եթե հավատում եմ Քրիստոսին, ապա կարող եմ գտնել Սիմոնին, բժշկվել և ընդունել փրկության լույսը¹⁰:

Ձ) Տրդատի մահից հետո Հայաստանում խառնակ իրավիճակ էր տիրում, քանի որ Աղծնիքի բղեջխ Բակուրը, օգնական ունենալով Պարսից Որմիզդ թագավորին, ցանկանում էր թագավոր դառնալ: Այդ քայլը կանխելու համար, Վրթանես Հագրապետը և Եսայա արքայազները մամակ եմ ուղղում Կոստանդ կայսեր:

Նամակի մեջ հիշվում եմ Կոստանդիանոսի և Տրդատի բարեկամական հարաբերությունները: Ապա խնդրվում է, որ երկիրը չթողնի անիրավ պարսիկներին, այլ, օգնական զորք ուղարկելով, Տրդատի որդուն՝ Խոսրովին թագավոր կարգի Հայոց աշխարհի վրա:

ԿՈՍՏԱՆԴԻ ԹՈՒՂԹԸ - Նամակն ստանալով՝ Կոստանդն իր զորավարներից մեկին՝ Անտիոքոսին, զորքով ուղարկում է Հայաստան և տալիս մի մամակ, որի մեջ ասում է, թե զորքն ուղարկել է՝ Խոսրովին թագավորեցնելու և դրանով իսկ երկիրը բարեկարգելու համար¹¹:

Է) Տիրանն սպանել էր Հուսիկ Հայրապետին: Այդ մասին իմանում է Հուլիանոսի բանակ ուղարկված Ռշտունյաց մահապետը և հեռանում իր զորքով: Այս քայլի համար բարկացած Հուլիանոսը մամակ է գրում Տիրանին:

Նամակում Հուլիանոսն արտահայտում է իր դժգոհությունը Ռշտունյաց մահապետի կատարած քայլի հանդեպ: Այնուհետև ասում է, եթե այդ քայլն իր՝ իշխանի կողմից է գործվել, ապա թող թագավորը վերացնի նրա տունը, իսկ եթե ինքը՝ Տիրանն է հրամայել, ապա պատերազմից հետո կվերադառնա և կավերի Հայոց աշխարհը¹²:

Ը) ԵԱՊՈՒՀԻ ԹՈՒՂԹԸ ՏԻՐԱՆԻՆ - Պարսից Օսպուրն արքան Հուլիանոսի մահից հետո մի մամակ է գրում Հայոց Տիրան արքային: Նամակում Օսպուրն խնդրում է, որ Հայոց արքան զեն իր մոտ հասարակաց օգտի մասին խորհրդածելու համար, և երդվում է նրա թագավորությանը վնաս չտալ: Այս ամենի վերջն այն է լինում, որ Տիրանը գնում է Օսպուրնի մոտ, որտեղ էլ կտրացվում է¹³:

Թ) ՎԱՂԵՆՏԻԱՆՈՍԻ ԹՈՒՂԹՆ ԱՐՇԱԿԻՆ Հայոց Արշակ թագավորին մամակ է ուղարկում Վաղենտիանոս կայսրը: Նա մամակում հիշեցնում է անաստված պարսիկների չարագործությունները և առաջարկում է իր հետ գործակցել: Ապա թագավորին առաջարկում է իր երկրի հարկերը, նրա եղբորը և մյուս պատանդներին արձակելու համար¹⁴:

Ժ) ԱՐՇԱԿԻ ԹՈՒՂԹԸ ԳՆԵԼԻՆ - Արշակ թագավորը լսում է, թե իր եղբոր

¹⁰ Մ. խորենացի, գիրք Բ, գլուխ ԼԳ:

¹¹ Մ. խորենացի, գիրք Գ, գլուխ Ե:

¹² Մ. խորենացի, գիրք Գ, գլուխ ԺԵ:

¹³ Մ. խորենացի, գիրք Գ, գլուխ ԺԶ:

¹⁴ Մ. խորենացի, գիրք Գ, գլուխ ԺԸ:

որդին՝ Գնեղը, ավելի հաջողակ է որսի մեջ, և մամակ է ուղարկում մրամ, որտեղ Գնեղին պատվիրում է Ծաղկանց լեռներում մի հարմար տեղ գտնել՝ թագավորավայել որս անելու համար¹⁵:

ԺԱ) ՇԱՊՈՒՀԻ ԹՈՒՂԹԸ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՑՑԻՆԵՐԻՆ - Օսպուհը գալիս է Հայաստանի վրա, բայց Տիգրանակերտի մոտ պարտվում և այն գրավել չի կարողանում: Այդ առիթով մի մամակ է գրում տիգրանակերտցիներին, որտեղ ասվում է, թե ինքը եկել էր քարի նպատակներով, սակայն առաջին իսկ քաղաքը իրեն այսպես դիմավորեց, որն էլ հետագայում օրինակ կդառնա մյուսների համար: Նա ասում է, թե հետանում է իր երկիրը, բայց վերադառնալուց հետո մրամն մեծ պատուհասներ կհասցնի, քանի որ այդպես էին վարվել իր հետ¹⁶:

ԺԲ) ԱՐՇԱԿԻ ԹՈՒՂԹԸ ՎԱՂԵՍԻՆ - Օսպուհն ասպատակում է Հայոց աշխարհը: Հայոց նախարարները, Ներսես Հայրապետի հետ միասին, միաբանվում են Արշակ թագավորի շուրջ: Արշակը Ներսեսին մի մամակով ուղարկում է Վաղես կայսեր մոտ, որով հիշեցնում է անցյալում երկու տերությունների միջև գոյություն ունեցած սիրո և խաղաղության մասին և խնդրում մույն ձևով շարունակել՝ միմյանց փոխօգնություն ցույց տալով¹⁷:

ԺԳ) ՇԱՊՈՒՀԻ ԹՈՒՂԹԸ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ - Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև բաժանվելուց հետո, Հայաստանում անկայուն վիճակ էր տիրում: Բյուզանդական մասում շարունակում է թագավորել Արշակը, որի կողմն են անցնում շատ նախարարներ: Այս ամենից զայրացած՝ Օսպուհը Հայաստանի իր բաժնում թագավոր է նշանակում խոսրովին և մի մամակ է ուղարկում նախարարներին:

Նամակում ասվում է, թե նախարարներն ազնիվ չվարվեցին՝ թողնելով և հետանալով իրենց հայրենի կալվածքներից: Օսպուհն ասում է, որ այժմ ինքը թագավորեցող է խոսրովին, և խնդրում է, որ քոլոր նախարարները վերադառնան իրենց առաջվա տիրույթները, այլապես այդ ամենը կրոնագրավվեն հարջուցիս¹⁸:

ԺԴ) ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԹՈՒՂԹԸ ԽՈՍՐՈՎԻՆ - Արշակ թագավորի մահից հետո, Հունաց բաժնում այլևս թագավոր չի լինում, և Գազավոն Ստրատելատը, մի քանի համախոհների հետ, մամակ է գրում խոսրով արքային:

Նամակում հիշվում է, թե ինչպես են իրենք հավատարմորեն ծառայել Արշակին մինչև մրա մահը, և այժմ ցանկանում են ծառայել խոսրովին: Դրա համար քերում են երեք պայման.

ա) խոսրովը չպիտի հիշի մրամն հանցանքները, իր դեմ մղված պատերազմները.

բ) Պիտի վերադարձնի Պարսից մասում մնացած իրենց տիրույթները.

գ) իրենց պիտի ազատի կայսեր զայրույթից:

ԽՈՍՐՈՎԻ ԹՈՒՂԹԸ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ - խոսրովն այդ մամակին շատ դրական պատասխան է տալիս: Նա խոստանում է մոռանալ այն ամենը, ինչ եղել է առաջ: Նա մույնիսկ եղածը նկատում է որպես թագավորի նկատմամբ հավատարմության արտահայտություն: խոստանում է վերադարձնել իրենց

¹⁵ Մ. Խորենացի, գիրք Գ, գլուխ ԻԳ:

¹⁶ Մ. Խորենացի, գիրք Գ, գլուխ ԻԶ:

¹⁷ Մ. Խորենացի, գիրք Գ, գլուխ ԻԹ:

¹⁸ Մ. Խորենացի, գիրք Գ, գլուխ ԽԲ:

հողերը, բայց ոչ ամբողջությամբ, քանի որ մի մասը նվիրել էր ուրիշներին, մի մասն էլ՝ հունաց գործակալներին¹⁹:

ԺԵ) ԱՐՏԱՇԻՐԻ ԹՈՒՂԹԸ ՎՌԱՄՇԵԱՊՈՒՀԻՆ - Խոսրովին հաջորդած Վրամշապուռն արքան Սահակ Կաթողիկոսին ուղարկում է Տիգրան, Արտաշիր արքայի մոտ, որպեսզի բարեխոսի՝ Համագասպին սպարապետ դարձնելու համար: Արտաշիրը ուրախությամբ է ընդունում հյուրերին և վերադարձին մի ճամակ հանձնում Վրամշապուռնին:

Նամակում Արտաշիրը հիշում է Սահակի նախնիների՝ Սուրենյան Պահլավի նախարարների գործերը, ապա՝ Գրիգորի և Տրդատի հետ կատարված դեպքերը: Նա իր հավանությունն է տալիս Համագասպի սպարապետության հարցում և բարձրացնում նրան մինչև նախարարական հիմնգերդոյ աստիճանը: Պարգևներ է տալիս նաև մյուս նախարարներին²⁰:

ԺԶ) Հայաստանում ծանր իրավիճակ էր տիրում: Այդ ամենը գալիս էր Պարսից արքունիքից: Այս առիթով, օգնություն ստանալու համար, Սահակ Հայրապետը Մեսրոպ Մաշտոցին ուղարկում է Թեոդոս կայսեր մոտ: Այս գլուխը պարունակում է հինգ ճամակներ, որոնցից երկուսն ունեն իրենց պատասխանները:

ՍԱՀԱԿԻ ԹՈՒՂԹԸ ԹԵՈԴՈՍԻՆ - Սահակը խոսում է Մաշտոցի կատարած մեծ աշխատանքի մասին, սակայն նրա գործի արդյունքը չեն կարողանում իրագործել, քանի որ չկա կայսեր հրամանը: Այս ճամակով Սահակը խնդրում է Թեոդոս կայսեր բարձր կարգադրությունը և թույլտվությունը՝ իր սահմաններում կրթական աշխատանք ծավալելու համար:

ՍԱՀԱԿԻ ԹՈՒՂԹԸ ԱՏՏԻԿՈՍԻՆ - Նախորդ ճամակի օրինակով, Սահակը խնդրում է Ատտիկոս եպիսկոպոսի միջնորդությունը՝ իրենց ձեռնարկած գործը հաջողությամբ ավարտելու համար:

ՍԱՀԱԿԻ ԹՈՒՂԹԸ ԱՆԱՏՈՒԿՈՍԻՆ - Նույն բովանդակությամբ է նաև այս ճամակը, որտեղ Սահակը Անատոլիոս գորավարին խնդրում է օգնել Մաշտոցին և Վարդան Մամիկոնյանին անարգել ճանապարհորդել Բյուզանդական կայսրության տարածքում:

ԹԵՈԴՈՍԻ ԹՈՒՂԹԸ ՍԱՀԱԿԻՆ - Թեոդոսը հայտնում է իր տարակուսանքը, որ Սահակը դիմել է հեթանոս թագավորների օգնությանը, իսկ Մաշտոցին ուղարկել ասորիների մոտ, սակայն ուրախանում է, որ այդ գլուխը Աստծուց է տրված: Հայտնում է նաև, որ ինքը ընդառաջ է գնում Սահակի խնդրանքներին, թողանք՝ Վարդանին, ճանակում է սպարապետ, իսկ Մաշտոցին դասում առաջին ուսուցիչների շարքը և թույլատրում կազմակերպել իր ուսուցչական գործը:

ԱՏՏԻԿՈՍԻ ԹՈՒՂԹԸ ՍԱՀԱԿԻՆ - Ատտիկոսը նույնպես իր հավանությունն է հայտնում, սակայն վերստին տարակուսում է, թե ինչու է ընկել հեթանոսների աշխարհը և չի եկել իրենց քաղաքը, որը Հովհանն Ոսկեբերան էր տվել: Ատտիկոսը հայտնում է, որ իրավունք է տրված՝ կրթական գործը սկսելու համար և որ Մեսրոպին ձեռնադրել են եկեղեցիաստիկոս (Ուղղափառ եկեղեցու առջամբ, հուն.)²¹:

¹⁹ Մ. Խորենացի, գիրք Գ, գլուխ ԽԸ:

²⁰ Մ. Խորենացի, գիրք Գ, գլուխ ԾԱ:

²¹ Մ. Խորենացի, գիրք Գ, գլուխ ԾԵ:

Բ. ԵՂԻՉԵ. ՎԱՐԴԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Եղիշեի Պատմության մեջ, բացի պատմական տվյալներից, ոսկեդեմիկ գորաբառով գրված պատմությունից, տեղ են գտել մեծ փաստացի տեղեկություններ, որոնք, ինչպես մյուս պատմիչների երկերի պարագային, լույս են սփռում մեր ուսումնասիրության և մեկնաբանության ճանապարհին: Եղիշեի Պատմության մեջ այդպիսի փաստաթղթերը չորսն են: Դրանցից երեքը հաջորդաբար կարծես լրացնում են միմյանց, քանի որ մերկայացված են գրի ու պատասխանի ձևով: Այս առաջին երեք մամուլներից երկուսը Պարսից թագավորության կողմից առաքվում են Հայոց աշխարհ, առաջինը Հազկերտ թագավորի ձեռքով, իսկ հաջորդը՝ Միհրմերսեսի: Երկրորդ մամուլն ամբողջությամբ մերկայացնում է Պարսից կրոնի թիմուքները, հավատալիքները և իրենց մերժողական փաստարկները՝ քրիստոնեական վարդապետության մկատամբ: Երրորդ մամուլը Միհրմերսեսի թղթի պատասխանն է: Այն, բացի փաստաթուղթ լինելուց, հանդիսանում է մեծ մեր Եկեղեցու աստվածաբանական փիլիսոփայական մտքի արտահայտության չքնաղ հուշարձաններից մեկը: Նրանում քայլ առ քայլ պատասխաններ են տրվում նախորդ մամուլի մերժողական կետերին, բարձրացնում ու բացարձակացնում քրիստոնեական կրոնի նշանակությունը մարդու կյանքում: Առաջին հրովարտակը, որ Հազկերտը գրում է իրեն հպատակ ժողովուրդներին, մի նպատակ էր հետապնդում. զինական ուժից զրկելով, կարողանալ իրագործել պարսից կրոնի տարածումը և քարոզումը: Չորրորդ փաստաթուղթը հայոց մարզպան Վասակ Այունու, աշխարհիկ և հոգևոր իշխանների կողմից ուղղված է Թեոդոս կայսեր: Այս թղթի կարևոր և հետաքրքիր գծերից մեկն այն է, որ հիշատակում է Տրդատի կյանքն ու թագավոր դառնալը, որը շատ է մնացել Ազաթանգեղոսի Պատմության ստորև մերկայացվող հատվածներին: Այստեղ անհասկանալի է մնում Հոռմի սուրբ եպիսկոպոսապետի պարագան, այսինքն՝ պարզ չէ, թե ո՞վ է ակնարկվում թղթում²²:

ա) Եղիշեի Պատմության մեջ առաջին վավերական թուղթը Հազկերտ արքայի հրովարտակն է, որը կապված է մոզերի այն առաջարկության հետ, թե արքան իր երկիրը կարող է ազատ և հզոր պահել, եթե բոլորին դարձնի իրենց կրոնին և իր շուրջը հավաքի հպատակ ժողովուրդներին, զորքերին՝ քուշանների դեմ կռվելու համար:

Հրովարտակը ուղղված է Հազկերտի տերության սահմաններում բնակվող բոլոր ժողովուրդներին, որոնցից անհապաղ պահանջում է զորքով գնալ իր մոտ՝ քուշանների դեմ պատերազմելու համար:

Այս հրովարտակը տրվում է Հայոց, Վրաց, Աղվանից, Կորդովաց աշխարհների նախարարներին, որոնք մեծ ուրախությամբ, համաձայն Ավետարանի այն պատգամին, թե «*Մատաներ, հնազանդ եղեք ձեր մարմնավոր տերերին*», ելնում և գնում են Պարսկաստան²³:

բ) Ահա մի մամուլ, որը պատճառ դարձավ մեծ դեպքերի՝ կատարված Հայոց աշխարհում, մի մամուլ, որի հետագա պատասխանն հավաստեց հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու աննկուն կամքն ու հոգին:

Հազկերտ արքան դեռ մոտ էր սկսել իր կրոնական բարեփոխումները, որոնք

²² Եղիշե, Վասն Վարդանա և Հայոց Պատերազմի, գլուխ Գ, էջ 74:

²³ Եղիշե, գլուխ Ա, էջ 24:

ուղեկցվում էին նախարարական տների միջև երկպառակություն մտցնելով, նախարարներին իրենց աստիճաններից զրկելով, ամարժաններից բարձրացնելով: Այդ ամենին հաջորդեց Միհրանեսիի նամակը՝ ուղղված Մեծ Հայքի Ռոզնոր և աշխարհիկ դասին: Նամակն սկսվում է դեմիմազեզական կրոնի փառաբանումով: Ներկայացվում է երկու աստվածների՝ Արամիի և Որմիդդիի աշխարհ գաղը: Այս բացատրությունն ինքնին դուալիստական հիմքեր ունի և ներկայացնում է չարին ու բարուն՝ որպես առանձին աստվածներ: Այն կարծես թե ներկայացնում է պարսկական կրոնի գլխավոր դրույթները և հավատալիքները:

Ապա սկսում է քննադատել քրիստոնեական կրոնը: Ասվում է, թե Աստված չէր կարող այնքան նախանշուտ լինել, որ մի պտղի պատճառով զրկեր մարդուն դրախտից: Ապա պահանջում է, որ չհետևեն հոռոմների կրոնին, այլ զնան իրենց տերերի՝ պարսիկների կրոնի հետևից: Վարկաբեկում է Ռոզնորականներից, պատճառաբանելով, թե նրանք անարգում են ամուսնությունը, շքեղությունը և փառքը: Չի ընդունում նաև այն, որ Աստված կարող էր մարդկանց ձեռքով խաչ հանվել:

Նամակի վերջում Հազկերտը պահանջում է կա՛մ կետ առ կետ պատասխանել նամակին, կա՛մ էլ գնալ Բարձր Դուռ և ներկայանալ Մեծ ատյանին²⁴:

գ) Միհրանեսիի նամակին անմիջապես հաջորդում է պատասխան նամակը, որն ուղարկում են Հովսեփի կաթողիկոսը և ազգի մեծամեծները:

Նամակն սկսվում է այն խոսքերով, թե Աստված իրենց պատվիրել է աղոթել տերերի համար, և իրենց հաստատ են մնացել այդ պատվիրանի մեջ: Ասվում է, որ իրենց կրոնը ծածուկ չի քարոզվում, այլ՝ բացահայտ և՛ ամբողջ աշխարհում: Աստված անսկիզբ է և մշտնջենավոր: Հերքելով առաջին նամակում տեղ գտած կետերը՝ նշում է, որ Աստված ոչ թե նախանշուտ է, այլ գթառատ, և մարդն իր անհնազանդության համար պատժվեց: Այնուհետև ներկայացվում է ողջ արարչագործության ընթացքը. թե երկիրն ստեղծվեց մարդկանց համար, երկինքը՝ հրեշտակների: Ապա հերքվում են պարսկական կրոնի դրույթները՝ դրանք համարելով առասպել և սուտ պատմություն: Մեջ է բերվում նաև մեր Եկեղեցու Հավատամքը, այն՝ ինչին հավատում ենք, երկրպագում և պաշտամունք մատուցում: Նամակի վերջին խոսքերն արտահայտում են մեր Եկեղեցու և արքունիքի անկույտ կամքը. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները, և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրբ, ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ այլ դառն հարված»²⁵:

դ) Եղիշեի պատմության երրորդ գլխում կա մի կարևոր փաստաթուղթ, որը գրվել է Հայոց մեծամեծների՝ Վասակ մարզպանի, Ներշապուհի և Հայոց Հովսեփ Հայրապետի կողմից՝ ուղղված Հունաց Թեոդոս կայսեր:

Նամակում հիշատակվում է երկու ժողովուրդների դարավոր բարեկամության մասին: Հիշվում է Տրդատ թագավորը, որը, հունաց կայսեր կողմից հաջողությունների հասնելով, հաստատվեց իր գահին: Ապա խնդրանք է հայտնվում, որ կայսրն օգնություն ուղարկի իրենց, քանի որ հույսը դրել են նրանց արիության և քաջության վրա:

Այս նամակը հենց ինքնին խոսում է Հայոց մեջ ապստամբության նախապատրաստման մասին, որն սկսվում է օգնական ուժեր և միջոցներ փնտրելով:

²⁴ Եղիշե, գլուխ Բ, էջ 35-38:

²⁵ Եղիշե, գլուխ Գ, էջ 39:

Նամակը կայսրին էր ցերկայացրել Աստուծոյ մախարադը: Սակայն դեպքերն այլ ընթացք են ստացում: Թեոդոսը մահանում է, իսկ նոր կայսրը՝ Մարկիանոսը, այլ վերաբերմունք է ցուցաբերում և սկսում գործակցել պարսիկներին հետ²⁶:

Գ. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ագաթանգեղոսի «Հայոց Պատմություն»-ն առատ է թագավորական մամակներով, հրովարտականերով: Այս երևույթը ենթադրել է տալիս, թե ինչքանով են նրանց տեղ գտած դեպքերը և իրադարձությունները հավաստի ու իրական: Այստեղ էլ երևում է Պատմության հեղինակի գրելու ոճը: Նա, գործը շարադրելիս, հարմար է գտել ամենան չողողել նաև դիվանական վավերագրերը: Անշուշտ, չենք կարող ասել, թե այդ հրովարտականներից քանիսն են պատմականորեն վավերական թե՛ ժամանակային և թե՛ հեղինակային պատկանելության առումով:

Պատմությունը պարունակում է հինգ այդպիսի փաստաթղթեր, որոնք հենց հեղինակի կողմից հրովարտակ են անվանվում: Սրանք իրենց պարունակությամբ շատ զծերով մեծ են առաջին դարերի քրիստոնեական հալածանքների ժամանակ գրված հրովարտականներից, որտեղ քրիստոնեությունը անվանվում է «աղանդ» և խիստ հալածանքի են ենթարկվում նրա հետևորդները՝ որպես աղանդավորներ: Նրանց ունեցվածքը և ինչքը պետք է արքունիք հանձնվեր, իսկ եթե որևէ մեկը փորձեր թաքցնել քրիստոնյաներին, նույն պատժին կարժանանար:

Հաջորդ փաստաթուղթը նույնպես կապված է քրիստոնյաներին հալածելու հետ: Նամակը գրում է Հունաց Դիոկղետիանոս կայսրը Հայոց Տրդատ թագավորին:

Հաջորդ երկու փաստաթղթերը պարունակում են Հայոց Տրդատ արքայի քրիստոնեական բարձր զգացումները և զղջումը, ինչպես նաև Գրիգորին իրենց վրա հովվապետ տեսնելու ցանկությունը արտահայտող թուղթը և այդ թղթի պատասխանը Կեսարիայի եպիսկոպոս Ղևոնդիոսի կողմից, որպես սրտի և հոգու ուրախության արտահայտություն՝ հեթանոսական վիճակից դեպի լույս գնացող նորադարձների համար:

ա) Թագավորական առաջին հրովարտակը Տրդատ արքան գրում է Գրիգորին խոր վիրապում բանտելուց հետո:

Այս հրովարտակը մեծ է ժամանակի արքաների գրվածքներին՝ իր կանոնական կառուցվածքով: Սկսվում է ողջույնով՝ ուղղված իր տերության բոլոր դասերին և ցանկանում է խաղաղություն, լիություն և առատություն իրենց աստվածներից՝ Արամազդից, Անահիտից, Վահագնից: Ապա անցնում է բուն թեմային, այսինքն՝ պետք է ավելի ու ավելի շատացնել աստվածներին կատարվող զոհաբերությունը, միջրատվությունը, որպեսզի փոխադարձաբար նույնը ստանան աստվածներից: Զգուշացնում է հեռու մնալ նրանցից, ովքեր արհամարհանք են ցուցաբերում իրենց աստվածների նկատմամբ: Պահանջում է, որ այդպիսիներին բերեն Արքունի դուռը, իսկ նրանց ինչքը և ստացվածքը ամբողջությամբ տան նրան, ով հայտնաբերել է մեծ մեկին:

Նամակը դարձյալ վերջանում է զգնության և խաղաղության խնդրանքով²⁷:

²⁶ Եղիշե, գլուխ Գ, էջ 74:

²⁷ Ագաթանգեղոս, հմր. 126-131:

բ) Տրդատի առաջին հրովարտակին անմիջապես հաջորդում է երկրորդը. որը որոշ չափով տարբերվում է առաջինից: Եթե առաջինում խոսվում է ընդհանուր երևույթների մասին, որ կարող էր պատահել երկրից մերս, ապա երկրորդով կենտրոնացնում է «քրիստոնեական աղանդի» հետևորդների վրա՝ պատվիրելով նրանց գտնողներին անմիջապես արքունիք քերել, որի դիմաց վերջիններս մեծ պարգևներ և շնորհներ կստանան: Տրդատը հիշում է նաև Գրիգորի անունը, թե չի խնայի ոչ մեկին հանուն իրենց աստվածների, ինչպես չխնայեց Ույցիսկ իր ամենամտերիմ թարեկամներին, որոնցից էր Գրիգորը:

Այս հրովարտակների մախապատմությունը սերտորեն կապված է Գրիգորի. որպես քրիստոնյա վկայելու, չարչարվելու և խոր վիրապ մետվելու հետ: Հրովարտակները խոսում են նաև այն մասին, որ Գրիգորի ժամանակ արդեն կային քրիստոնեական համայնքներ, որոնք մտահոգության պատճառ էին դարձել Տրդատի համար: Այս հրովարտակները շատ ընդհանուր գծերով մնան են նաև Հռոմեական կայսրերի՝ քրիստոնյաների հալածանքի ժամանակ գրած հրովարտակներին²⁸:

գ) Հռիփսիմյանց կույսերի, Դիոկղետիանոս կայսեր կողմից հալածվելուց հետո, Հայաստան գալու հետ է սերտորեն առնչվում կայսեր մամակը՝ ուղղված Տրդատ արքային: Նամակում նորից խոսվում է «քրիստոնյա խաբեբա աղանդի» մասին, որը մեծ չարիքներ է պատճառել իր կայսրությանը: Ապա տեղեկացնում է նրանց «սին և դատարկ» հավատի մասին, որն ունեն մի ում խաչյալ հրեայի նկատմամբ:

Դիոկղետիանոսը տեղեկացնում է նաև, որ քրիստոնյաների մեջ մի գեղեցիկ օրիորդ է տեսել և ցանկանում է նրան իր կինը դարձնել. սակայն ընկերակիցները նրան փախցրել են Հայաստան: Կայսրը խնդրում է, որ եթե Տրդատը գտնի, ուղակի իր մոտ, իսկ եթե նրան հաճելի թվա, պահի իրեն:

Ահա մի գրավոր փաստ, որը ցույց է տալիս Հռոմեական իշխանության տակ եղած քրիստոնյաների հալածանքները, նրանց ուսմունքի մասին ունեցած ոչ ճիշտ պատկերացումը: Երևում է նաև Հռոմեական վերնախավի անդամների անբարո և զեխ բարքը²⁹:

դ) Ագաթանգեղոսի Պատմության մեջ տեղ է գտել մի վավերական փաստաթուղթ, հրովարտակ, որը Տրդատ արքան ուղարկում է Կեսարիայի եպիսկոպոս Դեոդոտոսին: Մի երևույթ, որը շատ բնական էր ընդհանրական եկեղեցու համար, երբ հավատադալ համայնքը խնդրանքով առավել հայտնի և հեղինակավոր կենտրոններից կա՛մ առաջնորդ էր խնդրում, կա՛մ էլ ուղարկում էր իր թեկնածուներին՝ ձեռնադրություն ստանալու համար: Այս պարագայում, անշուշտ, չկար և չէր կարող խոսվել անգամ եկեղեցիների՝ մեկը մյուսի նկատմամբ գերազառություն ունենալու համգամանքի մասին: Ըստ Ագաթանգեղոսի, դեպքերն այնպիսի ընթացքով են զարգանում, որ հասունանում է պահը հոգևոր առաջնորդ ունենալու, և այդ թեկնածուն Գրիգորն էր: Տրդատը, Գրիգորին Կեսարիա ուղարկելու հետ մեկտեղ, մի հրովարտակ է ուղարկում:

Հրովարտակն սկսում է անձնական մեղքերի, տգիտության խոստովանությամբ և թե ինչպես Աստծուց ուղարկվել էին մահադատվածները (Հռիփսիմյանց կույսերը)՝ այդ խավարն իրենց միջից հանելու և լույսով լցնելու համար: Սակայն

²⁸ Ագաթանգեղոս, Բմբ. 152-156:

²⁹ Նույն տեղում:

իրենց չհասկացան և չընդունեցին լույսը, որի պատճառով քաղում պատուհասների արժանացան, իսկ արդյունքում՝ ողորմածություն գտան Գրիգորի աղոթքներով: Գրիգորն իրենց դուրս բերեց հայրերի ունեցած սնուտի հավատից և ցույց տվեց Աստվածային պատվիրանները:

Հրովարտակի վերջում ներկայացվում է Տրդատի և ողջ արքունիքի խնդրանքը, որպեսզի Ղևոնդիոս Հայրապետը «մեզ գԳրիգոր տեսուչ եւ վարդապետ առաջնորդութեան աստուածագնաց ճանապարհացն, եւ հոփի եւ բժիշկ կացուցիք, որպէս և մեզ յԱստուծոյ հրամայեցաւ»³⁰:

Եյ Պատմության մեջ Տրդատի՝ Ղևոնդիոսին ուղղված թղթից մի փոքր հետո է տեղ գտել պատասխան նամակը, չնայած որ պատմիչը Գրիգորի՝ Հայաստան վերադառնալու մասին գրելիս հիշում է նաև այս թղթի պատմությունը՝ «մեծաւ պատուով եւ թղթով եւ ժողովով գտուբն Գրիգորիոս անդուստ յողարկեցին իշխանօքն հանդերձ»³¹:

Թղթում արտացոլվում է Ղևոնդիոս Հայրապետի դիրքորոշումը՝ կապված Հայաստանում կատարված վերջին իրադարձությունների հետ: Ուրախ է, որ երկիրն արթնացավ քնից, հրաժարվեց կուռքերի պաշտամունքից և դարձավ ճշմարիտ Աստծուն: Նշում է նաև մահատակների (Հոփսիսիյանց կույսերի) և Գրիգորի կատարած մեծ գործը՝ ժողովրդին դարձի բերելու հարցում³²:

Դ. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ղազար Փարպեցու «Հայոց Պատմության» մեջ, որպես պատմական փաստ և վավերական ապացույց, հանդիսանում է Հազկերտ արքայի նամակը՝ ուղղված հայոց ավագանուն, ինչպես նաև հայ մեծամեծների՝ իշխանների, հոգևորականների պատասխան նամակը: Այս երկու նամակներն իրենց բովանդակությամբ շատ նման են Եղիշեի գործի մեջ գրված նամակներին: Տարբերությունն այն է, որ Ղազար Փարպեցու մոտ Հայոց մեծամեծներին նամակը գրում է Հազկերտ արքան, իսկ Եղիշեի մոտ՝ Միհրներսես հազարապետը:

Փարպեցու գործին կից է նաև իր Թուղթը՝ ուղղված մարզպան Վահան Մամիկոնյանին: Այն իր ծավալով ու բովանդակությամբ ամենամեծն ու ամենաընդարձակն է՝ մեջբերված մյուս նամակների հետ համեմատած: Նամակի նախնական ուսումնասիրությունների մասին մենք խոսեցինք ներածության մեջ, ուստի, կրկնությունից խուսափելու համար, անցնենք նամակների քննարկմանը:

ա) Պատմության առաջին վավերական փաստաթուղթը հանդիսանում է երկրորդ դրվագում տեղ գտած, Միհրներսես հազարապետի դրդումով Պարսից արքայի Հայոց ավագանուն գրած հրովարտակը:

Նամակում Հազկերտ արքան ասում է, որ տերերը պիտի մտածեն իրենց հպատակների ոչ միայն մարմնի, այլ նաև հոգիների մասին: Ուստի պահանջում է, որ իր ծառաներն ընդունեն և պաշտեն իրենց օրենքներն ու հավատալիքները: Ապա պահանջում է պատասխան նամակում գրել իրենց սուտ կրոնի մասին, որից երկար ժամանակ խաբված են եղել³³:

³⁰ Ագաթանգեղոս, հմբ. 797-801:

³¹ Ագաթանգեղոս, հմբ. 806:

³² Ագաթանգեղոս, հմբ. 820-826:

³³ Ղազար Փարպեցի, «Հայոց Պատմություն», Բ դրվագ, ԻԲ, էջ 97:

բ) Հայոց ավագանին հոգևոր դասի հետ ժողով է գումարում և պատասխան ամսակ ուղարկում Հազկերտի հրովարտական:

Նամակում ասվում է, որ իրենք Աստծուց ստացել են այն պատգամը, թե ծառաները հյու հնազանդ պիտի լինեն իրենց տերերին, և ամեն կերպ պահում են այդ պատվիրանը: Նրանց ամենևին էլ թող չհուզի իրենց հոգիների փրկության հարցը: Իրենք պաշտում են տիեզերքի Արարչին, և ոչ ոք չի կարող իրենց հեռացնել այդ հավատից: Ապա խոսք է գնում մեկ պարսկական կրոնի մասին, որի մասին հարկ չեն համարում գրել՝ մրան հակառակ չորսը բարբաջանք, որի մասին հարկ չեն համարում գրել: Ասում են միայն հետևյալը. ներկայացնելով քրիստոնեական վարդապետությունը: Ասում են միայն հետևյալը. որ մրանց պատվող տարերքները, մյուսները ամենևին էլ աստված չեն և արժանի չեն երկրպագության, այլ այդ պատիվը պիտի մատուցվի երկնքի և երկրի Արարչին³⁴:

ՂԱԶԱՐԻ ԹՈՒՂԹԸ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ

գ) Ղազար Փարպեցու «Հայոց Պատմության» ամբածան մասը կազմող «Թուղթը», իր երկարաշունչ բովանդակությամբ, մեզ շատ բանով օգնում է՝ տեղեկություններ քաղել գործի հեղինակի՝ Ղազար Փարպեցու կյանքի, ինչպես մեկ մրա ժամանակներում տիրող եկեղեցական, կրոնական ընթերցումների մասին:

Թուղթն ուղղված է ժամանակի Հայոց մարզպանին՝ վահան Մամիկոնյանին և ներթողվում են մրա արժանիքներն ու աստվածատուր շնորհները:

Ղազարը հիշեցնում է իր անցած կյանքը, մանկությունը, կրոնավորի երիտասարդ տարիքը, տարբեր տեղերում ճգնափորի կյանքով ապրելը և այլն:

Հեղինակը հիշում է այն ամենը, ինչ կատարել են իր հանդեպ՝ այդ ամենի պատճառ համարելով չար մախանձը: Նախանձը դեռ արարչագործության ժամանակներից էր բույն դրել մարդու մեջ: Հիշում է այն բոլոր Հիմկտակարանյան պատկերները, դեպքերը, որոնք կապված են մախանձի արտաբանության հետ: Իսկ ավելի շատ կենտրոնացնում է հրեա ժողովրդի՝ Հիսուսի նկատմամբ ունեցած մախանձի վրա, որն էլ մրանց մեջ Աստծո Որդուն խաչը հանել: Իսկ իր շուրջ գտնվողները, մախանձով լցված, չարախոսում են իր մասին: Նա ներկայացնում է մրանց բոլոր փաստարկները:

Ոմանք Ղազարի մասին ասում են, թե մա պոռնկությունը մեղք չի համարում: Այս խոսքերի դեմ մեծ է Ղազարի պոռնկությունը: Մի՞թե ինքն ամուսնյակ է մովսիսական օրենքին, Ս. Գրքի և Քրիստոսատուր պատվիրաններին, որտեղ դատապարտվում է պոռնկությունը՝ համարվելով ամենագարշելի մեղքերից մեկը: Ապա հարցնում է, թե այդ ամբարիշտները որտե՞ղ, ե՞րբ, ո՞ւմ մոտ են լսել իրեն՝ այդ ամենը քարոզելիս: Մրան հաջորդում են Ս. Գրքի այն բոլոր վկայությունները, որոնք բերում է Ղազարը՝ պոռնկության մեղքի մեծությունը ցույց տալու համար:

Ոմանք Ղազարին անվանում են աղանդավոր (մա չի հիշում աղանդի անունը): Ղազարը մորից դեմ է դուրս գալիս այս ամբաստանությանը: Մա ուսանել էր հունական գիտությունը և քաջածանոթ էր վերջինիս: Կարդացել էր Քրիստոնեական եկեղեցու մեծ հայրերի գործերը, կրթվել և սնվել էր մրանցով, և, այդ

34 Ղ. Փարպեցի, Բ դրվագ, ԻԴ, էջ 103:

ամենից հետո, չէր կարող շեղվել ճշմարտության ճանապարհից ու հետևել որևէ աղանդավորական ուղղության: Որպես իր ասածների ապացույց և հաստատում, նա նույնպես ճշտվում է այն բոլոր հերձվածներից, աղանդավորներից, որոնց եկեղեցից ժամանակի ընթացքում կտրել է իր հետ հաղորդակցությունից:

Ոմանք ասում են, թե ուր պիղծ և չարագործ մարդ կա. Ղազարը նրա մոտ է լինում, և սիրում է մամնների: Փարպեցի՞ն նորից ընդդիմանում է այս անհիմն հայտարարությանը՝ ասելով, որ Վահանը շատ լավ է ճանաչում այն իշխաններից, որոնց հետ ինքը բարեկամություն է անում, և նրանցից ոչ մեկը գող ու խաբեբա չէ: Ղազարն արդարանում է նաև կաթողիկե եկեղեցու հետ կապված հաշիվները ճշտելու մեջ: Նա ասում է, որ ինքը հատկացվածից ավելից չի վերցրել վաճառքից, և դեռ հակառակը, խնայողաբար ծախսելով՝ մնացածը թողել է նրա կարիքների համար: Իր ասածը հաստատելու համար վկայակոչում է մի քանի անձանց, ովքեր վաճառքում իր հետ են եղել:

Ղազարին ամբաստանում էին նաև այն բանում, թե մի մանուկ չի կարող վաճառքի հոգաբարձու լինել: Սակայն նրանք մոռանում են այն բոլոր գործերը, որ Ղազարը արել էր վաճառքի համար: Բոլորը վաճառքի ունեցվածքը ծախսում էին իրենց անձնական պետքերի վրա, իսկ Ղազարը, մեղվի պես աշխատելով, լցնում էր պակասը:

Փարպեցի՞ն գանգատվում է նաև վերին իշխանությունների՝ իր նկատմամբ ցուցաբերած անտարբերության համար: Նա հիշում է, թե ինչպես գանգատի թուղթ էր ուղարկել ազգի Հայրապետին (անուրը չի հիշվում), իսկ նա պատասխանել էր, թե ինքը վախենում է Ղազարին օգնելուց, զգուշանալով, թե դրանով ինքն էլ կընկնի ամբաստանության մեջ:

Փարպեցի՞ն բողոքում է նաև իր ժամանակի հոգևորականների կրթության նկատմամբ ունեցած անտարբեր վերաբերմունքի դեմ: Նա հիշում է Հունաստանը, որտեղ քարոզելիս նույնիսկ երեխաները, իրենց այրերի գրկերում, ուրախանում են իմաստային խոսքեր լսելուց: Իսկ Հայոց աբեղաները գլխարկներ ամուր քաշում են իրենց գլխերից, որպեսզի իմաստություն չմտնի: Չարախոսում և վատաբանում են այն շնորհաշատներից, որոնք Աստծուց ստացել են քարոզելու և ուսուցանելու շնորհը:

Ոմանք ամբաստանում են, թե Ղազարը Ս. Գրիգոր չի կարդում, սակայն ընթերցվածն այնպես անսայթաք է ասում, ինչպես Ս. Գրքի մեջ է ասված: Մի՞թե նրանք չեն հասկանում, որ ավելի աստվածահաճո է Դավթի Սաղմոսներն անգիր իմանալ և պաշտամունքի ժամանակ ասել, քան գիրքը ձեռքին այլ և այլ բաների մասին մտածել (խոսքը վերաբերում է նրանց, ովքեր հագիվ են պատկերացում կազմում Ս. Գրքի և նրա կանոնի վերաբերյալ):

Ղազարը, իրեն մեղավոր համարելով, արժանի է գտնում, որ այդ բոլոր մեղադրանքները և հալածանքներն ուղղվեին իր դեմ: Սակայն մահն հալածանքների արժանացան նաև այնպիսի լուսավոր և երանելի հայրեր, ինչպիսիք էին Մովսես Փիլիսոփան, Խոսրովիկը, Աբրահամ եպիսկոպոսը, Ներսես և Սահակ Հայրապետները և ուրիշներ:

Նամակի վերջում Ղազարը խնդրում է Վահանին մերել իրեն, եթե իր կարծիքները ստույգ չլինեն³⁵:

³⁵ Ղ. Փարպեցի, «Ղազարի թուղթը Վահան Մամիկոնյանին», էջ 451:

Ե. ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒՉԱՆԴ. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Փափստոս Բուզանդի Պատմության մեջ, ինչպես Փարպեցու գործում մամականերն ու թագավորական հրովարտականքը մեծ թիվ չեն կազմում, իսկ եղածներն էլ շատ կարճ են և այնքան էլ հստակ պատկերացում չեն տալիս մեզ՝ տվյալ դեպքի մեկնաբանության համար:

Իր ոճով և բովանդակությամբ առանձնանում է Մանուել (Մուշեղ) Մամիկոնյանի մամակը՝ ուղղված Վարազդատ թագավորին, և նրա պատասխանը:

ա) Այս մամակն առաջին վավերական փաստաթուղթն է, որ գտնվում է Պատմության երրորդ դպրության մեջ: Մի չնչին պատճառով Տիրանը գերվել էր Պարսից արքայից: Զարմացած հայերը, հույների հետ միասին, պատերազմում են Օապուրի արքայի դեմ, հաղթում և շատ գերիներ ու ավար վերցնում: Օապուրը զղջում է իր արածի համար և իր գերիներին է խնդրում Հունաց Վաղես կայսրից: Վաղեսը Օապուրին մի մամակ է ուղարկում:

Նամակում Վաղեսը պահանջում է, որ գերված Տիրան արքային և մյուս գերիներին ազատ արձակի, որից հետո ինքն էլ բաց կթողնի Օապուրի գերիներին³⁶:

բ) Ըստ Բուզանդի, Արշակի և Պարսից Օապուրի արքայի միջև կնքված խաղաղությունը փոխվել էր թշնամության, չնայած որ Օապուրը բազմիցս այն վերականգնելու նպատակով դիմում էր Արշակին, քանի որ պատերազմի մեջ էր գտնվում հույների հետ: Դեպքերն այնպիսի ընթացք են ստանում, որ խաղաղություն է կնքվում Հունաց և Պարսից միջև, և այդ առիթով Հունաց կայսրը մի մամակ է գրում Օապուրին:

Նամակում կայսրն ասում է, որ Օապուրին է հանձնում Մծբինը, ապա հրաժարվում է Հայաստանի ներքին նահանգներից: Եթե կարող է, թող գրավի, ինքը նրանց չի օգնելու³⁷:

գ) Պարսկական գեղությունից վերադառնում է Մանուել Մամիկոնյանը: Լսելով իր ելբոր՝ Մուշեղի դավադրաբար սպանվելու լուրը Վարազդատ թագավորի ձեռքով, գայրացում է, հեռանում թագավորից և մի մամակ գրում:

Նամակում Մանուելը հիշեցնում է իր տոհմի՝ Մամիկոնյանների արած քաջագործությունները, որոնց վարձը եղավ Մուշեղի սպանությունը: Ապա Վարազդատին անվանում է պոռնկությունից ծնված և հրաժարվում նրան ենթարկվել, հիշեցնելով ժենաց աշխարհում իրենց ունեցած դիրքը:

Մանուելի մամակին պատասխան է գրում նաև Վարազդատը: Նա իրեն անվանում է իսկական Արշակունի և արդարանում Մուշեղին սպանելու հարցում, որպես վրեժ Պապ թագավորի համար: Ապա պահանջում է, որ Մանուելը հեռանա իր առած ժենաց երկիրը, այլապես կսպանվի իր ձեռքով³⁸:

36 Փափստոս Բուզանդ, III դար., գլուխ ԻԱ, էջ 91:

37 Փ. Բուզանդ, IV դար., գլուխ ԻԱ:

38 Փ. Բուզանդ, V դար., գլուխ ԼԵ, էջ 367:

3. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆ

*Փիլիսոփայական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ՀԱՂԱՎԱՅ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎՈՒՆՔՆԵՐԸ*

Վաղուց ի վեր ինձ անհավատալի է թվացել հայագիտության մեջ քաղաքացիությունը ստացած այն տեսակետը, թե իբրեւ հայ մշակույթի ու տեսական մտքի պատմության մեջ 15-րդ դարից մինչև 18-րդ դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածը /ավելի քան երկուսուկես դար/ եղել է դատարկության ու ամայության, իսկ 18-րդ դարի երկրորդ կեսը, հանձին հնդկահայ լուսավորականության, նոր, բուրժուական մտածողության ծաղկման շրջան: Նման մոտեցմամբ անպատասխան է մնում այն հարցը, թե ինչպես կարող էր, այդքան երկարատև ամայությունից հետո, տեսական միտքը հանկարծակի արթնանալ դարավոր քնից ու միանգամից տալ այնպիսի կոթողային գործեր, ինչպիսիք են Մովսես Բաղդամյանի «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ»-ը, Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ը, հայ անդրանիկ պարբերական «Ազդարար»-ը և այլն: Գիշտ է, առանձին հայագետներ իրավացիորեն փորձել են կապ տեսնել հնդկահայ և արևմտաեվրոպական /ֆրանսիական ու անգլիական/ լուսավորականության միջև, բայց, միևնույն է, դրանով հնդկահայ լուսավորականության ազգային գաղափարական-տեսական ակունքների հարցը չի լուծվում:

Ընդդեմ երեքուկես տասնամյակ է, ինչ զբաղվում եմ 17-18-րդ դդ. հայ փիլիսոփայության ու մշակույթի պատմության ուսումնասիրությամբ, որի արդյունքներից մեկը ես համարում եմ վերոհիշյալ հարցին իմ գտած կամ տված պատասխանը: Ես եկել եմ այն անխախտ համոզման, որ անհնար է լիովին հասկանալ ու բացատրել հնդկահայ լուսավորականության առաջին հայացքից անհավատալի թվացող երևույթը՝ առանց բացատրելու ազգագրական, տնտեսական, գաղափարական, հոգևոր ու մշակութային այն սերտ կապը, որ գոյություն է ունեցել հնդկահայ և ջուղահայ գաղթօջախների միջև: Բերենք այդ կապը վեր հանող մի քանի փաստեր.

ա/ Ֆիզիկական իմաստով հնդկահայ գրեթե բոլոր գաղթօջախները, կամ, որ միևնույն է, հնդկահայերի ճնշող մեծամասնությունը, ուղղակիորեն սերում էր Նոր Զուղայից: Ընդ որում ջուղահայերը Հնդկաստանում հաստատվել էին ամենատարբեր պատճառներով՝ շատերը տեղափոխվել էին պարզապես որպես առևտրականներ, իմանք մեկնել էին՝ իրենց կյանքն ու գույքը փրկելու

* Այս տարի լրացան հնդկահայ ակադավոր լուսավորիչ Շահամիր Շահամիրյանի ծննդյան 275 և նրա հեղինակած «Որոգայթ փառաց» կոթողային երկի 225-ամյակները: Այդ առիթով «Սահմանադրական միությունը» 1998 թ. հոկտեմբերի 6-ին կազմակերպել էր գիտական սեմինար: Սույն հոդվածը, որպես զեկուցում, կարդացվել է նաև այնտեղ:

համար /սրանցից էր, օրինակ, Շահամիր Շահամիրյանը/, ուրիշները գնացել էին հարազատների մոտ ու չէին վերադարձել և այլն:

բ/ Այդ էր պատճառը, որ խոստում էին նույն լեզվով՝ արևելահայերենով, ունեին նույն սովորույթները, բարքերը, նիստ ու կացը:

գ/ Հոգևոր իմաստով ևս կապված էին նոր Ջուղայի հետ, սնվում էին այնտեղից: Բավական է ասել, որ մինչև մեր դարի առաջին տասնամյակները հնդկահայ համայնքները մտնում էին պարսկահայոց թեմի մեջ, ենթարկվում նրան: Ուստի հնդկահայերը ազգամիջոց որևէ գործ ձեռնարկելիս անպայման տեղյակ էին պահում պարսկահայոց թեմի առաջնորդին, անգամ իսկ էջմիածնի Կաթողիկոսին ուղարկած փաստաթղթերի կրկնօրինակն ուղարկում Նոր Ջուղա:

Հիշյալ երկու գաղթօջախների կապը ճիշտ հասկանալու և բացատրելու համար հարկ են համարում մի քանի խոսքով ներկայացնել, աշխարհապիտու հայ գաղթօջախների շարքում, ջուղահայ գաղթօջախի կարևոր առանձնահատկություններից մի քանիսը, որոնք, ցավոք, երկար ժամանակ վրիպել են հայագետների ուշադրությունից:

ա/ Ի տարբերություն հայկական մյուս գաղթօջախների, Նոր Ջուղան ստեղծվել էր ոչ թե դարերի ընթացքում տեղի ունեցած «կամավոր» արտագաղթի հետևանքով, այլ միանգամից, շահաբասյան հայտնի բռնագաղթով: Ինքնընտանիքային հասկանալի է, որ նույնը չի կարող լինել հայրենիքից «կամավոր» արտագաղթածի և բռնությամբ քշվածի վերաբերմունքն այդ նույն հայրենիքի հանդեպ: Ճիշտ է, «կամավոր» արտագաղթը նույնպես բռնության ինչ-որ երանգ ունի, բայց և այնպես դա անհամեմատ ավելի մեղմ է, որովհետև վերջնական վճիռը կայացնում է արտագաղթողն ինքը, մի բան, որ չի կարող անել բռնագաղթվողը: Այստեղից էլ ջուղահայերի բացառիկ մտահոգությունն ու անհանգստությունը հայրենիքի բախտի ու ճակատագրի համար, նրանց նախանձախնդրությունը հայրենի մշակույթի զարգացման գործում: Բազմաթիվ փաստերից բերեմ միայն մեկը. 1512 թվականից մինչև 1800 թ. լույս տեսած հայերեն գրքերի թիվը հասնում է 1061-ի¹: Իմ մոտավոր հաշվումներով, դրանցից շուրջ 450-ը տպագրվել է կամ Նոր Ջուղայում, կամ նորջուղայեցիների բացած տպարանում, կամ նրանց դրամական աջակցությամբ:

բ/ Նոր Ջուղայի հայկական գաղթօջախը գոյացել էր ոչ թե միայն Հին Ջուղայի մեխանիկական տեղափոխմամբ, այլ այնտեղ հաստատվել էր նաև Հայաստանի այլ վայրերից բռնությամբ տեղափոխվածների սերունդը և հատկապես ունևոր առևտրական դասը: Այս է պատճառը, որ Նոր Ջուղայում ծնված ու ապրած գործիչներից շատերը, ի հիշատակ ծնողների ու պապերի ծննդավայրի, իրենց կոչել են ոչ թե ջուղայեցի, այլ Երևանցի /Ավետիս, Ոսկան, Թադեոս/, Դաշտեցի /Ատեփանոս Դաշտեցի/ և այլն: Ըստ այսմ առանց վարանելու կարող ենք ասել, որ Նոր Ջուղայի տնտեսական, հոգևոր, մտավոր ու գաղափարական ներուժն ստեղծվել էր ոչ թե Նոր Ջուղայում, այլ մայր հայրենիքում, և եթե չլինեք մեծ բռնագաղթը, ապա այն ավելի վաղ ու ավելի

¹ Տե՛ս Ն. Ոսկանյան, Զ.Կորկոտյան, Ա.Սավալյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան, 1988:

ուժեղ ձևով կարող էր ծաղկել հենց մայր հայրենիքում: Իմ այս եզրակացությունը հաստատող փաստերը շատ են, բայց հարկ չեմ համարում այստեղ ծանրանալ դրանց վրա²:

գ/ Նոր Տուղան մոտ էր պարսից մայրաքաղաքին, որով և պայմանավորված էր նրա քաղաքական ակնհայտ ազդեցությունը հայրենիքի, մասնավորապես՝ Էջմիածնի վրա, իսկ տնտեսապես բոլոր գաղթօջախներից ամենից հզորն էր, այստեղից էլ՝ նրա տնտեսական ազդեցությունը: Այդ էր պատճառը, որ 17-րդ դարի առաջին քառորդից մինչև 18-րդ դարի առաջին քառորդը, շուրջ մեկ դար, Էջմիածնի գրեթե բոլոր Կաթողիկոսներն ընտրվել են ջուղահայերի կամքով ու ցանկությամբ և հիմնականում՝ Նոր Տուղայից: Հայրենիքի վրա Նոր Տուղայի հայկական գաղթօջախի գործած այդ վճռորոշ ազդեցությունն սկսում է թուլանալ 18-րդ դարի առաջին քառորդում, երբ զանազան պատճառներով սկսել էր խամրել նախորդ դարի ծաղկուն գաղթօջախը:

դ/ Ցավոք, մայր հայրենիքից բռնությամբ Նոր Տուղա տեղափոխված տնտեսական, մտավոր ու հոգևոր ներուժն այստեղ ևս չկարողացավ լիովին դրսևորել իր ներքին բոլոր կարողություններն ու հնարավորությունները: Բանն այն է, որ 17-րդ դարավերջին և հատկապես 18-րդ դարի առաջին կեսին Իրանում սկսեց աստիճանաբար ուժեղանալ եվրոպական և հատկապես անգլիական ազդեցությունը, որը խիստ բացասաբար անդրադարձավ ջուղահայ գաղթօջախի, ուստի և՛ մայր հայրենիքի վրա: Այսինքն՝ ջուղահայ առևտրական կապիտալը, չունենալով սեփական քաղաքական իշխանություն, չկարողացավ դիմանալ քաղաքականապես հզոր մրցակցի ճնշմանը, ուստի հարկադրված էր տեղափոխվել ազատ գործունեության համար համեմատաբար բարենպաստ երկրներ՝ Հնդկաստան, Հնդկաչին, Ռուսաստան, մասամբ՝ Իտալիա և եվրոպական այլ երկրներ: Նոր Տուղայի առևտրական կապիտալի արտահոսքի գործընթացն ավելի սաստկացավ 18-րդ դարի առաջին տասնամյակներում՝ Իրանում ստեղծված քաղաքական ու կրոնական անբարենպաստ պայմանների, ինչպես նաև աֆղանների ներխուժման և հատկապես Նադիր Շահի գործադրած բռնությունների հետևանքով:

Ինչպես արդեն ասվել է, Նոր Տուղայի առևտրական կապիտալը, բռնելով արտագաղթի ուղին, հիմնականում հանգրվանեց Հնդկաստանում և Ռուսաստանում: Իմ կարծիքով դրանով պետք է բացատրել պատմական այն կարևոր իրողությունը, որ 18-19-րդ դարերում հենց այդ երկրների հայկական գաղթօջախներում բուռն զարթոնք ապրեց հայ ազգային-ազատագրական միտքը: Փաստորեն թե՛ հնդկահայ /Մադրաս, Կալկաթա/ և թե՛ ռուսահայ /Մստրախան, Մոսկվա, Պետերբուրգ/ գաղթօջախներն ըստ էության սերում էին Նոր Տուղայից, նրա ուղղակի և անուղղակի շառավիղներն էին, ուստի նրանից էին ժառանգել նաև իրենց ջերմ հայրենասիրական ոգին ու ազգային-ազատագրական գաղափարները: Քանի որ հետագայում խոսելու եմ միայն հնդկահայ լուսավորիչների ու ջուղահայ գաղթօջախների գաղափարական կապերի

² Թանկացողները դրանց կարող են գտնել «17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի ճննական վերլուծություն» /Երևան, 1983/ իմ մեմագրության մեջ:

ու առնչությունների մասին, ուստի ռուսահայերի մասին հարկ եմ համարում նշել միայն, որ Լազարյան գերդաստանից ազգանվեր գործունեությամբ աչքի ընկած գրեթե բոլոր նշանավոր դեմքերը՝ Աղազար Լազարբեքի Լազարյանը /1700-1782/ և նրա որդիներ Գովհաննես /1753-1801/, Մինաս /1737-1908/, Խաչատուր /1741-1774/ և Գովակիմ /1743-1826/ Աղազարի Լազարյանները ծնվել էին Նոր Ջուղայում: Գիշենք, որ, հենց Գովհաննես Լազարյանի կտակի համաձայն, նրա եղբայր Գովակիմ Լազարյանը 1815 թ. բացեց հռչակավոր Լազարյան ճեմարանը: Բնավ պատահական չէ, որ Աղազարի թոռներից Եղիազար Գովակիմի Լազարյանը, թեև ծնվել ու դաստիարակվել էր ռուսական իրականության մեջ, բայց և այնպես դարձավ հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր դեմքերից մեկը:

Ինչ վերաբերում է հնդկահայ լուսավորիչներին, ապա վերջիններս գրեթե անխտիր կերպով սերում էին Պարսկաստանից: Նրանցից Գովսեփ Էմինը Դամադանից էր, Դարություն Շմավոնյանը՝ Շիրազից, Շահամիր Շահամիրյանը՝ Նոր Ջուղայից, իսկ Մովսես Բաղրամյանը, թեև Ղարաբաղից էր, բայց առժամանակ քահանայագործել էր Նոր Ջուղայում:

Տեղափոխվելով Գնդկաստան, նրանք շարունակում էին կապ պահպանել Նոր Ջուղայի հետ, հոգեպես ու գաղափարապես սնվել նրանից: Այդ մասին ուղղակիորեն վկայում են հնդկահայ ականավոր լուսավորիչներից ռմանք: Օրինակ, հայ առաջին պարբերական «Ազարար»-ի հիմնադիր Դարություն Շմավոնյանը 1812 թ. Մադրասում հրատարակված «Գիրք սրբազնագործութեան» մեծարժեք երկի առաջաբանում ասում է, որ անցյալ դարերում փայլած մեր սուրբ հայրերից շատերն իրենց մատյաններում մեզ ուսուցանում էին ճշմարիտ հավատ և ուղիղ վարք: Նման մատյանների շարքում Դարություն Շմավոնյանը կարևորում է հատկապես 17-րդ դարի ջուղահայ նշանավոր մտածող Գովհաննես Սրբուզ Ջուղայեցու խնդրո առարկա աշխատությունը: Վերջինս Շմավոնյանի մոտ հայտնվել էր դեռևս 1788 թ., և այդ օրվանից ականավոր լուսավորիչը մեծ ցանկություն է ունեցել «ի լոյս ընծայել զայս պատուական մատեան տպագրութեամբ»:

Ուշագրավ է, որ 1788 թվականից իր ձեռքի տակ ունենալով Գովհաննես Ջուղայեցու հիշյալ երկը և շուրջ քսան տարի զբաղվելով տպագրական գործունեությամբ, Շմավոնյանը, ամենայն հավանականությամբ նյութական միջոցների սղության պատճառով, հնարավորություն չէր ունեցել իրագործելու իր այդ մտադրությունը: Եվ ահա երբ արդեն փակվել էր իր տպարանը, օգտվելով Մադրասում բացված թվով երրորդ հայկական տպարանի տիրոջ՝ անվանի վաճառական Սարգիս Շատուր Աղավալյանի, «առ ի հոգևոր վայելումն ամենայն հայկազեան տոհմի» արժեքավոր մատյաններ հրատարակելու ազգանվեր դիտավորությունից, անմիջապես խորհուրդ է տվել հրատարակել Գովհաննես Ջուղայեցու աշխատությունը, և ինքն էլ ստանձնել տպագրության կազմակերպման ու ղեկավարման դժվարին գործը:

Սամրամասն ներկայացնելով Ջուղայեցու գրքի տպագրության հանգամանքները, Շմավոնյանը հարկ է համարել նշել նաև, որ ընթերցողները «ունին գտանել ի սմա զբազում հոգևորական արգասիս»: Կասկածից վեր է, որ հազիվ թե ականավոր լուսավորիչը նման խորհուրդ տար ընթերցողին, եթե ինքը նախապես նրանում գտած չլիներ «զբազում հոգևորական արգասիս»: Դիտելի է և այն պարագան, որ, Գնդկաստան տեղափոխվելով 1784 թ., չորս

տարի հետո՝ 1788 թ., նրա մոտ հայտնվել է Ջուղայեցու գիրքը, որի գոյության մասին ինքը գաղափար է ունեցել դրանից տարիներ առաջ: Փաստորեն, վաղուց լսած լինելով Ջուղայեցու գրքի մասին, հայ առաջին պարբերականի խմբագիրը դրան կարողացել է ծանոթանալ միայն Չնդկաստանում, ուր այն հայտնվել էր հավանաբար ջուղահայ որևէ վաճառական կամ այլ զբաղմունքի տեր բանիմաց ու գրագետ, նման գրքի հարգն ու արժեքն իմացող մեկի ջանքերով: Կարծում եմ, հիմք ունեն ենթադրելու, որ այդ մեկը կարող էր լինել Մովսես Բաղրամյանը կամ Շահամիր Շահամիրյանը, որոնք /մեկը քահանա, իսկ մյուսը՝ դերձակ-վաճառական/ Նոր Ջուղայից Չնդկաստան էին տեղափոխվել Շմավոնյանից շատ առաջ: Ներկա դեպքում, իհարկե, սա չէ կարևորը, այլ այն, որ Ջուղայեցու այս աշխատությունը վաղուց ի վեր ծանոթ է եղել հնդկահայ լուսավորիչներին, որոնցից շատերն օգտվել են նրանից, կրել նրա գաղափարական ազդեցությունը, իրենց աշխատություններում զարգացրել նրա ինչ-ինչ գաղափարներ, ամեն կերպ ջանացել իրագործել դրանք: Ի հաստատումն այս եզրակացության, բերեմ մեկ-երկու օրինակ: Չովհաննես Ջուղայեցու խնդրո առարկա գրքում սկզբից մինչև վերջ կարմիր թելի նման անցնում է մեր ժողովրդի համախմբման, ազգային համերաշխության ու միասնության գաղափարը, ուստի ընթերցողներին խորհուրդ է տալիս չնախանձել մեկը մյուսին, այլ աջակից լինել իրար, ուրախանալ միմյանց հաջողությամբ, դեն մետել տարածայնությունն ու անհամաձայնությունը և «իշխանք ընդ իշխանս և ընդ իշխեցեալս համաձայնութիւն ունել, զի մի իցեն տարածայնութիւն ինչ: Նոյնպէս և մեծատունը և ընդ մեծատունս և ընդ ռամիկս և ընդ աղքատս և հասարակքն ընդ հասարակս և ընդ մեծամեծսն» /Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 1935, էջ 192բ/: Չարկ կա՝ ասելու, որ այս նույն ոգին՝ «միախոհ ու միաբան լինելու» պահանջը, կենտրոնական տեղ է զբաղեցնում նաև Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» գրքում, ինչպես նաև «Ազդարար» համդեսի թղթակից՝ «Չայի որդի հայ» ծածկանվամբ հեղինակի հոդվածում /տես թիվ 10/: Վերջապես, 1797 թ. Մաղրասում «ի խնդրոյ և ծախիւքն, պատուելի Շամիրի որդւոյ Սուլթանումի», տպագրված «Գիրք անուանեալ ղեկավար մանկանց»-ին Չարություն Շմավոնյանի կցած վերջաբանում կարդում ենք. «Աղաչեմ զձեզ, եղբայրք անկեղծ սիրով սիրեցէք զազգ՝ և զաշխարհն ձեր, մի նախանձիք ի յաջողութեան և մի ուրախանաք ի ծախորդութեան ոչ իշխանի, ոչ բարեկամի և ոչ եղբոր ձերոյ, մի մատնէք յանձինս և ինչք ազգակցած ձերոց ի դրունս այլազգ բռնաւորաց ձերոց» /էջ 280/: Մեկ ուրիշ օրինակ՝ եթե Շահամիր Շահամիրյանն իր կոթողային «Որոգայթ փառաց»-ում, զարգացնելով օրենքի գերակայության սկզբունքը, պահանջում էր, որ «Օրէնք լիցի թագաւոր հայոց և ի վերայ աշխարհին Չայաստանեայց» /էջ 49/ և «Օրէնս իցէ միայնակ մեզ թագաւոր» /էջ 97/, ապա նրանից շուրջ մեկ դար առաջ Չովհաննես Ջուղայեցին, կտրակա՛նապես մերժելով ֆեոդալական կամայականությունն ու ինքնիշխանությունը, պահանջում էր օրենքի ու օրինականության գերակայություն: Ոչ ոք, ասում է Չովհաննես Ջուղայեցին, լինի դա աշխարհիկ թե հոգևոր ամենաբարձրաստիճան պաշտոնյա, անգամ իսկ Աստված, իրավունք չունի մարդու հետ վարվելու այնպես, ինչպես ինքն է ցանկանում, այլ պարտավոր է վարվել այնպես, ինչպես օրենքն ու կարգն է պահանջում: Ակնարկելով կոպտությամբ ու կամայականությամբ ժամանակակիցների զարմանքն ու զայրուքը շարժած

մեք ոչ եմք արծաթագին, զի բարձրեալն որոյ տէրութիւնն սեփական է և իշխանութիւնն բնութեամբ՝ բռնաբար ոչ ումէք տիրէ, թող թէ մարդ։ Իսկ ապա թէ արդարութեամբ և իրաւամբք տիրէ՝ հնազանդիմք և մեք առաւել քան զառաւել» /էջ 117/։

Ի դէպ՝ ջուղահայերը հետագայում իրենց այս խոսքերը հաստատեցին գործով. 1695 թ. Նահապետ Եղեռացին առժամանակ գահընկեց արվեց և նրա փոխարեն Կաթողիկոս դարձավ Նոր Ջուղայի Ա. Ամենափրկիչ վանքի առաջնորդ, Դովհաննես Ջուղայեցու մանկության ընկեր, արքեպիսկոպոս Ատեփանոս Ջուղայեցին։ Սակայն Նահապետը հեշտությամբ տեղի տվող չէր, ուստի, մեկնելով Նոր Ջուղա, ինչ-ինչ մեքենայություններով կարողացավ վերստանալ կաթողիկոսի պաշտոնը, իսկ Ատեփանոս Ջուղայեցին, 10-ամսյա կարճատև Կաթողիկոսությունից հետո, բանտարկվեց ու ամենադաժան միջոցներով տանջամահ արվեց։

Իմ խորին համոզմամբ ավելի քան երեք հարյուր տարի առաջ ջուղահայերի ստեղծած այս փաստաթուղթը ոչ միայն հնդկահայ լուսավորիչների ժամանակ ու նրանց համար, այլև մեր օրերում ու մեզ համար չի կորցրել իր կենսունակությունն ու հրատապությունը։ Նրանում առաջադրված զաղափարների ու պահանջների կենսագործումը կարող է մեծապես նպաստել մեր նորանկախ պետության ու քաղաքացիական հասարակության կառուցման հույժ կարևոր պատմական գործընթացին։ Շատ այսմ կցանկանայի ընթերցողի ուշադրությանը ներկայացնել հիշյալ մամակից մեկ հոդված ևս։ 10-րդ կետում ասում են, որ Կաթողիկոսը չպետք է տգետներին ու անվարժներին տա եպիսկոպոսական պատիվ ու վարդապետական իշխանություն, որովհետև՝ «նոքա որ ունին ջան, և աշխատասիրութիւն ուսման՝ տեսանելով զայլս թարց ջանից և աշխատանաց ընկալեալ զպատիւ եպիսկոպոսութեան և զաստիճան վարդապետութեան և նոքա յուսահատեալ խափան լինին ի բարի յառաջողիմութենէ և մնա ազգս ի մէջ անգիտութեան խաւարի յաղագս անընտրութեան ըստ Արիստոտէլի որ ասէ, եթէ կամիս բարեգործութիւն տան, ընտրեալ զլաւն ի վատթարէն և զվաստակաւորն յանջանէն» /էջ 119-120/։ Այո՛, ասված է հոգևոր առաջնորդի համար, բայց այսօր նույն հաջողությամբ կարելի է հասցեագրել նաև աշխարհիկ ղեկավարներին ու առաջնորդներին։

Կարծում եմ, վերը ասվածը լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ, իսկապես, 18-րդ դ. հնդկահայ լուսավորականությունը հանկարծահաս ու պատահական երևույթ չէր, այլ նախորդ դարերի հայ և հատկապես 17-րդ դարի ջուղահայ տեսական մտքի օրգանական շարունակությունն ու զարգացումն էր։

ԱՍՏԱՏՈՒՐ ՓԱՇՏԱՅԱՆ

Զինիական գիտությունների թեկնածու

18-19-րդ դարերում ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱՎԱԾ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*«Մխիթարյանների ակադեմիայի երևան
գալը հայոց մտավոր կյանքի ամենանշանա-
վոր դեպքն է»:*

Ստեփանոս Նազարյան

Մխիթարյան միաբանությունը, հիմնադրման առաջին իսկ օրվանից՝ հավատարիմ Մխիթար Աբաստացու ձևավորած ավանդույթին, միաժամանակ դարձավ նաև յուրօրինակ մի ոսպնյակ, որում բեկվեց եվրոպական գիտության լույսը՝ իր անդրադարձներն ուղղելով դեպի հայկական գաղթօջախները և Հայաստան:

Անվիճելի է այն իրողությունը, որ Մխիթարյանները, գործելով Եվրոպայում, հեռու Հայաստանում տեղի ունեցող ավերածություններից, ունեցել են ստեղծագործելու առավել նպաստավոր պայմաններ, քան հայ եկեղեցական մյուս միաբանությունները: Մեր ասածի լավագույն հավաստումը Ս. Էջմիածնի միաբանության անդամ Արտակ Եպիսկոպոս Սմբատյանցի վկայությունն է. «Մինչդեռ Վենետիկի Մխիթարյան հայրերը կազմել և հաստատել են իրենց եղբայրությունը մի որոշ նպատակով, այն է՝ պարապել միայն և միայն գիտությամբ և նրանք, հաստատվելով Եվրոպայում և որ գլխավորն է ապահովելով իրենց տնտեսապես և քաղաքականապես, նվիրվել են միմիայն գիտության, օգտվելով Եվրոպայի մտավոր առաջադիմությունից, հեռու և ազատ մնալով Ասիայի բարբարոս ցեղերի ասպատակություններից և կոտորածներից»¹:

Մխիթարյանները մեզ են ժառանգել բնագիտական հսկայածավալ գրականություն: Դրանք առանձին մեծագրություններ են, դասագրքեր, էփիմեոտներ, ամսագրային հոդվածներ, ինչպես նաև օտարազգի և հայ հեղինակների բնագիտական երկերի հայերեն թարգմանություններ: 18–19-րդ դարերում Մխիթարյանների բնագիտական ինքնուրույն հրատարակած գործերն անցնում են հարյուրից: Ինքնին հասկանալի է, որ գիտականության աստիճանով դրանք նույնը չեն և չէին էլ կարող լինել:

Մեր մանրակրկիտ հաշվումները պարզել են, որ հիշյալ ժամանակահատվածում Վենետիկի Մխիթարյանների բնագիտական հրատարակությունները գերակշռում են Վիեննականների:

¹ Արտակ Եպիսկոպոս Սմբատյանց, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1973, էջ 159:

Մխիթարյանների բնագիտական ժառանգության անցակտելի մասն են կազմում նրանց հրատարակած հանրագիտարանները, որոնք հայ բնագիտության պատմության ամենանշանակալից էջերից են: Ժամանակագրական կարգով նշենք դրանք. Մ. Բժշկյան, «Գեմարան գիտելեաց» (Վենետիկ, 1815, 380 էջ, գրաբար), Մ. Ռեստեն, «Բառարան բժշկական բառից» (Վենետիկ, 1822, 370 էջ, գրաբար), Մ. Ջաջուհի, «Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց» (Վենետիկ, հտ. 1 1891, հտ. 2 1892 և հտ. 3 1893, գրաբար, ընդհանուր ծավալը 2325 էջ), Ղ. Ալիշան, «Հայբուսակ կամ հայկական բուսաբանութիւն» (Վենետիկ, 1895, 697 էջ, աշխարհաբար):

Մխիթարյանների բնագիտական աշխատությունների լեզուն և՛ գրաբարն է, և՛ աշխարհաբարը: Ընդ որում չի պահպանվում գրաբարից դեպի աշխարհաբար ենթադրվող տրամաբանական միտումը: Այսպես, Վենետիկում 1791-ին արևմտահայ աշխարհաբարով լույս է տեսել Ղ. Ինճիճյանի «Տեսութիւն համառօտ հին և նոր աշխարհագրութեան» 155 էջանոց աշխատությունը: Գիշտ և ճիշտ հարյուր տարի անց, 1891-ին, դարձյալ Վենետիկում գրաբար լույս է տեսել Մ. Ջաջուհու վերը հիշատակած «Բառգրքի» առաջին և հետագայում՝ երկրորդ և երրորդ հատորները: 1893 թվականից հետո Մխիթարյանների հրատարակած բնագիտական աշխատությունները միայն աշխարհաբար արևմտահայերենով են:

Մխիթարյան միաբանության բնագիտական ժառանգության առաջին արձագանքողն ու արժևորողը Միքայել Նալբանդյանն էր², որը «Հյուսիսափայլի» 1858-ի 5, 6 և 11 համարներում հրատարակեց «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» հույժ կարևոր հոդվածը:

Հավուր պատշաճի ներկայացնելով Մխիթարյանների գիտա-կրթական գործունեությունը, այդուհանդերձ, մեր կարծիքով, մեծ բանաստեղծն ու ազգային-հասարակական գործիչը անաչառորեն չի ներկայացրել Մխիթարյանների վաստակը բնագիտության ասպարեզում:

1883-ին Թիֆլիսում լույս ընծայած «Վենետիկի Մխիթարեանք» աշխատության էջերում Ա. Երիցյանը կարծիք է հայտնել, թե իբր մինչև 1880 թվականը Վիեննայի Մխիթարյանները ավելի են հետամուտ եղել բնական գիտություններին: Չափազանց դժվար է այս հարցին միանշանակ պատասխանել: Մինչև 1880 թվականը, համեմայնդեպս, Վենետիկի Մխիթարյանները ավելի շատ բնագիտական ուսումնասիրություններ են հրատարակել, քան Վիեննականները: Միայն «Բազմավեպ» ամսագրում 1843-1880-ական թվականներին, մեր մոտավոր հաշվումներով, ֆիզիկային, քիմիային, աստղագիտությանը, կենսաբանությանը, հանքաբանությանը և օդերևութաբանությանը նվիրված հոդվածների թիվն անցնում է 300-ից:

Մխիթարյանների բնագիտական ժառանգության մի շարք խնդիրների անդրադարձել է Լեոն:³

Մխիթարյանների բնագիտական ժառանգության առաջին ներկայացնողը 20-րդ դարում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Բ. Սարգիսյանն էր:⁴

Մխիթարյանների բնագիտական ժառանգությանն են անդրադարձել նաև

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 2, Երևան, 1980, 446 էջ:

³ Լեո, Հայոց պատմություն, հտ. 3, Երևան, 1946, 1120 էջ:

⁴ Բ. Սարգիսյան, Երկհարյուրամյա գրականական գործունեութիւն և նշանաւոր գործիչներ Վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ, 1905, 400 էջ:

Ա. Կարինյանը⁵, Ռ. Գաբրիելյանը⁶, Ա. Առաքելյանը⁷, Վ. Անանյանը⁸, Բ. Թումանյանը⁹, Ա. Տեր-Պողոսյանը¹⁰, Մ. Ճանաշյանը¹¹, Ն. Սկինյանը¹², Տ. Ղազարյանը¹³, Ն. Բյուզանդացին¹⁴, Գ. Դավթյանը¹⁵, տողերիս հեղինակը¹⁶, Գ. Ստեփանյանը¹⁷ և ուրիշներ:

Մխիթարյանների լույս ընծայած բնագիտական ուսումնասիրությունները միլիոնավոր են հետևյալ բնագավառներին. ֆիզիկա, քիմիա, բուսաբանություն, կենդանաբանություն, հանքաբանություն, երկրաբանություն, ռդերևութաբանություն, ֆիզիկական աշխարհագրություն, աստղագիտություն, ամատոմիա՝ ուսմունք մարդու ծագման և զարգացման մասին:

Ինչպես տեսնում ենք, թվարկված բնագավառներում չեն ընդգրկված մաթեմատիկական և բժշկությունը, քանի որ ըստ ընդունված տեսակետի, մաթեմատիկական և բժշկագիտությունը բնական գիտություններ չեն¹⁸:

18-րդ դարում Մխիթարյանների լույս ընծայած բնագիտական աշխատությունները սակավաթիվ են: Դրանք Վենետիկում լույս տեսած «Էփիմերտե»-ներն են և Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանի վերը հիշատակված աշխատությունը:

Փաստորեն Մխիթարյաններն իրենց բնագիտական աշխատությունների ծանցակիշը մասը հրատարակել են 19-րդ դարում: Նշենք, որ հիշյալ ժամանակահատվածում, հատկապես Եվրոպայում, հրագործվեցին գիտատեխնիկական վիթխարածավալ հայտնագործություններ, բնագիտական նորանոր տեսություններ կյանքի կոչվեցին:

19-րդ դարի առաջին քառորդի հրատարակություններում հատկապես հիշատակելի է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Օղուլ-լուգյանի՝ Վենետիկում 1809-ին գրաբար լույս ընծայած 286 էջանոց «Ուսումնականութին մաուղղութեան» չքեղ աշխատությունը: Ժամանակակից գիտա-

⁵ Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հտ. 2, Երևան, 1960, 634 էջ:

⁶ Ռ. Գաբրիելյան, Ակնարկներ դարվինիզմի և բիոլոգիական մտքի պատմության հայ գրականության մեջ, Երևան, 1963, 503 էջ:

⁷ Ա. Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հտ. 3, Երևան, 1975, 511 էջ:

⁸ Վ. Անանյան, Հայաստանի կենդանական աշխարհը, հտ. 1, Երևան, 1961, 432 էջ:

⁹ Բ. Թումանյան, Վենետիկի Մխիթարյանների աստղագիտական ուսումնասիրությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, հտ. 3:

¹⁰ Ա. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում սկզբից մինչև 18-րդ դարը, Երևան, 1960, 571 էջ:

¹¹ Մ. Ճանաշյան, Սուրբ Ղազար՝ Մայրավանք Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1966, 165 էջ:

¹² Ն. Սկինյան, Ակնարկ մը Վիեննական Մխիթարյան միաբանության գրական գործունեության վրա, Վիեննա, 1912, 310 էջ:

¹³ Տ. Ղազարյան, Ակնարկներ Հայաստանի քիմիայի պատմության, Երևան, 1955, 280 էջ (ռուսերեն):

¹⁴ Ն. Բյուզանդացի, Քննադատութիւն «Հայրուսակի», Վիեննա, 1922, 215 էջ:

¹⁵ Գ. Դավթյան, Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը, Երևան, 1964, 142 էջ:

¹⁶ Ա. Փաշայան, 19-րդ դարի քիմիան հայ բնագետների աշխատություններում, Երևան, 1992, 156 էջ:

¹⁷ Գ. Ստեփանյան, Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում, Երևան, 1957, 158 էջ:

¹⁸ Հայկական Սովետական Հանրագիտարան, հտ. 2, Երևան, 1976, էջ 486:

կան տերմինաբանությամբ հիշյալ աշխատության վերնագիրը կլինի «Նավագնացության մաթեմատիկան»: Նավերի, դրանց կառուցվածքի, նավարկության, նավաշինության և առնչակից տարաբնույթ այլ հարցերի նվիրված հայերենով գրված գիրք, մինչև Ղ. Օղուլլուգյանի գրքի լույս տեսնելը, չի հրատարակվել: Սակայն 10-13-րդ դարերի հայկական ծեռագրերի մանրակարգերում առկա են առաջատար նավեր, լաստանավեր: Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» էջերում խոսվում է նավի կառուցվածքի մասին:

Ղ. Օղուլլուգյանի նշված աշխատության էջերում շոշափված են մաթեմատիկային, ծովագնացությանը, աստղագիտությանը, մակընթացություններին և տեղատվություններին, արեգակի խավարման պահերին, քարտեզներին և նավարկությունների տեսակներին և նմանատիպ խնդիրներին նվիրված հարցեր: Իր ընդգրկած հարցերի բազմազանությամբ, ինքնատիպությամբ շուրջ 200 տարի առաջ լույս տեսած հիշյալ գիրքը հիրավի լուսավոր մի էջ է Մխիթարյան միաբանության բնագիտական ծառանգության անդամատուն: Հիշյալ աշխատության գիտական արժեքումը լավագույնս տվել է հայ աստղագիտության քաջատեղյակ մասնագետ Բ. Թումանյանը. «Գրքի բովանդակությունից ու շարադրման մեթոդից երևում է, որ այն գրված է մաթեմատիկական և աստղագիտական նախնական որոշ գիտելիքներ ունեցող ընթերցողների համար»¹⁹:

Մինչև 19-րդ դարի առաջին կեսը, Մխիթարյան միաբանության բնագիտական հրատարակություններում հատկապես առանձնանում է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Մատթեոս Սաղաթեյանի աշխարհաբարով գրված «Համառոտ բնական գիտություն» 528 էջանոց հիմնարար աշխատությունը: Հիշյալ գրքում քննարկված են ֆիզիկային, քիմիային և օդերևութաբանությանն առնչվող հարցերը: Ուշագրավ է այն փաստը, որ Ս. Սաղաթեյանի նշված աշխատությունում, առաջին անգամ հայ տպագիր աստղագիտական գրականության մեջ, նշվում է, որ, այսպես կոչված, «հաստատուն աստղերը» ևս ունեն իրենց սեփական շարժումները:

Մխիթարյան միաբանության բնագիտական աշխատությունների գերակշիռ մասը լույս են տեսել անցյալ դարի երկրորդ կեսին: Նշենք դրանցից մի քանիսը. Բարսեղ Նուրիճանյան, «Փորձառական բնագիտութիւն կամ ֆիզիկա» (Վիեննա, 1856, 550 էջ, աշխարհաբար), Մանվել Զաջունի, «Տարաբանութիւն տեսական և արուեստական» (երեք հատորները լույս են տեսել 1870-ին, Վենետիկում, ընդհանուր ծավալը՝ 1366 էջ): Ուղիղ մեկ տարի անց, 1871-ին, դարձյալ Վենետիկում լույս է տեսել նույն հեղինակի երկհատոր «Բնաբանութիւն»-ը:

Մեր ուսումնասիրությունները պարզել են, որ ֆիզիկայի, մեխանիկայի, երկրաբանության, բուսաբանության, կենդանաբանության, հանքաբանության, օդերևութաբանության, տոմարագիտության, աստղագիտության հայատառ տպագիր աշխատությունների հեղինակները Մխիթարյան միաբաններն են:

Հայ իրականության մեջ քիմիային և ֆիզիկային նվիրված տպագիր ամենածավալուն աշխատությունները հրատարակվել են Վենետիկում: Հիշյալ երկու աշխատությունների հեղինակը Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, հանրագիտակ և երևելի մանկավարժ Մանվել Զաջունին է, որի գիտական վաստակն աննախադեպ մի երևույթ է 19-րդ դարի հայ բնագիտական մտքի բնագավառում:

¹⁹ Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, հտ. 2, Երևան, էջ 246:

Ցավով պետք է արձանագրել, որ Մխիթարյան միաբանության 19-րդ դարի երկրորդ կեսին լույս տեսած բնագիտական որոշ աշխատություններ, գրաբար գրված լինելու պատճառով, հայկական ուսումնական հաստատություններում և ընթերցողների կողմից մեծ ընդունելության չեն արժանացել:

Մխիթարյան միաբանության բնագիտական ժառանգության անբակտելի մասն են կազմում նրանց հրատարակած աստղագիտությանը և աշխարհագրությանը՝ նվիրված աշխատությունները՝ քարտեզներ ու ատլասներ: Ժամանակագրական իմաստով ուշագրավ է 1845-ին Վիեննայում գրաբար լույս տեսած Ալեքսանդր Պալճյանի «Դրահանգ աստղագիտութեան ի վերայ երկրագնդոյ» 71 էջանոց աշխատությունը, ուր հիմնականում քննարկված են երկնքի ընդհանուր կառուցվածքը, երկնային ոլորտի հիմնական կետերը, անկյուններն ու շրջանները, աստղային և արեգակնային ժամանակները:

1881-ին Վենետիկում աշխարհաբար արևմտահայերենով լույս է տեսել Մեսրոպ Ասիականի «Տարերք տիեզերագիտութեան» 245 էջանոց աշխատությունը, որն ամբողջովին նվիրված է աստղագիտությանը, և աշխարհաբար գրված լինելու պատճառով, երկար տարիներ աստղագիտության անփոխարինելի դասագիրք է եղել հայկական դպրոցներում և վարժարաններում, ինչը և հավաստում է հեղինակը՝ գրքի առաջաբանում. «Թերևս միայն տիեզերագիտութիւն մը կը պակսէր, յետ հրատարակման ի մեր մամուլոց՝ թուաբանութեանց, գրահաշուի, երկրաչափութեան, բնաբանութեան եւ տարրաբանութեան, համարողական կարգի ուսմանց ամբողջ ընթացքն բովանդակելու համար: Կրնձայե՞նք զայն դպրոցաց՝ դիւրին եւ իմանալի ոճով մը, խորշելով երկու ծայրերէ - ոչ երկայնաբան եւ ոչ համառօտախօս»:

Հայատառ առաջին աստղագիտական տպագիր «Աստղալից երկինքը» քարտեզի համար ևս պարտական ենք Մխիթարյան միաբանությանը: 1749-ին Վենետիկում, իտալացի Անտոն Բորտոլիի տպարանում լույս է տեսել Մխիթար Սեբաստացու «Բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանի առաջին հատորը: Ցավոք Մխիթար Սեբաստացին չտեսավ այդ հիրավի կոթողային աշխատության ամբողջական հրատարակությունը: Առաջին հատորի վերջին մամուլների տպագրության օրերին նա ծանր հիվանդացավ և վախճանվեց 1749-ի ապրիլի 27-ին, 73 տարեկանում:

Հիշյալ բառարանի առաջին հատորում, 501 և 502 էջերի միջև, տեղադրված է ներդիր՝ 30 սմ-ը 25,7 սմ-ի վրա աստղագիտական քարտեզ, որը վերնագրված է «Աստղալից երկինք»: Քարտեզի կենտրոնական մասում տրված են երկնային սֆերայի արևելյան և արևմտյան կիսագնդերը՝ համաստեղությունների նկարներով ու պայծառ աստղերով: Հիշյալ քարտեզում համաստեղությունները 63-ն են, իսկ աստղերը՝ մեկից վեց մեծության: Առանց համարակալման տարված են 36 միջօրեականներ: «Աստղալից երկնքի» վերին ծախ մասում նկարված է «Լուսնթագ և իւր արբանեակը», նկարված են նույնիսկ Յուպիտերի մթնոլորտում երևացող շերտերը: Նրա շուրջ առանձին ուղեծրերով պտտվում են գալիլեյան չորս արբանյակները:

Մխիթար Սեբաստացու «Բառգրքում» գետնոված «Աստղալից երկինք» քարտեզը մասնագետների կարծիքով կազմված է 18-րդ դարի առաջին կեսի եվրոպական հայտնի քարտեզների հետևողությամբ:

18-19-րդ դարերի բնագիտական երկերի հայերեն թարգմանական գործունեության մեջ չափազանց ծանրակշիռ է Մխիթարյան միաբանության վաստակը, որն արդեն մեկ այլ առանձին հոդվածի նյութ է:



ԳՐԱԿԱՆ -
ՄԱՏԵՆԵԳԻՏԵԿԱՆ

ԼԵՎՈՆ ՄԻՐԻԶՍԵՅԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵՐԳՉՈՒՀԻՆ

(Ծննդյան 60-ամյակի առիթով)

Լուսինե Զաքարյանը հայկական երգարվեստի դասական և ամենահինքնատիպ դեմքերից մեկն է: Նրա գործունեության հետ է կապված մշակույթի մի ամբողջ երեսնամյակ՝ 1960-ական թվականների սկզբից մինչև 1990-ական թվականների սկիզբը: Դա պատմական մի ժամանակաշրջան էր՝ լի հասարակական-քաղաքական խմորումներով, դեպի ազգային ինքնագիտակցություն միտող գեղարվեստական ստեղծագործություններով, կանոնիկ մտածողության սահմաններն ընդլայնող նորարարական խիզախումներով:

Ազգային ոճի ինքնահաստատման, ազգային ոգու ներշնչման ազդակները մախ և առաջ բխում էին հայոց միջնադարի մեկուսացյալ ամսպառ շտեմարանից: Պարույր Սևակի, Մինաս Ավետիսյանի, Էդգար Հովհաննիսյանի, Ալեքսանդր Գրիգորյանի, Հենրիկ Սիրավյանի և այլոց ստեղծագործական արմատները հասնում էին մինչև Գրիգոր Նարեկացի, մինչև որդան կարմիրով հրաշագործված մանրանկարչական գունաշխարհը, մինչև պատկերի, շեշտի ու գծի ազգային նախահիմքերը, որ մինչ այդ մոռացության էին մատնված հարկադրաբար: Պետք է գար մեկն էլ, որը պիտի ժամանակի կապանքներից ազատեր տոհմիկ հայկական մեղեդիները, դառնար դրանց աստվածածիր կատարողը և ռաֆիիրան:

Այդ մեկը եղավ Լուսինե Զաքարյանը:

Նրա առաքելությունն սկսվեց Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանից: Այստե՛ղ սկսեց փթթել նրա արտակարգ տաղանդը: Այն, որ աստղոտ աչքերով, մշտածպիտ, աշխույժ, բայց դասաժամին համակ ուշադրություն դարձող աղջնակը կարողանում էր բառացիորեն ժամերի ընթացքում անթերի տիրապետել Կոմիտասի, Բիզեի, Մոցարտի ստեղծագործություններին՝ անսպասելի վարպետությամբ հաղթահարելով ամենաբարդ



մասերը, չէր կարող զարմանք չհարուցել: Բայց, երևի, զարմանալու հարկ չկար: Չէ՞ որ գործում է զենքերի օրենքը, իսկ Լուսիննի պապը՝ զտարյուն հայ ծնողների զավակ Լուսինի Տոմաշևիչը, հայտնի երգիչ էր: Ժամանակին երգել էր Պետերբուրգի օպերային թատրոնում, եղել Օալյապինի մերձավոր քարեկամը: Հանձին մրա թողան, ահա, աճում էր հազվագյուտ մի երգչուհի, որ գնալով ավելի ու ավելի էր հիացնում իր նրբագեղ, հոգեհույզ տեմբրի քնարական սուպրամոլով: Ավարտական քննական համձնաժողովի անդամները միմյանց ասում էին. «Սա ուղղակի հրաշք է...»:

Հրաշքի հետագա դրսևորումները շարունակվեցին Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի մեներգային բաժնում և, կարճ ժամանակ անց, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի կամարների ներքո: Տաճարը հույզերի, զգացմունքների քոլորովին ուրիշ մի աշխարհ էր: Խորհրդավոր, հոգեհմա մեղեդիները նման չէին իր գիտցած, իր հոգում զոր-գիշեր հնչող մեղեդիներին: Բոլորովին տարբեր էին: Բայց... արդյո՞ք քոլորովին... Կոմիտասով լեցում էությունը շուտով հայտնաբերեց հնչեղանգների, ոճավորումների, հուզական ճառագումների բազում ընդհանրություններ: Եվ խորհրդավոր, խորունկ ու բարձրագույն եկեղեցական երաժշտությունը դարձավ թափանցիկ, պարզ, ընկալելի և առավել սրտամոտ: Ամհավատալի մուրք, գերբնական թվացող զգացողությամբ՝ նա երկար սպասել չտվեց՝ անթերի կատարելու համար Ս. Պատարագի մեներգային հատվածները: Եվ ամեն անգամ, երբ հնչում էր «ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ»-ն, մրա հայացքն ուղղվում էր դեպի Աստվածամոր սրբապատկերը, դառնում պաղատագին, աչքերը լցվում էին, և հոգեպարար հնչյուններն ու բառերն արտաբերվում էին հուզմունքից թեթևակի դողացող շուրթերով... Այդ պահերին Մայր Տաճարի խուռներամ բազմությունը քարանում էր...

Երգչուհու մտորումները շարունակ անդրադառնում էին միևնույն հարցին՝ ի՞նչո՞ւ այս երգերը չեն կատարվում հրապարակորեն, ի՞նչո՞ւ չեն ուսուցանվում կոնսերվատորիայում, ի՞նչո՞ւ եվրոպական հոգևոր երաժշտությունը կարելի է, իսկ մերը՝ ոչ... Տարիներն անցնում էին, բայց այս հարցերը մնում էին անպատասխան:

Հասավ այն օրը, երբ կոնսերվատորիայի դեկավարությունը մրան արտոնեց մենահամերգ տալ Հայֆիլհարմոնիայի Փոքր դահլիճում: Դա շրջանավարտության պատրաստվող Լուսինն Ջաքարյան հրաշք երգչուհու քենեֆիսն էր: Բնական է ենթադրել, թե մասնույժ պիտի արձագանքեր համարժեք կերպով: Ավադ, այդ հրաշալի համերգի մասին ոչ մի թերթում չգրվեց: Պատճառն այն էր, որ Մոցարտի, Հենդելի, Կոմիտասի, Էդվարդ Միքսայանի, Կարո Ջաքարյանի, Ռոմանոս Մելիքյանի, Գլինկայի, Ռախմանինովի, Ռուբինշտեյնի ստեղծագործությունների կողքին Լուսինն կատարել էր երկու հայկական հոգևոր երգ՝ «ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ» և «ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ»...

Իսկ դրանից մի քանի ամիս անց, 1962 թվականի ապրիլի 29-ին, մույճ Փոքր դահլիճում երբ նա համերգ տվեց արդեն իբրև կոնսերվատորիայի շրջանավարտ, մրան կտրուկ ասել էին. «Խնդրում ենք՝ ոչ մի հոգևոր երգ...»: Այդ համերգի մասին մասնույժ գոնե մեկ արձագանք եղավ:

Դժվար չէ պատկերացնել դյուրագգաց երգչուհու ապրումները, երբ հոգևոր երգերի նրա փայլուն կատարումները հանդիպում էին պաշտոնական լուսթյան կամ, պարզապես, արգելվում էին: Բայց փխրուն կազմվածքով երգչուհին չէր վհատվում:

Երկու տարի հետո, 1964-ի հոկտեմբերին, Հայֆիլհարմոնիայի Մեծ դահլիճում կայացած Կոմիտասի 95-ամյակի հանդիսությամբ Լուսինեն, ըստ ծրագրի, կատարեց երկու երգ՝ «ԳԱՐՈՒՆ Ա» և «ԶԻՆԱՐ ԵՍ»: Որոտընդոստ, չլուր ծափերը նրան վերադարձրին բեմահարթակ: Եվ Մեծ դահլիճում, առաջին անգամը լինելով, հենց «ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ»-ը: Ու տեղի ունեցավ այն, ինչը համազոր էր հրաշքի:

Ասես ոչ թե բեմից, այլ տիեզերական անհուններից հնչող հրեշտակային ձայնը, զարմանահրաշ մեղեդին և հոգեբովս ու խորհրդավոր խոսքերը կարկամեցրին, մագձիսացրին դահլիճը: Սրտերը լցվեցին անծանոթ, բայց անչափ հարազատ խանդավառումներով, հոգիները վեհացան՝ հաղորդակցվելով զարմանալի պայծառ մի լույսի, որը միշտ կար, բայց պահվում էր մեկուսի...

Պայթեցին մոլեգին ծափերը: Արցունքն աչքերին՝ ծափահարում էր երջանկահիշատակ վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ինքնամոռաց ծափահարում էին նաև Հանրապետության ամենաբարձրաստիճան ղեկավարները:

Այդ երգի կատարումը եղավ, ըստ ամենայնի, պատմական: Երջադարձն ակնհայտ էր:

Այդ շրջադարձի մշակութային, հասարակական, ազգային վիթխարի կարևորությունը պիտի երևան գար հետո, իսկ առայժմ ժամանակի ու իրավակարգի հետ իր խուլ պայքարում հոգևոր երգն արձանագրում էր իր առաջին հաղթահանողները:

Շուտով Երգահանների տունը, Միության մեծաշնորհ մախազան Էդվարդ Միրզոյանի ջանքերով, ունեցավ չեխական երգեհոն: Արտասահմանյան ուսումնառությունից ու համերգային երկարատև շրջապայությունից Հայաստան վերադարձած երգեհոնահար Վահագն Ստամբուլյանի և Լուսինեի համատեղ համերգները դարձան մայրաքաղաքի մշակութային կյանքի թիվ մեկ նորույթը:

Ապա սկսվեցին Լուսինեի համերգները Հայաստանի տարբեր շրջաններում ու քաղաքներում՝ Զարեհ Սահակյանցի կամերային նվագախմբի հետ: Այդ համերգային շրջերթն ավարտվեց Հայֆիլհարմոնիայի Մեծ դահլիճում տրված բացառիկ համերգով, որը վերջնականապես հաստատեց Լուսինե Զաքարյան մեծ երգչուհուն:

Լուսինեի աստղն սկսվում էր բարձրանալ:

Նրա շենշող արժանիքները չէին կարող փոխել Հայաստանի պետական նվագախմբի փորձառու ղեկավար ու գլխավոր խմբավար Հովհաննես Չեքիջյանի աչքից: Պետական երգչախմբի կազմում, Համամիութենական համերգային միավորման սիմֆոնիկ նվագախմբի հետ, Լուսինեն ելույթ ունեցավ Մոսկվայի Չայկովսկու անվան համերգային դահլիճում՝ կատարելով Մոցարտի «Ռեքվիեմ»-ի սոպրանոյի բաժինը: Տպավորությունը ցնցող էր:

Նվաճված էր միութենական թիվ 1 հեղինակության երաժշտասրահը: Ծերունազարդ Պապել Լիսիցյանը խոստովանեց. «Կյանքումս այսպիսի հուզմունք չէի ապրել...»:

Հետագայում այդպիսի հուզմունք պիտի ապրեին բազմահազար ունկնդիրներ՝ ամենատարբեր միջօրեականների տակ: Դեռ ի խորոց սրտից պիտի ասվեին ու գրվեին մեծարանքի չլսված ու չտեսնված խոսքեր: Դեռ պիտի Հայաստան ժամաներ անգլիացի Ռոչակավոր երգահան Բենջիամին Բրիտտենը, լսեր իր երգերը Լուսինեի կատարմամբ և ասեր նրան. «Դուք երգեցիք այնպես, ինչպես ինքս կցանկանայի: Կարծես թե հատուկ Ձեզ համար էի գրել այդ երգերը»: Դեռ պիտի Լուսինեին լսեր ամերիկյան մեծանուն նկարիչ ու գրող Ռոքուել Քեմթը և ասեր. «Փրկված այս երգերը տվեք աշխարհին»: Նրան պիտի լսեր համհարեղ Արամ Խաչատրյանը և պիտի գրեր. «Սիրելի Լուսինե: Ես ուրախ եմ, որ կարող եմ մի քանի խոսք ասել Ձեր արտասովոր տաղանդի մասին: Ձեր այս համերգից ես ստացա իսկական, վիթխարի գեղարվեստական բավականություն: Դուք ունեք շատ գեղեցիկ, բոլոր ոեզիստրներում սահուն, լսելիքը, սիրտը և գիտակցությունը շոյող ձայն: Ձեր պարզությունը և Ձեր կատարման ամարատ մաքրությունը հմայում է լսողին: Բոլորը կարկամում են: Դա ինչ-որ կախարդանք է: Թող Ձեր արվեստը պատռի բոլոր սահմանները և նվաճի տիեզերքը»:

Լուսինեի երգը քառացիորեն պատռում էր բոլոր սահմանները: Այդ երգը հնչեց ու թևածեց խորհրդային հանրապետություններում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Լիթանանում, Սիրիայում, Ֆրանսիայում, Կանադայում, Միացյալ Նահանգներում, Արգենտինայում և այլուր՝ ամեն տեղ սփռելով արվեստի կենարար շունչը, հայ երգի մշտանորոգ էությունը, արևային ջերմությունն ու հմայքը:

Եվ ի՞նչ էր երգը Լուսինե Ջաքարյանի:

Նախ և առաջ, դա Կոմիտասի համհարով դասականացած հայ ժողովրդական երգն էր, ուր բնության պատկերները միաձուլված էին մարդկային զգացմունքներին, որ նույնքան վսեմ էին ու հրաշալի, նույնքան պարզ ու առիճնող: Լուսինեի կատարմամբ նոր շունչ ու ոգի էին առնում, նոր փայլ ստանում Կոմիտասյան գոհարները, «*Գարուն ա*», «*Չինար ես*», «*Կոմե առա ելա սարը*», «*Սարերի վերով գնաց*», «*Քելե, քելե*»... Բոլոր, բոլոր երգերը: Չմոռանանք Բարսեղ Կանաչյանի «*Օրոր*»-ի չնաշխարհիկ կատարումը և ասենք մեղա, որ այս պահին հնարավորություն չունենք հիշատակելու լուսինեական երգացանկի ամբողջ հարստությունը:

Լուսինեն կարողանում էր որսալ և ունկնդրին հասցնել թե՛ մեղեդու, թե՛ խոսքի նույնիսկ ամենամանջան թվացող նրբերանգը: Դրանով նրա երգը, որ ամեն վայրկյան լի էր անսպառ հուզականությամբ, ունկնդրի առջև կերտում էր բնության և մարդկային հոգու ճշմարտապատում, իրական, կենդանի պատկերներ: Հստակ ու բնական են դառնում ժողովրդական երգի հոգեբանական-երաժշտական բոլոր անցումները: Ողբային ակկորդներից անմիջապես հետո, կարծես մեկեն ծագում էր հույսի արևը, ու թնդում էր կենսախիղճ մեղեդաշարը:

Լուսինեն գերազանց գիտեր կոմիտայան պատգամները, և այդ իմացությունը նրա մեծության հիմքերից մեկն էր:

Կոմիտայան իմացությամբ և կոմիտայան իմաստությամբ էր, որ Լուսինեն կարողացավ ժողովրդականացնել, համազգային ու համաշխարհային ճանաչման հասցնել հայ հոգևոր երգը: Դա, այո՞, պատմական առաքելությունն էր: Ներքնատեսորեն մազազ հայ հոգևոր երգի ազգային-ժողովրդական էությունը և իր աստվածային ձայնի, անզուգական տաղանդի և հնքնատիպ մեկնաբանումների շնորհիվ հայ միջնադարյան հոգևոր ստեղծագործությունների համար ապահովեց հարատև դասականության իրավունք: Հոգևոր երգը դադարեց միայն եկեղեցու երգ լինելուց: Նրա մեջ բացահայտվեցին նորանոր իմաստային երանգներ, աշխարհիկ գաղափարների ներառականություններ:

Լուսինեի «ՍՈՒՐԲ, ՍՈՒՐԲ»-ը մի հզորաշունչ հիմն է՝ նվիրված ոչ միայն երկնային գոյությունների Տիրոջը, այլև՝ մարդուն ու մարդկությանը: Լուսինեի կատարմամբ այս հանճարեղ ստեղծագործության մեջ ճարտարորեն միավորվում են մարդու անհատական ապրումները և ժողովրդի, հանրության հոգեկան պոռթկումը: ՍՈՒՐԲ-ը Երկնային Տերն է, ում հղվում է օրհնության խոսքը: Միաժամանակ ՍՈՒՐԲ-ը մարդու իղեայն է, գերագույն սերը, գաղափարն ու իմաստը, որին ձգտել ու ձգտում է հասնել ինքը՝ մարդը: Այս իղեայն պայմանավորված է համամարդկային ձգտումներով ու սիրով: Եվ երբ Լուսինեն ամբողջ էությամբ հուշակում է՝ ՕՎՍԱՆՆԱ Ի ԲԱՐՁՈՒՆՍ, կարծես թե տիեզերքը լցվում է մարդկային իղեայի հաղթական փառաբանությամբ...

Լուսինեի երգը ներառում է նաև համաշխարհային գրեթե բոլոր դասականներին: Այստեղ նույնպես մազ վիրտուոզ է՝ երբեմն անհավատալի թվալու չափ:

Ասել, թե Լուսինեն մեծ երգչուհի էր, մշանակում է շատ քիչ բան ասել: Լուսինեն երևույթ էր: Նրա արվեստը պարզ էր, բայց՝ մոգական: Նրա երգը բացառիկ էր, որովհետև զմայլելի էր: Լուսինեն, հիրավի, Հայաստանի յոթ հրաշալիքներից մեկն էր:

Լուսինեի երգարվեստի մասին հիացումով ու բարձր գնահատանքով է արտահայտվել Ն.Ա.Օ.Տ.Տ. Գաբեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը գրել է. «Երբ մա երգում էր, երգում էր աղոթելով, և երբ աղոթում էր, աղոթում էր երգելով: Մի խոսքով, աղոթք, նրաժշտություն և երգ անբաժանելի էին Լուսինեի համար: ... Ինքն էր, Լուսինեն, երգը: Դրա համար երգը վավերական էր իրմով, և մնաց հավերժաբարառ այդ աղոթաձայն երգերով, որոնք երբեք պիտի չկորսվին»:

Լուսինեն բացառիկ էր նաև իբրև մարդկային արարչագործություն: Հանճարեղության հասնող արտակարգ տաղանդի հետ մեկտեղ, օժտված էր նաև արտակարգ համեստությամբ: Երբեք զգալ չտվեց իր համաշխարհային համբավը: Միշտ մնաց քյուրեղի պես ազնիվ, առաքինի: Մինչև վերջ պահպանեց երախտագիտությունը, սերն ու հավատը Սուրբ Էջմիածնի և երջանկահիշատակ Վազգեն վեհափառի հանդեպ: Ամեն անգամ, երբ պիտի

մեկնեք Հայաստանից դուրս, ուղևորության, գնում էր Վեհարան՝ Վեհափառ Հայրապետի օրհնությունն ստանալու:

Եվ այսօր, Լուսինե Զաքարյանի հիշատակը ոգեկոչելով, մենք հատուկ երախտիքի խոսք պիտի ասենք երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիշատակին: Նա սկզբից մինչև վերջ գնահատեց և ըստ ամենայնի քաջալերեց Լուսինեին՝ այն հրաշք աղչկան, ում երգեցողությանը ամեն կիրակի Մայր Տաճարը դառնում էր նաև Երգի Տաճար: Երջանկահիշատակ Վազգեն Առաջինը գրել է. «... Լուսինե... իր աղոթարույր երգով, իր հավատավոր հոգով, իր անձնագործ մկրտաբերումով մեր Եկեղեցու և ազգի կյանքում մշտապես հանդիսացավ մի հոգևոր լույսի առավոտ»:

Պատշաճ է, որ հիշատակի այս հոգվածում երախտագիտության ու մեծարանքի խոսք ուղղենք Լուսինեի կյանքի ընկերոջը, նրա երգարվեստի մշակման գործում մեծ ավանդ ունեցող տաղանդավոր երգիչ ու երաժշտագետ Խորեն Պալյանին:

Սրտագին շնորհակալություն հայտնենք բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կառլեն Դանիելյանին՝ Լուսինեի կյանքի ու ստեղծագործության մասին գրած փայլուն և առայժմ միակ գրքի հեղինակին:

Պատիվ ու հարգանք Լուսինեի հավատարիմ գործընկերներին ու բարեկամներին, տիկին Մարիաննա Հարությունյանին, տիկին Օլիմպիա Սարգսյանին, պրոֆեսոր Լիդա Գևորգյանին և ամենեցուն:

Եվ դարձյալ մեղա, որ հնարավորություն չունենք հիշատակելու բոլորին:

Մեր խոսքն ավարտելուց առաջ, մշենք վերջերս լույս տեսած մի կոթողային հրատարակության մասին: «Գանձասար» աստվածաբանական կենտրոնը լույս է ընծայել «Շարական» մատենաշարի անդրամիկ հատորը: Այստեղ գիտական համեմատությամբ զետեղված են շարականներ՝ եվրոպական ձայնանիշերով: Սա մի անփոխարինելի ձեռնարկ է բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայ հոգևոր երաժշտությամբ: Եվրոպական մի շարք երկրներ արդեն հասցրել են հարյուրավոր օրինակների հայտեր ներկայացնել:

Այս իրողությունն ավելի քան խոսում է: Աշխարհում մեծ հետաքրքրություն կա դեպի հայ հոգևոր երգը, և դա, առաջին հերթին, Լուսինե Զաքարյանի շնորհիվ: Դարերից եկող և դեպի դարերը գնացող հայ երգը շարունակում է իր հաղթարշավը:

Լուսինեի սիրանքը հարատևում է:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԷՆ ԱՐԵՒԵԱՏԵԱՆԻ ՎԱՍՏԱԿԱԾ 70-ԱՄԵԱԿԸ

Լրացաւ յայտնի հայագէտ, հայ փիլիսոփայութեան վաստակաշատ պատմաբան, Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոս, Մաշտոցեան Մատենադարանի տնօրէն Սէն Սուրբենի Արեւշատեանի ծննդեան 70-ամեակը. եօթ տասնամեակից 45-ը գիտնականի աշխատանքային եռամդուն եւ քեղուն գործունեութեան տարիներն են:

Երեւանում ծնունդ է 1928 թ. յունուարի 7-ին, 1945 թ. արծաթէ մեդալով աւարտել է միջնակարգ դպրոցը, 1951 թ., գերազանցութեամբ դիպլոմով՝ Երեւանի պետական համալսարանի պատմութեան ֆակուլտետը, որի գիտական խորհրդի երաշխաւորութեամբ ընդունուել է Գիտութիւնների Ակադեմիայի ասպիրանտուրա, ուր մինչեւ 1954 թ. մասնագիտացել է հայ թիւ եւ միջնադարեան փիլիսոփայութեան պատմութեան խնդիրների մէջ, 1954-1959 թթ. եղել է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի փիլիսոփայութեան սեկտորի ասագ գիտաշխատող (համատեղութեան սկզբունքով այս աշխատանքը շարունակել է մինչեւ 1979 թ.), 1956 թ. պաշտպանել է ականաւոր մատենագիր եւ մանկավարժ Գրիգոր Տաթեւացու փիլիսոփայական հայեացքների քննութեանը վերաբերող թեկնածուական ատենախօսութիւն («Գրիգոր Տաթեւացու փիլիսոփայական հայեացքները», 1957 թ. ուսերէն): 1959 թ. ապրիլից մինչեւ օրս աշխատում է Մաշտոցեան Մատենադարանում՝ սկզբում որպէս սկզբնաղբիրների գիտական թարգմանութեան, 1973 թ. ի վեր՝ թիւ ընագրերի ուսումնասիրման եւ հրապարակման բաժինների վարիչ: 1959-1960 թթ. համատեղութեան կարգով վարել է «Պատմա-քանասիրական հանդէս»-ի պատասխանատու քարտուղարի պաշտօնը: «Փիլիսոփայական գիտութեան ձեւաւորումը թիւ Հայաստանում» խորագրով դոկտորական ատենախօսութիւնը պաշտպանել է 1971 թ. (ուսերէն հրատարակուել է 1973 թ.):

Մերօրեայ այն հայագէտներից է, որ Մատենադարանի գիտական հաստատութիւն դառնալու օրերին խմբուեցին վաստակաշատ ակադեմիկոս Լեւոն Նաչիկեանի շուրջ եւ նրան մեծապէս աստար կանգնեցին Մատենադարանի գիտական դիմագծի ու կերպարանքի ձեւաւորման ամբողջ ընթացքում, իսկ Նաչիկեանի վաղաժամ մահուանից յետոյ Արեւշատեանը դարձաւ նրա ուղղակի ձեւաւորողը՝ 1982 թ. մարտի վերջից մինչեւ օրս Մաշտոցեան Մատենադարանի տնօրէնն է: 1982 թ. յունուարից Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի թղթակից անդամ է, 1996 թ. ապրիլից՝ ակադեմիկոս: Նաեւ Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր է:



Նրա հետազոտությունները նուիրում են հիմնականում հին եւ միջնադարեան հայկական փիլիսոփայության պատմությանը, որին վերաբերող գրաքար բնագրերի եւ նրանց ուսերէն թարգմանությունների ասպարէզում զգալի է Ս. Արեւշատեանի վաստակը. հեղինակ է աւելի քան 150 աշխատության, որոնց մէջ 25-ը՝ մենագրութիւն: Պատմաբանիմ անհրաժեշտ հին ու նոր լեզուների տիրապետումից քացի, որպէս մշակութաբան մասնագիտանալու ընթացքում ձեռք է բերել նաեւ հին Արեւելքի ու Արեւմուտքի փիլիսոփայութեանն ու մշակոյթի պատմութեանը վերաբերող լայն իմացություններ: Գիտական գործունէութիւնն սկսել է փիլիսոփայութեան պատմաբանի, աղբիւրագետի, բնագրագետի եւ թարգմանչի իմացությունների ու հմտությունների զուգակցումով, որի շնորհիւ ամրապնդել է հայ փիլիսոփայութեան պատմութեան յատկապէս վաղ միջնադարեան շրջանի աղբիւրագիտական հիմքը: Միայնակ կամ ուրիշների աշխատակցութեամբ հրատարակել եւ թարգմանել է դեռեւս անտիպ կամ ո՛չ գիտական հրատարակություններով յայտնի կարեւոր բնագրեր. «Հերմեայ եռամեծի առ Ասկղեպիաս սահմանք», Զենոն իմաստասէրի «Յաղագս բնութեան», Յովհան Որոտնեցու «Հաւաքեալի քանից իմաստասիրաց», Յովհան Երզնկացու «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք», «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի», Անանիա Օիրակացու «Տիեզերագիտութիւն» եւ այլն:

«Բանքեր Մատենադարանի» հեղինակաւոր հայագիտական տարեգրքի գրեթէ բոլոր հատորներում Արեւշատեանն ունի մէկը մէկից ուշագրաւ հրապարակումներ եւ ուսումնասիրություններ:

Ներկայիս հայագիտութեան մէջ Արեւշատեանի անունը ո՛չ պատահաբար զուգորդում է Դաւիթ Անյաղթի վաստակի գիտական մշակման եւ հրապարակման հետ. 1960-1980 թթ. Արեւշատեանն առաջաբան-հետազոտություններով եւ ծանօթագրություններով օժտելով, իրար ետեւից հրատարակել է Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն «Ներածութեան» Պորփիրի», «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի» եւ «Մեկնութիւն «Ի վերլուծական» Արիստոտելի» աշխատությունների գրաքար գիտական բնագրերն ու ուսերէն թարգմանությունները, որոնք հետագայում ունեցան առանձին կամ միասնական, ուսերէն եւ հայերէն մի քանի հրատարակություն: Կարեւոր ենք համարում նաեւ Անյաղթի մոյմ գործերի արեւելահայերէն աշխարհաբար տարբերակի հմտալից պատրաստութիւնը (Դաւիթ Անյաղթ, Երկեր, Ե., 1980), որով մեր մատենագրութեան այս կարեւոր յուշարձանները հասու դարձան ժամանակակից բոլոր կարգի հայ ընթերցողներին. թէ՛ ուսերէն եւ թէ՛ աշխարհաբար թարգմանությունները մշակման եւ առնուազն Անյաղթի լուծաբան՝ գրեթէ խորին գրաբարը մեկնաբանել, հասկանալի դարձնել: Այս ամէնի շնորհիւ մեր մեծ մատենագրի ժառանգութիւնն ու հայ հին փիլիսոփայական գրականութիւնը լիովին մատչելի դարձաւ հայրենի եւ համաշխարհային գիտական համրութեանը: Հետազոտողի գրեթէ քսմնամեայ այդ տքմաբան աշխատանքի շնորհիւ է, որ հմարաւոր եղաւ մեր փիլիսոփայական գիտութեան ու գրականութեան ռահվիրայի

ծննդեան 1500-ամեայ յոբելեանը միջազգային համդիսութիւնների ձեւով տօնելը. 1980 թ. միջազգային խոշոր գիտածոողովներ կայացան Երեւանում եւ Փարիզում, 1981 թ.՝ Լոս-Անջելեսում. հայ եւ օտարազգի բազմաթիւ գիտնականների զեկուցումները պատրաստուել էին հիմնականում Արեւշատեանի հրատարակութիւնների հիման վրայ: Վերջիներիս ըստ ամենայնի գործածման վրայ եմ հիմնուած աշխարհի տարբեր մասերում արուած յոբելեանական տարաբնոյթ գրեթէ բոլոր հրատարակութիւնները: Որպէս ասուածի հաստատում յիշատակեմք սրայն մի փաստ. Լոս-Անջելեսի ժողովում կարդացուած բոլոր զեկուցումների մէջ առկայ է Արեւշատեանի հրապարակումների եւ ուսումնասիրութիւնների արդիւնքների վրայ յեմուած լինելու փաստը (տե՛ս «Դաւիթ Անյաղթ փիլիսոփան» (Լոս-Անջելես, 1986. անգլերէն) ժողովածուի՝ Համլէտ Գեորգեանի գրախօսականը.՝ ՀՄՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտութիւնների, 2/1988, էջ 81-8):

Արեւշատեանի «անյաղթագիտութեան» հետ սերտ կապ ունի մրադոկտորական թեզի միւթը՝ «Փիլիսոփայական գիտութեան ձեւաւորումը հիմն Հայաստանում». այս գրքի մէջ հսկայական աշխատանք է արուել. պարզուել եմ բազմաթիւ երակէտային հարցեր, ճշգրտուել մեր մատենագրութեան վաղ շրջանի թարգմանական եւ ինքնուրոյն իմաստասիրական բնոյթի աղբիւրների յարաբերակցութեան խնդիրներ, յումաբան դպրոցի գործունէութեան պատմութեան մոր պարբերացում եւ այլն:

Ուշագրաւ է Արեւշատեանի՝ մաեւ «Միջնադարեան Հայաստանի փիլիսոփայական դպրոցների պատմութեան շուրջ» (1980. ոուսերէն) գրքոյկը, որ հայ միարարների ստեղծած թարգմանական եւ ինքնուրոյն գրականութեան իմաստասիրական մասին մոտիկուած առաջին յատուկ ուսումնասիրութիւնն է: Նոյնպէս օգտակար եւ ինքնատիպ է Ա. Մաթեոսեանի հեղինակակցութեամբ հրատարակած «Գլածորի համալսարանը միջնադարեան լուսաւորութեան կենտրոն» (1984) գործը:

Նրա կարեւոր վաստակների շարքում անպայման յիշատակելի է Հայոց պատմութեան («Հայ ժողովրդի պատմութիւն») ակադեմիական ութհատորեակի համապատասխան հատորներում զետեղուած այն աշխատութիւնը, որ ներկայացնում է Ե-ԺԸ դարերի մեր փիլիսոփայութեան պատմութիւնը, եւ որի մէջ ամփոփուած եմ միւթի հիմ եւ մոր բոլոր ուսումնասիրութիւնների արդիւնքները: Կազմել, թարգմանել ու հրատարակել է «Արեւելեան երկրների երածշտական գեղագիտութիւնը» (Մոսկուա, 1967) եւ «Համաշխարհային փիլիսոփայութեան ծաղկաքաղ» (Մոսկուա, 1967) ժողովածուների միւթի հայկական մասերը:

Ներկայացուած որակներից բացի, ունի մի այլ կարեւոր յատկանիշ եւս՝ որպէս շարադրող հեղինակ երկլեզու է. հաւասար հմտութեամբ շարադրում է թէ՛ հայերէն եւ թէ՛ ոուսերէն: Վերջին կարողութեան շնորհիւ մաեւ խմբագրել է միջնադարեան ամենատարաբնոյթ եւ տարատեսակ աղբիւրների ոուսերէն գիտական թարգմանութիւններ:

Ղեկավարելու, ընդդիմախօսելու, գրախօսելու եղանակով աջակցում է

դոկտորական եւ թեկնածուական ատենախօսութիւնների եւ ուսանողական աւարտաճառների պաշտպանութիւններին, դրանով իսկ գործում մասնակցութիւն ունենում երիտասարդ գիտաշխատողների մասնագիտացմանն ու հմտացմանը:

Տարբեր խնդիրների վերաբերող զեկուցումներով մասնակցում է նաեւ մատենադարանեան, հայաստանեան ու միջազգային գիտաժողովների, այսինքն՝ իր աշխատանքները գիտական հանրութեանն է ներկայացնում ընդունուած բոլոր եղանակներով:

Մեր ապրած վերջին ծանր տասնամեակի ընթացքում ՍԷՆ Արեւշատեանը պատուով կրեց նաեւ գիտութեան կազմակերպչի իր ո՛չ թեթեւ բեռը. Մատենադարանը կարողացաւ պատուով կատարել հայ ձեռագրական ծառանգութեան պահպանման կարեւորագոյն խնդիրը եւ կենսունակ մնաց որպէս գիտական հաստատութիւն՝ հրատարակեց կարեւոր ու մնայուն աշխատութիւններ:

Ունի նաեւ գիտա-հասարակական լայն ու ծանրաբեռն գործունէութիւն. «Բանքեր Մատենադարանի» տարեգրքի գլխաւոր խմբագիրն է, «Պատմա-բանասիրական հանդէս»-ի եւ ՀՀ ԳԱԱ «Լրաբեր»-ի խմբագրական լաճճնախմբերի անդամ. նախագահն է Մատենադարանի գիտխորհրդի, Հայ-հնդկական բարեկամութեան ընկերութեան պատուաւոր նախագահը, անդամը «Պո-Արաքս» ընկերութեան (Վենետիկ) և Փիլիսոփայական ակադեմիայի, թղթակից-անդամը «Արարատ» միջազգային ակադեմիայի, անդամը՝ Երեւանի պետական համալսարանի փիլիսոփայութեան ֆակուլտետի, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայութեան եւ իրաւունքի ինստիտուտի և Արխիւային վարչութեան գիտխորհուրդների, ՀՀ Գիտութեան եւ կրթութեան նախարարութեան կոլեգիայի, Եւրոպայի մշակոյթի ընկերութեան (Վենետիկ):

Անկախ մասնագիտութիւնից ու զբաղմունքից, ցանկացած ասպարէզի ցանկացած անհատի վաստակի, աշխատանքային եւ մարդկային յարաբերութիւնների մէջ կարեւոր դեր ունի նրա մարդկային բնատրութիւնը. այս առումով Ս. Արեւշատեանը բնորոշում է երեք հիմնական բառով՝ քարի, անչար եւ կիրթ, սրանց վրայ էլ կառուցում է իր կեանքը:

Ենթահատրելով գիտնականի վաստակած յոբելեանը, ուրախութեամբ արձանագրելով նրա քաջատողջութիւնը, իր կարեւոր գործի մէջ ցանկանում ենք նոր յաջողութիւններ, վաստակներ ու նուաճումներ:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԵՐԿԱՐ ՍՊԱՍՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական քարձր հովանավորությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանում լույս տեսնող գիտա-կրոնական հիմնարար հրատարակությունների թիվը հավելվեց ևս մեկով: Բարեբարությամբ Լոնդոնի Միհրան և Ազմիլ Հսեֆյան հիմնադրամի և աշխատասիրությամբ քանասիրական գիտությունների հիմնադրամի Պիոն Հակոբյանի, լույս տեսավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ ժամանակի ճանաչված միաբան ու նշանավոր հայագետ Գալուստ Տեր-Մկրտչյանի «Հայագիտական ուսումնասիրություններ»-ի Բ հատորը:

Շուրջ քառորդ դար առաջ Երևանի Պետական համալսարանի հայագիտական կենտրոնի վարիչ, այժմ արդեն հանգուցյալ Էմմանուել Պիվազյանի նախաձեռնությամբ սկսվեց Գ. Տեր-Մկրտչյանի գիտական ժառանգության հավաքումն ու ի մի բերումը՝ Պիոն Հակոբյանի գլխավորությամբ: Առաջին հատորը լույս տեսավ 1979 թ. Երևանում, համալսարանի հրատարակությամբ, որից հետո սկսվեցին երկրորդ հատորի կազմման աշխատանքները:

Վերջինիս այսքան ուշ տպագրվելը պայմանավորված էր ոչ միայն տպագրության հետ կապված դժվարություններով, այլև նրանում զետեղվելիք նյութերի հրատարակության պատրաստելու և դրանց համակողմանի ծանոթագրման աշխատանքներով, որի ընթացքում հետազոտողը՝ Պ. Հակոբյանը, շարունակել է Գ. Տեր-Մկրտչյանի արխիվում պահվող նյութերի հրատարակության պատրաստումը, ինչպես նաև հեղինակի մի շարք գործերի ու նամակների բնագրերի լուսապատճենները ձեռք բերելու համար տևական թղթակցություն վարելը Հայաստանից դուրս գտնվող գիտական հաստատությունների հետ՝ մինչ այս հատորի լույս տեսնելու պահն իսկ այն համայնելով անհրաժեշտ նոր նյութերով:

Հոգևոր, քառոյական մի խորհուրդ ունի իր ապրած ծանր և դժվարին կյանքում հայագիտության բարձունքներին հասած և ժամանակին Մայր Աթոռի ճանաչված ու հեղինակավոր միաբաններից մեկը եղած Գ. Տեր-Մկրտչյանի հայագիտական ժառանգության մի մասն ամփոփող սույն հատորի հենց Ա. Էջմիածնում տպագրելը:

800 էջից անցնող ծավալուն այս գիրքը կազմված է չորս ստվար քաժիմներից: Առաջին՝ «Մանր ուսումնասիրություններ և բնագրեր» քաժիմում, ինչպես առաջաբանում գրում է Պ. Հակոբյանը, «ընդգրկված են Գ. Տեր-Մկրտչյանի հայագիտական փոքրածավալ հետազոտությունների և հրատարակած բնագրերի այն մասը, որոնց բովանդակությունն են կազմում 6-րդ ու հետագա դարերի հայոց իմաստասիրական ու աստվածաբանական ըմբռնումները, Հայաստան աշխարհում ծայր առած բուռն վեճերն ու պայքարը դավանաբանական և նվիրապետական խնդիրների շուրջ, ապա և՛

մի քանի ուշագրավ վկայաբանական հուշարձաններ՝ հավատի ու համոզումի համար զոհված քրիստոնյա մահաւորների մասին, որոնք իրենց վեհ արարքով պանծացել են Հայաստանյայց Առաքելական եկեղեցին»:

Երկրորդ՝ «Մածկագրություն և վիմագրություն» խորագրված բաժնում ներկայացված են Գ. Տեր-Մկրտչյանի կատարած վերծանությունները, այդ թվում և Հայոց Այքուրեցի ծածկագրի այն համակարգը, որով միմյանց գրում էին Ներսես Աշտարակեցի և իր կողմնակիցները Դավիթ-Դանիելյան հակամարտության շրջանում:

Երրորդ՝ «Զանազան հոդվածներ և նկատողություններ» բաժնում զետեղված հոդվածները գալիս են վկայելու հեղինակի տեսական մեծ պատրաստվածությամբ, հանրագիտակ իմացությունների և գիտական ու հասարակական հետաքրքրությունների լայն և ընդգրկուն շրջանակի մասին: Այստեղ զետեղված գործերը վերաբերվում են թե՛ գրական մեր հայերենի կազմավորման հարցերին և թե՛ Հայաստանի աշխարհագրությանն ու հեղինակի գիտական հետազոտությունների թույն քննազավառին՝ հայ մատենագրությամբ, որը ևս ներկայացված է ժանրային բազմազանությամբ և ժամանակային մեծ ընդգրկմամբ՝ խորեմացու «Տենչայր Սաթենիկ» մշամավոր հատվածի բացատրության փորձից մինչև Պատկանյանի ստեղծագործությունների արժևորումը:

Գրքում զետեղված պատմա-բանասիրական այս հոդվածներն ու մի շարք մատենագիտական երկերի գիտա-քննական քննադրերը, որոնք լույս են տեսել ժամանակի պարբերականներում և կամ մաս են կազմել տարբեր հրատարակությունների, այժմ առանձին մի հատորով հրատարակվելով եթե մասնատում են հեղինակի գրական ժառանգության մեկտեղված լույսընծայմանը, ապա վերջին բաժնում բերված 107 մամուլների գերակշիռ մասը կա՛մ տպագրվում է առաջին անգամ և կա՛մ էլ ժամանակին դարձյալ լույս է տեսել Պ. Հակոբյանի աշխատասիրությամբ:

Գ. Տեր-Մկրտչյանը 1888 թ., ծանր հիվանդամալով, ընդմիջտ գրկվում է քայլելու ունակությունից, սակայն, գամված միաբանական իր խցի անկողնում, էջ առ էջ ուսումնասիրելով Մայր Աթոռի մատենադարանի ձեռագիր մատյանները, ուժ և կամք է գտնում՝ շարունակելու իր գիտական հետազոտությունները: Անձնական այս ցավի և մարդկային ողբերգության մասին մա գրեթե ոչինչ չի գրում մամուլներում, իսկ եթե հիշում էլ է հիվանդությունը, ապա հիշում է դիմացինին բացատրելու, թե ինչու է ուշացրել մամուլի գրությունը և կամ ինչու ի գորտ չէ կատարել այս կամ այն գիտական աշխատանքը:

Անձնական հարցեր գրեթե չշոշափող այս մամուլները կարելի է բաժանել երկու խմբի. առաջինը մամուլի ձևով գրված և տարբեր պարբերականներին ուղղված արձագանք-պատասխաններն են դրանցում լույս տեսած գիտա-հասարակական տարաբնույթ հրապարակումների, իսկ երկրորդ խմբի մամուլներում անկողնում գամված գիտական հոգևորականը,

որն այս հիվանդության պատճառով չձեռնարկվեց և դպիրի աստիճանից չբարձրացավ, ժամանակի նշանավոր հայագետներից պատմում է իր գիտական հետազոտությունների ընթացքի և ապագա ծրագրերի մասին, պատասխանում իրեն ուղղված տարաբնույթ հարցերին:

Անկողնուց զամված լինելով հանդերձ, զարմամահրաշ կերպով, նա ուշի-ուշով հետևում է հայագիտության զարգացմանը Ռուսաստանում ու Եվրոպայում, հետազոտողների և ժամանակի գիտական պարբերականների ուշադրությունը հրավիրում լուսաբանության կարոտ այս կամ այն խնդրի վրա, որոնցից շատերի քննությունը ծրագրել էր կատարել ինքը և որը հնարավոր չեղավ իրականացնել հիվանդության պատճառով: Գրքի առաջաբանում այս մասին ասվում է. «Նամակները մի կողմից հայագետի կենսագրության անխաղախ վավերագրերն են, անկեղծ ու մտերմիկ ինքնախոստովանություններ, մյուս կողմից՝ հայագիտական ապագա հետազոտությունների ծագրեր կամ ստվերագծեր, որոնցից շատերն այդպես էլ մարմին չառան և մնացին արծարծման այն վիճակում, որքանով թույլ էին տալիս մասկանու անձուկ սահմանները»:

Հատորում տեղ գտած հոդվածներն ու նամակները օժտված են ակադեմիական հրատարակության համար անհրաժեշտ ծանոթագրություններով, որոնցում, գրության, տպագրության և բնագրի պահպելու տեղի և ժամանակի մասին անհրաժեշտ տեղեկությունները հաղորդելուց բացի, համապատասխան ծանոթություններ են տրվում յուրաքանչյուր հոդվածում և մաքսկում քննված հարցերի և հիշված անձնավորությունների մասին, և, որ ամենակարևորն է, բերվում են Գ. Տեր-Մկրտչյանի այս գործերի վերաբերյալ հայագիտության մեջ հայտնված կարծիքները, շնորհիվ որոնց մեծ ծանոթագրությունները վերածվում են տվյալ թեմայի ուսումնասիրության պատմության մի յուրօրինակ մատենագիտության, իսկ հատորի վերջում զետեղված անվանացանկը օգնում է որոնվող հարցի մասին կարդալու համար միայն բովանդակության ցանկին չդիմել, այլև այն փնտրել համապատասխան անվան դիմաց նշված էջերում: Առաջաբանից տեղեկանում ենք, որ այս հատորը հրատարակության պատրաստելու աշխատատար և ծանր գործում աշխատասիրողին օգնել է դուստրը՝ Անահիտ Հակոբյանը:

Գալուստ Տեր-Մկրտչյանի պես գիտական ամենալայն հետաքրքրությունների տեր գիտնականի գործերը նման հանգամանալից ծանոթագրություններով, քաջատրություններով և ցանկերով հրատարակելու համար հարկավոր էր Պիոն Հակոբյանի հանրագիտակ իմացությունը, զարմանալի նվիրումը և գիտական քաջատիկ բարեխղճությունը:

Մաղթենք, որ բազմավաստակ գիտնականի համար առաջիկա տարիներից յուրաքանչյուրը նշանավորվի մեր դասական գրականությամբ և գիտությամբ նվիրված իր մյուս ծանրակշիռ աշխատանքների ամբողջացմամբ և հրատարակությամբ:

«ԻՆՉ ՏՈՒՐ ՔՈ ՅԱՎԸ»

Այսպես է խորագրել 1988 թ. դեկտեմբերյան ամիս երկրաշարժի և նրան հաջորդող ծանր օրերի մասին պատմող իր գիրքը լրագրող, «Հայաստան» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ Տիգրան Նիկողոսյանը: Մշակույթի հայկական ֆոնդի հրատարակած այս գրքի սկզբում հեղինակն ասում է, որ ինքն այն չի գրել աղետը վերապրողների անթեղված վերքերը բորբոքելու համար, այլ գրել է նրանց համար, ովքեր չեն տեսել և չեն ապրել մղձավանջային այդ օրերը և գրել է նրանց մասին, ովքեր ծանր այդ օրերին օգնության ձեռք մեկնեցին մեր ժողովրդին և ասացին. «*Ինչ տուր քո ցավը*»:

Գրքում աղետի գոտին ներկայացված է տարածաժամանակային երեք չափումներով՝ երկրաշարժից առաջ, երկրաշարժի օրերին և հետո: Առաջին՝ «Հիշողության թերթիկ» ակնարկում հեղինակը պատմում է 1986 թ. Սպիտակ իր ամոքանիկ գործուղման մասին: Նույն կերպ քերում է 1980-ական թթ. իր գործուղումներից վերհուշներ և քաղվածքներ այդ ընթացքում գրված հոդվածներից, որոնցում պատմվում է, թե այն շրջաններում, ուր մի քանի տարի անց հարվածելու էր ամիս երկրաշարժը, մեր ժողովուրդը, դարասկզբի ծանր տասնամյակները հաղթահարելով, ինչպես էր արդեն ուղղել իր մեջքը և սկսել ապրել լիարժեք աշխատանքային ու գիտամշակութային կյանքով: 1988 թ. երկրաշարժից հետո լրագրողը նորից անցնում է այդ նույն ճանապարհներով, հանդիպում իր ակնարկների հերոսներին կամ խոնարհվում նրանց թաղմ շիրիմների առջև...

Ինչպես մեր ժողովրդի պատմության վերջին տասնամյակի համար, այնպես էլ գրքի կառուցվածքային մասն հղացման տեսանկյունից, դարձակետային է դեկտեմբերի յոթը, որը հեղինակը կարողացել է ներկայացնել զարմանալիորեն այնքան կենդանի և ընդհանրացված կերպով: Այդ տողերն ընթերցելիս թվում է, թե ժամանակը ետ է գլորվել և 1988-ի փետրվարյան վերազարթոնքին հաջորդած հերթական լարված օրն է սկսվում՝ միութենական մամուլի հերյուրանքներով և Արցախից եկող ծանր լուրերով լեցուն, ապա մայրաքաղաքը ևս ցնցվում է երկրաշարժի ալիքներից և, դեռ մեկ ժամ էլ չանցած, Երևան են սկսում հասնել առաջին լուրերը և, վերջապես, ժամը 14.00-ին ռադիոյով հնչում է «Արտակարգ հաղորդում»-ը:

Երկրաշարժին հաջորդած օրերի մասին, սակայն, հեղինակն արդեն որպես վերհուշ չի գրում՝ հետադարձ մի հայացքով դիտարկելով 1988-ի դեկտեմբերը, այլ այն ներկայացնում է այդ օրերին «Դպրություն» թերթում, ուր ինքը դարձյալ խմբագրի տեղակալ էր, ընթերցողների աղետի գոտուն օգնելու մասին հայտնող իրենց հավաստիացումներով, որոնց շնորհիվ այս գիրքը իրենում կրում է այն օրերի կենդանի թրթիռը: Նման նյութերով, հեղինակի իսկ բնորոշմամբ, անկատելիորեն «սկսվում էր հյուսվել մեծ ցավի տարեգրությունը»:

Տպագրված ու չտպագրված այս թղթակցություններն ու նամակները, ինչպես նաև մի շարք լուսանկարներ խնամքով պահելով և դրանք անհրաժեշտ մեկնաբանություններով, բացատրություններով ու խորհրդածություններով վարպետորեն իրար միահյուսելով, ներկայացնում է ոչ միայն այդ օրերի ժամանակագրությունը, այլև, որ ամենակարևորն է, այդ օրերի ժողովրդային հավաքական ընկալումը և անկեղծ ու ինքնաբերական արձագանքը, երբ հանրապետության տարբեր շրջաններից խմբագրությունն ստանում էր գրեթե միանման բովանդակությամբ և հուզականությամբ գրված նամակներ:

Համամյան գեղեցիկ և հուզիչ օրինակներով պատմվում է նաև, թե հայ ժողովրդի ցավին ինչպես արձագանքեցին խորհրդային Միության ու աշխարհի ժողովուրդները և մախկին Միության տարբեր հանրապետություններում ինչ ջերմությամբ ապաստան տրվեց մեր աղետյալ հայրենակիցներին:

Ինչպես սկզբում ասացինք, գրքում դեկտեմբերյան երկրաշարժը ներկայացվում է տարածածամանակային երեք չափումներով՝ երկրաշարժից առաջ, այդ օրերին և հետո: Երկրաշարժին մախորդող շրջանի մասին գրելիս՝ Նիկողոսյանը շարունակ ցույց է տալիս, թե դարասկզբին Եղեռն, ապա և քաղաքացիական պատերազմ, հեղափոխություն, 1937 թ., Հայրենական մեծ պատերազմ ու 1947 թ. աքսոր տեսած սերունդը ինչպես կարողացավ 1950-ական թվականներից ոտքի կանգնել և ուղղել իր մեջքը:

Երկրաշարժից 10 տարի անց գրված այս գիրքը հեղինակն ավարտում է 1998 թ. օգոստոսով և սեպտեմբերով թվագրված երկու դրվագներով, որոնք արդեն մվիրված են աղետի գոտում կյանքի վերընձնուղմանը:

Մաղթենք, որ երկրաշարժից ևս 10 տարի անց Տիգրան Նիկողոսյանը շարունակի այս գիրքը՝ արդեն գրելով, թե ինչպես, իր պատերի նման, ետերկրաշարժյան սերունդը ևս, մեր ժողովրդին բնորոշ տոկունությամբ և արարելու ձիրքով, ամոքեց ահեղ երկրաշարժի ու դաժան պատերազմի հասցրած վերքերը՝ վերստին ծաղկեցնելով և շենացնելով մեր Հայրենիքը:

ՎԱՐԴԱՆ ԳԵՎՐԻԿՅԱՆ

ԱՆՅՐ ԿԹՈՌՈՒՄ
ԵՎ ԽԵՄԵՐՈՒՄ



ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՄԱՄԼՈ ՍՍՈՒԼԻՍԸ

Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական քարձր տնօրինությամբ սույն թվականի նոյեմբերի 30-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը նշանակվեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ, մի երևույթ, որ, իր նախադեպը չունենալով Հայոց Եկեղեցու պատմության մեր շրջանում, տարբեր արձագանքներ գտավ Հայաստանյան մամուլում: Լրատվամիջոցների էջերում հայտնվեցին միմյանց հակասող կարծիքներ ու տեսակետներ: Որպեսզի ավելի լայն շրջանակներ չընդգրկի օրավուր աճող հետաքրքրությունը և վերջնականորեն պատասխան տրվի շատերին հուզող այդ և նմանատիպ այլ հարցերի, դեկտեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի կողմից հրավիրվեց մամուլ ասուլիս, որին մերկա էին Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, ինչպես նաև հոգեշնորհ Տ. Արտակ արքեպ. Տիգրանյանը:

Ծիշտ մեկ ժամ տևած ասուլիսին մասնակցում էին 40-ից ավելի լրագրողներ: Առաջադրվեցին բազմաբնույթ հարցեր, որոնց Փոխանորդ Սրբազան Հայրը պատասխանեց ամենայն մանրամասնությամբ:

Ինչպես լրացուցիչ բացատրության մեջ նշեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, մինչև 1918 թվականը Հայաստանյայց Եկեղեցին առաջնորդվում էր «ՊՈԼԺՆԻՍ»-ով, որում հայրապետական փոխանորդի պաշտոն չկար, վարչական գործունեությամբ զբաղվում էր ՍԻՆՈՂ-ը: Կաթողիկոսը միայն տարեկան չորս ամիս անընդմեջ բացակայելու իրավունք ուներ Մայր Աթոռից: Եթե ավելի երկար ժամանակով էր բացակայելու, ապա նման պարագայում ցարից պետք է հատուկ արտոնություն վերցներ: Իսկ երբ Կաթողիկոսը հիվանդ էր, Սինոդի ավագազույց եպիսկոպոսը (Սինոդը բաղկացած էր լինում երեք եպիսկոպոսներից, երեք վարդապետներից) փոխարինում էր Կաթողիկոսին՝ առանց քվեարկելու իրավունք ունենալու: Փաստորեն մեր Եկեղեցում Կաթողիկոսական Փոխանորդի պաշտոնը չի գործել:

Ասուլիսն սկսվեց Տերունական աղոթքով, ապա մերկաներին հակիրճ խոսքով դիմեց Ներսես Սրբազանը՝ ի մասնավորի ասելով.

«Ողջունում եմ մամուլի ներկայացուցիչներին՝ ասուլիսի առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանում: Վերջին օրերին մեր մամուլի մեջ մեծապես արձագանք գտավ Հայրապետական Տնօրինության հրապարակումը, համաձայն որի Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը Վեհափառ Հայրապետի կողմից նշանակվել է Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ:

Մենք՝ Մայր Աթոռի միաբաններս, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներս, պաշտոնեությունը Մայր Աթոռի, սրտագինս շնորհավորեցինք Գարեգին Սրբազանին՝ մաղթելով նրան համբերություն և անկտրուս եռանդ իր ստանձնած դժվարին պարտականության առիթով: Այս տնօրինությունը ոչ միայն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ է առնչվում, այլև Հայաստանյայց Եկեղեցու հետ ընդհանրապես, և այդ առիթով էլ այսօր հրավիրել ենք ձեզ՝ առավել պարզաբանումներ տալու ձեզ հետաքրքրող հարցերին»:

Այնուհետև Ներսես Սրբազան ընթերցեց Հայրապետական Տնօրինության գիրը:

Իր խոսքում Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը մախ շնորհակալություն հայտնեց ընձեռված հմարավորության համար և ապա ավելացրեց.

«Ես առաջին հերթին մախ ուզում եմ շնորհակալությունս հայտնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողոսպալյանին, որ, վաճական Խորհրդի մյուս անդամների հետ միասին, այս հմարավորությունը ընձեռեց՝ հրավիրելով մասնի այս աստվիսը՝ ծանուցելու համար Վեհափառ Հայրապետի Հայրապետական Տնօրինությունը կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ նշանակելու կապակցությամբ:

Ծանկանում եմ շնորհակալություն հայտնել ման ձեզ՝ այցելության, մեր կողմից եղած հրավերքին ընդառաջելու համար: Ողջունում եմ բոլորիդ ներկայությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Սա մեր անդրանիկ հանդիպումն է, սակայն վստահ եմ, որ հետագայում մեզն առիթներ մենք դեռ կունենանք տարբեր հարցերի առնչությամբ, տարբեր առիթներով:

Ինչպես գիտեք, այս վերջին շաբաթը ես գտնվում էի Միացյալ Նահանգներում: Երկու-երեք օր է, ինչ վերադարձել եմ և ուրախ եմ ծանուցելու ձեզ, որ այնտեղ հանդիպեցի Վեհափառ Հայրապետի հետ: Նորին Սրբության առողջական վիճակը շատ լավ է: Հետվիրաճատական ապաքինման շրջանը բարեհաջող է ընթանում, սպասվածից ավելի ցանկալի արդյունքներ են արձանագրվում: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ երկու ամսից հետո հավանաբար կվերադառնա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Հայրապետական իր ծառայությանը՝ առաջնորդելու մեր Եկեղեցին և մեր հավատավոր ժողովրդին:

Արդեն Հայրապետական Տնօրինությունից և մամուլում եղած հրապարակումներից գիտեք, Վեհափառ Հայրապետը, մկատի ունենալով, որ բավականին ժամանակ պետք է բացակայի և հետագայում էլ, առողջական պատճառներով հարկադրաբար բացակայությունները կշարունակվեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, մեզն տնօրինում է կատարել՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի պաշտոնը կյանքի կոչելով և այդ պաշտոնին նշանակելով ինձ: Այդ կապակցությամբ ուզում եմ իմ խորին երախտագիտությունը հայտնել Վեհափառ Հայրապետին այս վստահության համար:

Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդի պաշտոնի հասկացությունը մեր եկեղեցական կյանքում եղել է, սակայն գոնե այս դարաշրջանում

կիրառություն չի ունեցել, գործադրության մեջ չի եղել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Այն նշանակովի պաշտոն է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կամ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի կողմից: Վստահ եմ, որ քաղաքականին հարցեր կունենաք: Արդեն իսկ անցյալ օրերին մասնավոր եղան որոշ հարցադրումներ, որոշ մտածումներ, որոնք կարոտ էին լուսաբանման»:

Գարեգին Սրբազանի խոսքին հաջորդեցին լրագրողների հարցերը:

ՀԱՐԹ.- Սրբազան Հայր, որպես Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ, որո՞նք են լինելու Ձեր առաջին քայլերը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ամենից առաջ ես պետք է ամեն ամեն ինչ, որպեսզի կարողանամ արդարացնել Վեհափառ Հայրապետի մեծ վստահությունը՝ Մայր Աթոռի ողջ գործունեությունը, վարչական աշխատանքները կազմակերպելու համար: Ընթացիկ աշխատանքները պետք է կարգավորվեն: Այնպես որ մեր ծառայությունն այդ կլինի և ծանոթացում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ողջ գործունեությանը, որից հետո թերևս լինեն մտածումներ, գաղափարներ, առաջարկներ, որոնք կներկայացվեն Վեհափառ Հայրապետին, կքննարկվեն Գերագույն Հոգևոր Խորհրդում և, ունենալով Հայոց Հայրապետի հավանությունը, աստիճանաբար կփորձենք դրանք կյանքի կոչել, իրականացնել:

ՀԱՐԹ.- Որքա՞ն ժամանակով է Մայր Աթոռից քացակալելու Վեհափառ Հայրապետը և, ըստ այդմ, որքա՞ն է տևելու Ձեր այս պաշտոնը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ինչպես ասացի, Վեհափառ Հայրապետի իրավունքն է այս նշանակումը և այս պաշտոնը կգործի այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ կնկատի Նորին Սուրբ Օծությունը:

ՀԱՐԹ.- Հայ Եկեղեցու պատմությունն արժանագրե՞լ է մեզն փաստ և հատկապես ո՞ր Կաթողիկոսն է նշանակել ընդհանուր փոխանորդ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Նման պարագա ինձ հայտնի չէ, ծանոթ չէ: Ընդհանրապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում երբ վախճանվել են Կաթողիկոսները, եպիսկոպոսաց դասը հավաքվել և ընտրել է Կաթողիկոսական Տեղապահ, որը վարել է Ամենայն Հայոց Կաթողիկոսության ընթացիկ գործերը՝ մինչև մեր Հայրապետի ընտրությունը:

ՀԱՐԹ.- Համատեղելո՞ւ եք Առաջնորդական փոխանորդի պաշտոնը մորի հետ, թե՞ Ձեզ ես կփոխարինեն Արարատյան Հայրապետական թեմում:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ, ամեն օր առավոտյան պետք է գտնվեմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ հետևելու և կարգավորելու Մայր Աթոռի գործերը, այստեղ կլինեմ մինչև ժամը մեկն անց երեսուն րոպե, որից հետո մեկնելու եմ Երևան՝ Արարատյան թեմի առաջնորդարան՝ այնտեղ թեմի աշխատանքները վարելու: Իսկ երեկոյան կրկին պետք է վերադառնամ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՀԱՐԹ.- Ինչպես նշվեց, Կաթողիկոսական Փոխանորդի պաշտոնը եղել է Հայոց Եկեղեցում, սակայն Մայր Աթոռի պարագային չի գործածվել: Այդ դեպքում ինչո՞ւ Վեհափառ Հայրապետը չնշանակեց Աթոռակից Կաթողիկոս:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Աթոռակցության պարագան կաթողիկոսական

իրավասությանց մեջ չէ: Աթոռակիցը մույնպես ընտրվում է Ազգային-եկեղեցական ժողովի կողմից: Աթոռակից է ընտրվում այն դեպքում, երբ Կաթողիկոսը, ելնելով առողջական վիճակից, անկարող է դառնում իրականացնել իր պարտականությունները մեր Եկեղեցու և ժողովրդի կյանքում: Ուրեմն, մամն պարագա գոյություն չունի այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում, Վեհափառ Հայրապետը կարող է ժամանակավոր բժշկական խնամքի, և մենք աղոթում ու մաղթում ենք, որ մա շուտափույթ վերագտնի իր առողջությունը և վերադառնա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ վարելու Հայրապետական գործունեությունը:

ՀԱՐԾ.- Դուք ԱՄՆ-ում անցկացրեցիք երկու շաբաթ: Մի քանի խոսքով ներկայացրեք Ձեր ունեցած հանդիպումներն այնտեղ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Բնականաբար, առաջին հանդիպումը Վեհափառ Հայրապետի հետ էր: Ներկայացանք Հայոց Հայրապետին և հետաքրքրվեցինք մրա առողջականով ու մեր բարեմաղթանքները հայտնեցինք Նորին Սրբությանը: Այնուհետև Վեհափառը հայտնեց իր որոշման մասին: Ես որդիական իմ հնազանդությունը հայտնեցի Հայոց Հայրապետին՝ պատրաստականությամբ ստանձնելու առաջադրված այդ դժվարին պաշտոնը: Աշխատանքների հետագա կազմակերպման առնչությամբ մի քանի հանդիպումներ ունեցանք Նորին Սրբության հետ՝ ճշտելու որոշակի խնդիրներ, պարագաներ, հարցեր, որոնք կապվում են, որպես Կաթողիկոսական Փոխանորդ, մեր աշխատանքների կազմակերպման հետ:

Այս ճամփորդության ժամանակ առիթ ունեցա մաև հանդիպելու Հայ Բարեգործական Ընդհանուր Միության մախագահի հետ: Ինչպես գիտեք, ՀԲԸՄ Կենտրոնական վարչությանց անդամ եմ, և Արարատյան Հայրապետական թեմը սերտ համագործակցություն ունի ՀԲԸՄ-ի հետ: Թեմում գանազան ծրագրեր հովանավորվում, գործում են ՀԲԸՄ-ի մյուսական, ֆինանսական աջակցության շնորհիվ: Ներկայացրեցինք հետագա ծրագրերի առաջարկներ, ինչպես մաև հաշվետվություն՝ կատարված աշխատանքների վերաբերյալ, այն ծրագրերի շուրջ, որոնք հովանավորվում են ՀԲԸՄ-ի կողմից:

Հանդիպում ունեցանք մաև թեմակալ առաջնորդի հետ, որի ընթացքում ևս գրուցեցինք մեր Եկեղեցու կյանքին առնչվող գանազան հարցերի, խնդիրների շուրջ: Որից հետո, օգտագործելով ընձեռված առիթը, արդեն իսկ Միացյալ Նահանգներ մեկնելու այս ճամփորդությունը մեր կողմից ծրագրված էր և, առիթն օգտագործելով, խնդրեցինք Վեհափառին, որ, մինչ մոր պաշտոնին անցնելը, չորս-հինգ օր ժամանակ տրամադրի, հատկացնի, որպեսզի կազմակերպենք մեր հանգիստը, որից հետո վերադարձանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՀԱՐԾ.- Դուք հասարակայնության լայն շրջանում հայտնի եք որպես գործունյա և սիրված հոգևորական: Ստանձնելով այս մոր պաշտոնը՝ ի՞նչ ընթացք կտաք Ձեր եկեղեցանվեր ծառայությանը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ընդհանրապես ձեր գնահատականի համար՝ իբրև գործունյա և սիրված հոգևորական ներկայացնելու: Այս պարագային ուզում

եմ ասել, որ, որպես Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ, պետք է եկեղեցու ընթացիկ գործերի կազմակերպմամբ զբաղվեմ: Բնականաբար, այն խնդիրները, այն հարցերը, որոնք առկա են և հուզում են մեր ժողովրդին ու եկեղեցական կյանքը, պետք է ամփոփվեն, քննարկվեն եկեղեցական համապատասխան կառույցներում և քննարկման արդյունքները ներկայացվեն Հայոց Հայրապետի տնօրինությանը: Ստանալով Նորին Սրբության տնօրինությունը՝ առաջադրված տարբեր հարցերի առնչությամբ, լծվել այդ տնօրինության կենսագործմանը: Այս է լինելու մեր առաքելությունը, այս է լինելու մեր աշխատանքը: Բնականաբար, ընթացիկ գործունեության կազմակերպման ընթացքում կլինեն հարցեր, որոնք լուծելու, կարգավորելու և ընթացք տալու տեսանկյունից մեր իրավասությանց շրջանակներում կլինեն:

ՀԱՐՑ.- Այսօր ի՞նչ վիճակում է Հայ Առաքելական Եկեղեցու կանոնադրության մշակումը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Հայոց Հայրապետի կողմից ստեղծվել է Հայ Եկեղեցու կանոնադրության կազմման մի հանձնաժողով, որը բավականին երկար աշխատեց այդ կանոնադրության ձևավորման վրա: Այդ հանձնաժողովն այսօր իսկ Հայոց Հայրապետին է ներկայացրել կանոնադրության մի տարբերակ, որը վեհափառ Հայրապետի կողմից պետք է տրամադրվի մեր թեմակալ առաջնորդներին, եպիսկոպոսաց դասին՝ նրանց կարծիքներն ունենալու և, վերջնական խմբագրության ենթարկելուց հետո, ներկայացնելու ինչպես Գերագույն Հոգևոր Խորհուրդ, այնպես էլ Ազգային Ժողով: Ժամկետները պայմանավորված են աշխատանքի ամբողջացմամբ:

ՀԱՐՑ.- Դուք մոտիկից ծանոթ եք Հայաստանյայց Եկեղեցու ամենացավոտ խնդիրներին: Դրանցից ո՞րն է այսօր առաջնայինը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Կարծում եմ քրիստոնեական քարոզչության գործունեությունը՝ մեր ժողովրդին Մայր Հայրենիքում և Սփյուռքում Ավետարանի ոգով, պատգամներով, բարոյական սկզբունքներով կրթելու, դաստիարակելու գործը: Ահա Հայ Եկեղեցու և հայ հոգևորականի հիմնական և առաջնային առաքելությունը:

ՀԱՐՑ.- Ինչպես գիտեմք, Հայոց Կաթողիկոսն ընտրվում է ցկյանս: Նախընտրական փուլում երբ դրված էր մահ Զեր թեկնածությունը, ներկայացրել էիք բոլորովին տարբեր ծրագիր: Եթե երկարի փոխանորդության այս շրջանը, Դուք կգործարդեք Զե՞րը, թե՞ կշարունակեք գործադրել վեհափառ Հայրապետի ծրագիրը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ես կարծում եմ, որ Հայոց Հայրապետը և Հայ Եկեղեցու ցանկացած աստիճանի սպասավոր ունի մեկ ծրագիր՝ Հայ Եկեղեցին պայծառացնելու, Հայ Եկեղեցին գորացնելու և իրեն լիարժեք ծառայության մեջ տեսնելու՝ մեր ժողովրդի կյանքում: Կարծում եմ, այդ առումով տարբերություններ չկան, աշխատանքը պետք է կատարվի մեր եկեղեցականների կողմից և իմ կողմից մահ՝ որպես Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ՝ միշտ առաջնորդ ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, առաջնորդվելով Հայոց Հայրապետի թեմադրանքներով և հրահանգներով:

ՀԱՐՑ.- Սրբազան Հայր, այս հերթական հարցն առաջադրում ենք՝

եղնելով մաս մեր ընթերցողների շահերից ու հետաքրքրությունից: Վերջին շրջանում պարբերաբար գովազդվում է Կաշպիրովսկու այցելությունը Հայաստան: Ձեր նկատառումները: Չէ՞ որ շատերը գտնում են, թե Կաշպիրովսկին ու նրա միամենքը չար ուժերին են ծառայում:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Բնականաբար գիտեք, որ Կաշպիրովսկու խնդիրը ժամանակին բավականին մեծ աղմուկ բարձրացրեց, և կարծում եմ, որ Եկեղեցու տեսակետը ժամանակին մաս հստակ ձևակերպվեց ու արտահայտվեց, որին ժողովուրդը ծանոթ է: Ինքս ծանոթ չեմ, թե ինչ առաքելությամբ է Կաշպիրովսկին գալիս այստեղ և ինչ գործունեություն պետք է իրականացնի, ու եթե ամհրաժեշտություն նկատվի, որ Եկեղեցին այդ առումով լուսաբանի որոշ հարցեր իր ժողովրդի գավակաց, մեր հավատացյալների, ուրեմն Եկեղեցին իր պարտականությանց կատարման մեջ կլինի:

ՀԱՐԾ.- Օրավուր մեծանում ու տարածում են գտնում տարբեր աղանդներ: Ի՞նչ եք կարծում, Մայր Եկեղեցի՞ն է թույլ, թե՞ նրանք են գորեղ, և կամ մեր երկրում կհաղթի՞ արդյոք Եկեղեցին նրանց:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Այսօր իրապես մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը ամհանգստացած են աղանդավորական շարժումներով Մայր Հայաստանում: Նրանց հաջողությունները չենք կարող ասել, որ ամբողջապես Հայ Առաքելական Եկեղեցու ոչ յիարժեք գործունեության արդյունք են ու հետևանք, և չենք կարող ասել, որ միայն նյութական միջոցներով մեր ժողովրդի գավակաց հրապուրելու, ստեղծված տնտեսական այս ծանր իրավիճակը շահագործելու արդյունք է: Կարծում եմ, երկու պարագան էլ առկա են: Եկեղեցին ինչ-որ տեղ ամբողջականորեն չի կարողանում իրականացնել իր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում՝ չունենալով բավականին թվով հոգևորականներ, չունենալով աղոթատներ, չունենալով մաս ամհրաժեշտ միջոցներ: Մյուս կողմից՝ չկան մաս այն լայն հմարավորություններ, որոնք ունեն այս կամ այն կրոնական գաղափարախոսության, կրոնական քարոզչության, աղանդավորության ներկայացուցիչները: Ես կարծում եմ, որ այս ընթացքում, մեր Հայրենիքի վերանկախացումից հետո, Հայ Առաքելական Եկեղեցին բավականին ընդգրկում գործունեություն իրականացրեց, բավականին միջոցառումներ կյանքի կոչեց, բավականին կառույցներ ստեղծեց, որոնց գործունեությունը, աշխատանքը հույս է ներշնչում, թե մենք կկարողանանք դուրս մղել մեր կյանքից օտարամտալ այդ քարոզչությունները, որոնք առնչություն չունեն մեր ժողովրդի կյանքի, կենցաղի, պատմության, իդեերի, երազների ու նրա մշակույթի հետ: Աղանդավորական գործունեության այդ թվացյալ անվերջությունը կկասեցվի: Այս հույսը, այս հավատն ունենք և այդ իմաստով աշխատում ենք ամել կարելին:

ՀԱՐԾ.- Որպես Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ հանդիպե՞լ եք թեմակալ առաջնորդների հետ: Դուք իրավասո՞ւ եք փոփոխություններ անելու, և սպասվո՞ւմ են արդյոք այդպիսիք:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ինչպես ասացի, Կաթողիկոսական որոշակի իրավասություններ կան, որոնք վերապահված չեն Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդին: Վերջինիս իրավունքն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

վարչական գործունեության կազմակերպումը, որի մեջ, բնականաբար, կարող են եկեղեցական, թեմական կյանքի հետ առնչվող առանձին նպարագանք լինել՝ ճշմարտումներ կամ այլ հարցեր ու խնդիրներ, որոնք մույնպես, ըստ անհրաժեշտության, ըստ պատշաճի պետք է լուծումներ ստանան, երբեմն, եթե մեր իրավասությանց շրջանակների խնդիր կղիտվի մեր կողմից, կկատարենք ինքնուրույն, եթե անհրաժեշտություն կլինի հարցը քննարկել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների հետ, կհրավիրվի Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով, և հարցն այնտեղ կներկայացվի, որոշումը կյանքի կկոչվի Վեհափառ Հայրապետի համապատասխան տնօրինությունն ունենալուց հետո, կամ թեմակալ առաջնորդների հետ, որն էլ կախված է հարցի կարևորությունից: Հարցն իր լուծումը կստանա ըստ կարևորության աստիճանի:

Ինչպես Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների, այնպես էլ թեմակալ առաջնորդների հետ հանդիպումը պետք է լինի վաղը: Երեկ երեկոյան մենք հանդիպում ունեցանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների հետ, այսօր՝ աշխատակազմի ներկայացուցիչների, բաժինների վարիչների հետ: Նրանց ևս ներկայացվեց Վեհափառ Հայրապետի Հայրապետական Տնօրինությունը՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ ճշմարկելու մասին:

ՀԱՐՑ.- Արդեն լուծարվե՞լ է Վանական Խորհուրդը, և ի՞նչ ընթացքի մեջ է Աստղիկ Սրբազանի գործը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Երեկ առավոտ Վանական Խորհուրդը ողջունեց և փոխանցեց ինձ այն աշխատանքները, որոնք արդեն բավականին ժամանակ տնօրինվում էր Խորհրդի կողմից, և որոնք հետայսու ես պետք է ստանձնեմ ու հետևեմ դրանց կատարմանը: Վեհափառ Հայրապետի կողմից մասնավոր մի գրությամբ գնահատանքի է արժանացել Վանական Խորհրդի գործունեությունը և հրահանգվել, որ լուծարվի այն, ու աշխատանքներն ստանձնի Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդը:

Ինչպես գիտեք, Աստղիկ Սրբազանի գործը վարույթում է: Հուսով եմ, որ, դատական քննության արդյունքները հայտնի դառնալուց հետո, եկեղեցապատկան իշխանություններն իրենց կեցվածքն ու դիրքորոշումը կճշտեն:

ՀԱՐՑ.- Նախատեսվո՞ւմ է հանդիպում ՀՀ նախագահի հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Այսօր ևեթ, Վեհափառ Հայրապետի հրահանգով, հանդիպելու եմ ՀՀ նախագահին և պետք է ներկայացնեմ Նորին Սրբությանն ճամակը:

ՀԱՐՑ.- Ձեր վերջին հրապարակումներից մեկում ասույ՝ էիք, թե աղանդավորների դեմ պայքարը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գործը չէ, իսկ այսօր գտնույ՝ եք, որ այն անհրաժեշտ է: Ինչո՞վ են պայմանավորված Ձեր երկու հակամետ կարծիքները:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ուրեմն, ցանկանում եմ այսօր լուսաբանել և հստակեցնել իմ մտածումը: Հայ Առաքելական Եկեղեցին պայքար չունի որևէ կրոնական կազմակերպության, որևէ կրոնական քարոզչության դեմ և նրանց նկատմամբ: Հայ Առաքելական Եկեղեցին ունի իր առաքելությունը՝ իր ծառայությունը բերել իր ժողովրդին ամբողջականորեն: Եթե դուք Հայ

Առաքելական Եկեղեցու կողմից իրականացվող գործունեությունը, ծառայությունը մեր հավատացյալների կյանքում դիտում եք որպես պայքար, մենք դիտում ենք որպես Եկեղեցու առաքելություն:

Ես կրկնում եմ, և այս տեսակետը հստակ է ինձ համար. Հայ Առաքելական Եկեղեցին պայքարի մեջ չէ որևէ կրոնական կազմակերպության, քաղաքական հետ: Հայ Առաքելական Եկեղեցին ունի իր գործը, առաքելությունն իր ժողովրդի կյանքում և պետք է լիարժեքորեն կազմակերպի ու իրականացնի. որպեսզի գառամ մորթու տակ գալլեր չներթափանցեն հայ օջախներից ներս և չփորձեն նրանց մոլորեցնել: Հայ հավատացյալները պետք է ամուր կերպով կանգնած լինեն իրենց հայրերի սրբազան հավատքի վրա և առաջնորդվեն նրանց ավանդություններով:

ՀԱՐԾ.- *Որպես Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Դուք, ընդառաջելով լրագրողների ցանկությանը, մախաձեռնեցիք հանդիպումներ թեմակալ առաջնորդների հետ, որպեսզի այս կերպ մեզանից յուրաքանչյուրն ավելի հստակ պատկերացում ունենա Եկեղեցու գործունեության մասին: Նման երկու հանդիպումներ իրականացան: Այդ հանդիպումները շարունակվե՞ր են այսուհետ ևս:*

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ընդհանրապես եմ այս հարցի համար: Միանշանակ պետք է ասեմ, որ մեր թեմակալ առաջնորդներն ուրախ են և սիրով ողջունեցին այդ գաղափարը, որպեսզի լրագրողներն այցելեն իրենց թեմերը, մոտիկից ծանոթանան ու լուսաբանեն թեմական կյանքը: Այդ գործը բնականաբար պետք է շարունակվի: Եթե մյան ցանկություն կլինի, պարզապես հայտնեք այդ մասին, որպեսզի պայմանավորվածություն ձեռք բերվի, իսկ մենք կնպաստենք, կաջակցենք, որպեսզի այդ հանդիպումները տեղի ունենան: Այս առիթով ուզում եմ նաև հիշեցնել ձեզ այն հայտարարության մասին, որ ժամանակին կատարել ենք, այսինքն՝ ամեն ամսի առաջին երկուշաբթի օրը Արարատյան Հայրապետական թեմում տեղի է ունենում քահանայից հավաք՝ ժողով: Դռները բաց են մեր լրագրողների առջև: Նրանք կարող են գալ և ստանալ իրենց հուզող հարցերի լուսաբանումը: Այս մասին ես հիշեցրեցի՝ նշելու համար, որ թերևս որոշ փոփոխություն կատարվի ժամանակացուցում, որի մասին լրացուցիչ ձեզ տեղյակ կպահվի: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ այսուհետ առավոտյան ժամերին պետք է լինեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, այդ ժողովի հրավիրման ժամը կտեղափոխվի օրվա երկրորդ կես, թերևս փոխվի նաև օրը:

ՀԱՐԾ.- *Մոտենում են Նոր տարին և Սուրբ Ծնունդը: Որպես Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ ի՞նչ ծրագրեր ունեք:*

ՊԱՏԱՍԽԱՆ.- Սուրբ Ծննդյան տոնը Հայաստանյայց Եկեղեցու մեծագույն տոներից մեկն է: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ինչպես միշտ, այս տարի ևս ըստ պատշաճի, մեծ շուքով, համդիսավորությամբ կտոնախմբի այն՝ մեր ժողովրդի հավատալիք գավակաց հետ միասին: Թեմակալ առաջնորդների կողմից թեմերում կիրականացվեն առանձին ձեռնարկներ: Արարատյան Հայրապետական թեմում ևս մույնը կլինի: Տեղական իշխանությունների հետ միասնաբար, համագործակցելով, զանազան միջոցառումներ

կկազմակերպվեն և կանցկացվեն: Իսկ այստեղ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Սուրբ Պատարագ կմատուցվի:

Հավարտ ասույիսի, շարունակելով լրագրողներին ուղղված իր խոսքը, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդն ի մասնավորի ասաց.

«Վստահ եմ, որ թերևս շատ հարցեր ձեզ համար տակավին մնում են լուսարանման կարոտ, շատ բաներ թերևս ամբողջականորեն չեն երկայացվեցին, որովհետև ժամանակը շատ կարճ էր: Տակավին ես ընդհանուր պատկերը չունեմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեության, առանձին բաժինների, առանձին ոլորտների և ավելի շատ ասելիք կունենամ, երբ կծանոթանամ այս ամենին, մասնավորապես կրոնական քարոզչությանը, քրիստոնեական դաստիարակությանը, ինչպես նաև մեր թեմերի գործունեությանը: Վստահաբար պետք է ենթադրենք, որ, իբրև Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ, ընթացիկ գործերը վարելով, միաժամանակ պետք է մտածումներ, ծրագրեր մշակեմ և առաջադրեմ Հայոց Հայրապետին, որպեսզի դրանք կյանքի կոչվեն, և որոնք մպատակաուղղված կլինեն մեր Եկեղեցու առաքելության ամբողջական կատարմանը, Եկեղեցու պայծառացմանը, զորացմանը, մեր ժողովրդի հավատքի ամրապնդմանը: Կարծում եմ, այս իմաստով մեր հանդիպումները պետք է շարունակական լինեն: Մենք պարբերաբար առիթներ կունենանք միմյանց հետ հանդիպելու»:

Հրաժեշտից առաջ լրագրողները, որպես անդրամիկ հանդիպման գեղեցիկ հուշ, Փոխանորդ Սրբազան Հորից մվեր ստացան Պիոն Հակոբյանի աշխատասիրությամբ, Մայր Աթոռի տպարանում բոլորովին վերջերս հրատարակված, Գալուստ Տեր-Մկրտչյանի «Հայագիտական ուսումնասիրություններ»-ի Բ հատորը:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀՎԵՑ
ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱՔԱԶՅԱՆԻՆ**

*«Եվ լսեցի Տիրոջ ձայնը, որն ասում էր. «Ո՛ւր
ուղարկեմ, և կամ ո՞ր կգնա այդ ժողովրդի մոտ»: Ու
ես ասացի. «Ահավասիկ ես, ի՛նձ ուղարկիր»:*

(ԵՍԱՅԻ Զ 8)

Անջուշտ որևէ մոր բան ասած չեմ լինի՝ մեջբերելով մեծ մարգարեի այս խոսքերը, որոնք մարդկության գոյության բոլոր ժամանակներում էլ իրավամբ կարող ենք ասել, որ հնչել են մույն ոգով, ուժգնությամբ և հրատապ ու ցանկալի են եղել որքան դարեր առաջ, մույնքան էլ՝ այսօր:

Հոգևորականի կոչման վեհությանն են ամերադարձել մեր Սուրբ Հայրերը, մոր դրսևորումներով հարստացրել այն, համեմել Գրքերի Գրքից վերցրած խորիմաստ ասությունով, կյանքի ու ժամանակի զուգահեռականներում թրծելով, ի վերջո Աստծո մերօրյա սպասավորին են կտակել վեհ մի գաղափար, թե միշտ էլ գեղեցկից գեղեցիկը սեփական ժողովրդին մվիրումով ծառայելն է:

Պարզևեզից մեծագույնն էլ թերևս այն է, երբ հոգևորականը գիտակցում է իր առաքելությունը երկրի վրա, բայց և ավելի է ոգևորվում, երբ գնահատվում է:

Այս մոտեցմամբ էլ հենց Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի 1998 թ. մայիսի 9 թվակիր հայրապետական կոնդակով արքայության պատիվ շնորհվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Գեղարքունյաց թեմի առաջնորդ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաշյանին՝ քահանայական ձեռնադրության 25-ամյակի և եպիսկոպոսական ձեռնադրության 15-ամյակի ուրախ առիթով:

Գեկտեմբերի 13-ի կիրակի օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվող Սուրբ և անմահ Պատարագը սովորականից մի փոքր տարբերվում էր: Բացի մեծաթիվ հավատացյալներից, Մայր Տաճար էին ժամանել նաև մեծաթիվ հյուրեր Հայաստան աշխարհի տարբեր թեմերից: Օրվա պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Մակար արքեպ. Հովհաննիսյանը: Ս. Պատարագին ներկա էր Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

Հընթացս Սուրբ Պատարագի, «Ամեն եւ ընդ հոգւոյդ քում...» հատվածի երգեցողությունից հետո, «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողությամբ, Մկրտության Սուրբ Ավագանի մոտից, ձեռամբ հոգեշնորհ Տ. Բաբկեն արքեպ. Սալբիյանի, հանդիսավորաբար Ավագ Ա. Խորան բերվեց Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը և տրվեց պատարագիչ Հայր Սուրբին:

Պատարագիչ Հայր Սուրբը. ի լուր ներկաների, բարձրաձայն ընթերցեց Հայրապետական Կոնդակը, համբուրեց և հանձնեց Ամանիա Սրբազանին:

Վերցնելով Արքեպիսկոպոսական բարձր պատիվը պարագրած Կոնդակը՝ Սրբազան Հայրը երախտիքի ու խոնարհության խոսք ասաց իր հոգևոր եղբայրներին և հավատացյալ ժողովրդին:



Տ. Սակար աբեղա Գովհաննիսյանը Վեհափառ Գայրապետի կոնդակը հանձնում է Ամանիա Սրբազանին

Հոգևոր կյանքի որ բնագավառում էլ ծառայել է Սրբազան Հայրը. դրսևորել է իր սերն ու նվիրումը, բարձր գիտակցումով մոտեցել Աստծո ու իր ժողովրդի սպասավորի դժվարին առաքելությանը: Ծանր պահերին միշտ ապավինել է Աստվածային պատգամներին ու, անսալով Տիրոջ ձայնին, ի մի բերելով ուժերը, հաղթանակով դուրս եկել փորձությունից: Եվ այսօր, հետևում թողած բազում փորձություններով ու անակնկալներով առյեցում մի ուղի, Սրբազան Հայրը ցավով է անդրադառնում չարածին, բայց և ծախտով հիշում ամեն մի հաղթանակ ու նվաճում՝ Երկնառաք Վարդապետի ճշմարիտ ուսուցումների շավղով ընթանալիս.

«Ժանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Եվ երբ ճաշեցին, Հիսուս ասաց. «Աիմոն, որդի Հովնանի, սիրո՞ւմ ես ինձ ավելի, քան դրամն»:

Եվ Աիմոնը պատասխանեց. «Այո, Տեր, և դու գիտես, որ սիրում եմ քեզ»:
Նրան ասաց՝ «Արածեցրու իմ գառներին»:

Եվ երբ երրորդ անգամ հարցրեց, Պետրոսը տրտմեց ու ասաց. «Տեր, դու ամեն ինչ գիտես... և գիտես, բե սիրում եմ քեզ» (Հովհ. ԻԱ 15):

«Ավետիք, որդի Արամի, սիրո՞ւմ ես ինձ»:

Այսպես կոչեց ինձ Տերը, երբ 18 տարեկան մի պատանի էի, կանգնած

կյանքի ճշմարիտ ուղին որոնելու ճանապարհին: Իմ պատասխանը եղավ անհոգ ու թեթև, մի քիչ ուրախ ու համարձակ, և ես ասացի. «Այո, Տեր, սիրում եմ քեզ»: Հսեցի Աստծո կանչը և երկչոտ ու դողողուն քայլերս ուղղեցի դեպի Սուրբ Էջմիածին և դարձա ուսանող Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ըմբարանի: Ուրախ և երջանիկ պատանեկությունը Ս. Էջմիածնի Մայրավանքում, Հոգևոր Ըմբարանի հարկից մերս, տեեց մի քանի տարիներ, որոնք եղան ուսումնառության, ճանաչողության ուղի: Տարիները անցան, ու մենք, արդեն իբրև հասուն պատանիներ, մեր ուսումը շարունակեցինք զանազան հաստատություններում մինչև 1975 թ., երբ Տերը կրկին ինձ կանչեց, իմ ամբարածը արդեն բաշխելու համար մոր սերնդին: 1981 թ.-ին Տերը կրկին ինձ հարցրեց, թե «սիրո՞ւմ ես ինձ», և ես, արդեն իբրև լրջմիտ երիտասարդ, կրկին պատասխանեցի. «Այո, Տեր սիրում եմ Բեզ»: Եվ հայնժամ իմ հոգում Տերը հնչեցրեց. «Արածեցրու իմ գառներին»: Ես ստանձնեցի Աղորբեջանի Հայոց թեմի հովվությունը և ութ տարիներ շարունակ արածեցրի Աստծո գառներին: Այդ տարիներն ինձ համար ամբողջական մկրտութի տարիներ էին թե՛ եկեղեցական և թե՛ քաղաքական իմաստով՝ հայ ժողովրդին թիկունք կանգնելու 1988 թվականից հետո: Արեցի այն, ինչ հմարավոր էր, արեցի այն, ինչ կարողացա, արեցի այնքան, որքան համարձակություն ունեի և ինչ-որ տեղ որքան դիվանագիտություն ունեի: Աստծո օգնությամբ կարողացա շատ-շատերին դուրս բերել Աղորբեջանից, ովքեր այսօր ապրում են թե՛ Հայաստանում և թե՛ արտասահմանում: Եվ երբ 90-ական թվականներին վերադարձա Մայր Աթոռ ու լծվեցի Հոգևոր Ըմբարանի ուսանողների դաստիարակության գործին, դարձյալ իմ մեջ ուժ զգացի, թե կարող եմ պատասխանել Աստծու Որդուն, թե «սիրում եմ Բեզ»:

Եվ ահա այսօր կրկին, երրորդ անգամը լինելով, լսում եմ Աստծո Որդու ձայնը. «Անանիա, որդի Աստծո, որդի եկեղեցվո, որդի Հայ ժողովրդի, սիրո՞ւմ ես ինձ», ու արդեն իսկ, իբրև հասուն տարիքի մարդ, ողջ սրտով պատասխանում եմ. «Այո, Տեր, սիրում եմ քեզ ամբողջ էությամբ, ամբողջ հոգով ու ամբողջ մտքով, պատրաստ եմ ամվարան քայլելու Բո ետևից, կրելու իմ լուծը՝ իմ խաչը»:

Այսօր, լինելով Գեղարքունիքի թեմի առաջնորդը, ջանում եմ անել ամեն բան՝ օգնական ու հենարան լինելու յուրաքանչյուրին:

Իմ խորին շնորհակալությունն եմ ցանկանում հայտնել ազգիս վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ մաղթելով նրան քաջառողջություն և շուրափույթ վերադարձ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որը մեր գործունեությանը մոր ուժ ու կորով պիտի հաղորդի:

Շնորհակալություններս եմ հայտնում նաև միաբան եղբայրներին, իմ օժակից սրբազաններին՝ իրենց հոգևոր աջակցության, իրենց բարի կամեցողության համար:

Թող Աստված օրհնի մեզ բոլորին և տանի դեպի խաղաղ մավահանգիստ. ամեն»:

Հավարտ Սուրբ Պատարագի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հատուկ կարգադրությամբ, կատարվեց հոգեհանգստյան կարգ՝

Հայաստանի ազատագրության գաղափարի մվիրյալներ և Մադրասի Ռայդենասիական խմբակի ամենամշտնապետ դեմքերից երկուսի՝ Հակոբ և Ծառամիր Ծառամիրյանների Ռոզինների հանգստության ու խաղաղության համար:

Հիշեցման կարգով ասենք, որ 1998 թ. դեկտեմբերի 2-ին «Նախիջևան» Ռայդենակական միության կողմից Ազգային Ակադեմիայում կազմակերպվեց գիտաժողով՝ մվիրյալ «Որոգայթ Փառաց»-ի 225-ամյակին: Վերջում գիտաժողովի մասնակիցները մի ուղեք Ռոզին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ խնդրելով, որ, Նորին Սրբության տնօրինությամբ, մինչև տարեվերջ որևէ մեկ կիրակի, մատուցվող Սուրբ Պատարագից հետո, Ծառամիրյանների համար կատարվի Ռոզինանգստյան կարգ:

Սուրբ Պատարագից և Ռոզինանգստյան արարողությունից հետո, Մայրավանքի սեղանատանը, Ռոզնոր դասի ներկայությամբ, ձեռամբ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի, Ամանիա Սրբազանին հանձնվեց Վեհափառ Հայրապետի մվերը՝ արծաթյա մի պանակե:

Մենք ես, ի թիվս շատերի, շնորհավորելով Սրբազան Հորն այդ առավել պարտավորեցնող պատվի առիթով, վերջակետում ենք մեր ասելիքը երջանկահիշատակ Պետրոս Ա Գետադարձ Կաթողիկոսի պատգամ-հորդորով:

«Կը յիշեցնենք ձեզ, որ իբր ուխտեալ պաշտօնեաները աստուածային օրինաց, ձեր մտածուքը պիտի կեդրոնանայ անելի ծառայութեան վրայ, քան վարձատրութեան: Մատայութեան վարձատրութիւնը ծառայելն ինքն է: ... Որքան բարեկարգ ու մուկրեալ եկեղեցական, այնքան բարեկարգ ու պայծառ պիտի ըլլայ եկեղեցին եւ այնքան անելի ամոր կապուած՝ ժողովուրդը: Եղէք տիպար ներկայացուցիչները մահաւանդ Ս. Աթոռոյս»:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ



Ամանիա արքեպս. Արաբաքյանը (ավագանի անունով՝ Ավետիք) ծնվել է 1951 թ. Երևանում:

1968 թ. ավարտել է թիվ 52 միջնակարգ դպրոցը: 1968-1969 թթ. սովորել է Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի Գալստյան-Պապատյան քաժնում:

1970 թ. ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Մեմարանի 3-րդ լսարան, իսկ մի քանի ամիս անց՝ տեղափոխվել 4-րդ լսարան:

1972 թ. ավարտել է Հոգևոր Մեմարանը և երջանկահիշատակ Տ.Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի կողմից ուղարկվել Մոսկվա՝ ուսանելու Զագորսկի Հոգևոր Մեմարանում:

1973 թ. Էքստենդ ավարտելով Ընմարանի քառամյա դասընթացը, ընդունվել է Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգևոր ակադեմիայի ասպիրանտուրա: Նույն տարի Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1975 թ. ավարտել է հոգևոր ասպիրանտուրան և «Եզմիկ Կողբացու աստվածաբանական հայացքները» թուաներեն աշխատության համար ստացել Ռուս Եկեղեցու աստվածաբանական գիտությունների թեկնածուի աստիճան: Նույն թվականի աշնանը, վերադառնալով Մայր Աթոռ, ստացել է վարդապետական աստիճան և ստանձնել Հոգևոր Ընմարանի փոխտեսչի և «Էջմիածին» ամսագրի քարտուղարի պաշտոնները:

1976 թ. իր ցանկությամբ մեկնել է Ռոստովի մարզ և ծառայել Չալթր գյուղի Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում որպես հոգևոր հովիվ:

1978 թ. վերադարձել է Սբ. Էջմիածին և Հոգևոր Ընմարանում դասավանդել դավանաբանական և հովվական աստվածաբանություն առարկաները: Միաժամանակ աշխատանքի է մշակակվել Մայր Աթոռի դիվանատանը՝ որպես քարտուղար և կադրերի բաժնի վարիչ:

1981 թ. Տ.Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի կողմից մշակակվել է Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ:

1983 թ. «Եղիշեի «Հայր մեր»-ի մեկնությունները» աշխատության համար ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան և ապա, ձեռամբ Վազգեն Ա Կաթողիկոսի, ձեռնադրվել եպիսկոպոս:

1989 թ. Ադրբեջանում տեղի ունեցած հայտնի դեպքերի պատճառով իր հոգևոր հոտի հետ միասին գաղթել է Հայրենիք:

1990 թ. ստանձնել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ընմարանի տեսչի պաշտոնը՝ միաժամանակ դասախոսելով աստվածաբանական առարկաներ: Համաժամանակյա եղել է Սուրբ Հռիփսիմե վանքի վանահայրը:

1996 թ. հուլիսից Ամենայն Հայոց Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի կողմից մշակակվել է Գեղարքունիքի թեմի առաջնորդ:

1998 թ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի հայրապետական կոնդակով ստացել է արքության պատիվ և տիտղոս:

Ամանիա արքեպս. Արաքսյանը ման Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ է:

Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՍԱՐԿԱՎԱԳԻ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՂԻՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 26-ին Գևորգյան Հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ուսանողության կողմից պատրաստված երեկույթ՝ նվիրված Սբ. Ստեփաննոսի տոնին: Երեկույթին ներկա էին Մայրավանքի միաբանները, ուսանողությունը և հյուրեր: Հանդիսությունը նախագահում էր Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

Այն սկսվեց Տերունական աղոթքով: Ապա ճեմարանի սաները, Ռ. Շարբաթյանի ղեկավարությամբ, կատարեցին Հոգևոր ճեմարանի քայլերգը: Բացման խոսք ասաց Ձ լսարանի սան, ուրարակիր Վաղարշակ Օատուրյանը: «Գործք առաքելոցի» այն հատվածը, որը նվիրված է Ս. Ստեփաննոսի քարկոծմանը, ընթերցեց նույն լսարանի սան, ուրարակիր Սահակ Գասպարյանը: Իսկ Արտակ սրկ. Սահակյանը հանդես եկավ «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց» բանախոսությամբ, որում շահեկան տեղեկություններ հաղորդվեցին Լամբրոնացու և Արճիշեցու «սարկավազ» բառի ստուգաբանության, Տաթևացու՝ Ս. Ստեփաննոսին նվիրված քարոզի մասին:

Բանախոսությունից հետո Գևորգյան Հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարեց «Նախասարկավազ» շարականը: Վահան Թեքեյանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծությունն ասումընթեց Ս լսարանի սան Էդիկ Հակոբյանը: Ապա նույն լսարանի սան Զոհրապ Կարապետյանի դաշնամուրային կատարմամբ հնչեց «Էքսպրոմտ-ֆանտազիա» ստեղծագործությունը, որին հաջորդեց Ձ լսարանի սան Միքայել սրկ. Միքայելյանի բանախոսությունը՝ «Սբ. Ստեփաննոսի եկեղեցիները» թեմայով: Ներկայացվեց Ստեփաննոսի անունը կրող երեք վանքերի և տասնմեկ եկեղեցիների պատմությունը, որոնք կամ առանձին եկեղեցիներ են, կամ եկեղեցիներ, որոնք գտնվում են վանական համալիրներում: Այնուհետև Գևորգյան Հոգևոր ճեմարանի երգչախմբի կատարմամբ հնչեց «Ստեփաննոս քաղցրիկ տատրակ» շարականը:

Որպես ամփոփում, իր օրհնության խոսքն ասաց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը՝ երախտագիտության ու գնահատանքի խոսք ուղղելով Գևորգյան Հոգևոր ճեմարանի տեսչությանը՝ ներկաներին այս գեղեցիկ ապրումների պահը պարզեցնելու համար: Գարեգին արքեպիսկոպոսը խոստովանեց, որ ուսանողության հետ հանդիպելու, շփվելու, զրուցելու և նրանց կյանքի մեջ խորամուխ լինելու կարոտ է զգում, և այդ բացը ինչ-որ չափով լրացնելու է զալիս այս հանդիսությունը: Սրբազանը հույս հայտնեց, որ Ս. Ստեփաննոսի հիշատակը նշելը միաբանության և ուսանողության կյանքում միայն ավանդական տոնախմբություն չպետք է լինի, այլ նաև՝ ապրում:

Ամդրադառնալով այն իրողությանը, որ Ս. Ստեփաննոսի տոնը նախ և

առաջ սարկավազաց տոնն է, Արբազանը շնորհավորեց բոլոր սարկավազ-
ներին և ուսանողներին էլ նրանց հետ, կոչ արեց հայացքներն ուղղել իրենց
խսկ հոգիներից ներս և տեսնել, թե որքանով է Ս. Ստեփաննոսն արտացոլվում
այնտեղ՝ իր էությանը, իր հավատքով և իր գործով՝ այս մասին ի մասնավորի
ասելով. «Մեր եկեղեցին և մեր ժողովուրդը կարիք ունեն Ստեփաննոսի հոգով
խանդավառ եկեղեցականների: Այսօր մեզանից նահատակություն չի
պահանջվում, որովհետև Քրիստոսի եկեղեցու նկատմամբ հալածանք չկա, այլ
ակնկալվում է այն ծառայությունը, այն պատրաստակամությունը, այն
նվիրումն ու հավատքը, որն ունեն Ստեփաննոսը: Մաղթում եմ, որ ձեր
հայացքի առջև միշտ Ստեփաննոս Նախասարկավազի կեպարը, նրա կյանքն
ու զոհաբերությունն ունենաք, և նվիրումն ու ծառայասիրությունը առաջ-
նորդող գաղափարներ լինեն ձեր կյանքում: Միայն Ստեփաննոսի հավատքով
ու կյանքով ապրելով կարժամանանք մեր եկեղեցու արժանի սպասավորները
և մեր ժողովրդի արժանի զավակները կոչվելուն»:

Ավարտելով խոսքը, Գարեգին արքեպիսկոպոսը մեկ անգամ ևս
շնորհակալություն հայտնեց ճեմարանի տեսչությանը և մաղթեց, որ Աստծո
օրհնությունը լինի բոլորի վրա:

Հանդիսությունն ավարտվեց «Հայր մեր»-ի երգեցողությամբ և Փոխանորդ
Արբազան Հոր «Պահպանիչ»-ով:

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դ լսարանի սան

ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ, ՍԵՐ ԵՎ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

Հայոց բանակի անասանությունն ու ամրությունը կախված է ոչ միայն նրա մարտունակությունից, զենքերի ու զինվորների մեծաթվությունից, այլ նաև նրանում տիրող ոգուց ու նկարագրից: Այն բարձր պահելու գործը գրեթե ամենուր կատարում են տվյալ ազգի հոգևոր սպասավորները:

Սնկախության վերականգնմամբ հիմնված հայոց բանակում ՀՀ Պաշտպանության նախարարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միացյալ ջանքերով, արդեն շուրջ կես տարի է, ինչ հայ զինվորի բարոյա-հոգեբանական դիմագծի կերտման գործում վերստին իր կարևոր դերն է ստանձնել նաև հայ հոգևորականը:

Այսօր այս գործը ղեկավարում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հոգեշնորհ Տ. Վրթանես վարդապետ Աբրահամյանը՝ ստանձնելով ՀՀ բանակի հոգևոր խորհրդականի դժվարին ու պատասխանատու պարտականությունը: Շուրջ կես տարվա գործունեությունը, թեև ընդգրկելով կարճ ժամանակահատված, այնուամենայնիվ տվել է իր ցանկալի արդյունքը: Ձորամասերից մեծ մասն այսօր ունի իր հոգևոր խորհրդականը: Խորհրդականներն իրենց զրույցներով, հորդորներով, հոգևոր գիտելիքների ուսուցմամբ փորձում են կերտել Հայրենիքի պաշտպանի այսօրվա հոգևոր նկարագիրը: Յուրաքանչյուր զորամաս ունի իր նորաստեղծ փոքրիկ գրադարանը, ուր տեղ են գտել և գտնելու են բազմաթիվ հոգևոր հրատարակություններ: Ձորամասերում հաճախակի են կատարվում նաև ընդհանրական Մկրտություններ:

Հրամանատարության ջանքերով ղեկտնմբերի 23-ին հերթական ընդհանրական Սուրբ Մկրտությունն էր կազմակերպվել նաև Էջմիածնի զորամասերից մեկում: Օրը կրկնակի հանդիսավոր էր ողջ զորամասի, ներկա ծնողների ու հարազատների, ինչպես նաև հյուրերի համար, քանի որ երդման արարողությունը գուգորդվելու էր Ա. Մկրտության խորհրդակատարմամբ: Մկրտության Սուրբ Խորհուրդը կատարեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հոգեշնորհ Տ. Արշեն աբեղա Սանոսյանը:

14 նորակոչիկներ նախ ծնողների, իրենց ավագ ընկերների և մեծաթիվ հյուրերի ներկայությամբ հանդիսավոր կերպով երդվեցին պատվով ծառայել Հայաստանի Հանրապետությանը, հավատարիմ մնալ իրենց առաջադրված պատվիրաններին, իսկ թե հարկ լինի՝ հաճուն Հայրենիքի զոհել անգամ սեփական կյանքը:

Երդման հանդիսավոր պահից հետո սկսվեց Ա. Մկրտության արարողությունը: Խորհրդանշական էր այս երկու կարևոր արարողությունների համատեղ իրականացումը: Երդման արարողությամբ նորակոչիկները դարձան հայոց բանակի զինվորները, իսկ Ա. Մկրտությամբ՝ մեր զինվորյալ Եկեղեցու լիարժեք անդամները: Մկրտվողներին կնքահայր դարձավ զորամասի հրամանատարը:

Ս. Ակրտությունից հետո, դիմելով ներկաներին, խորհրդակատար Հայր Սուրբն առանձնակի նշեց. «*Կնքահոր ու սանիկների հոգևոր կապը պետք է բարձրացնի և նոր աստիճանի վրա դնի հրամանատարի ու զինվորների փոխհարաբերությունները: Այն պետք է առաջինն մղի հայրական խնամքի, իսկ երկրորդներին՝ որդիական խոնարհության: Ակրտությամբ բոլորդ ծնվեցիք մեկ՝ Սուրբ Ավագանից, որով ձեր ընկերական հարաբերությունները ևս պիտի փոխվեն ու դառնան եղբայրական:*

Եկեղեցին մեկ մարմին է, իսկ մենք՝ նրա անդամները: Մեկի թուլության պարագային ոչ թե պիտի հալածենք, անարգենք ու արհամարհենք նրան, այլ, մարմնի մասերի օրինակով, խնամենք վիրավորին, տկարին և հոգանք նրա կարիքները: Որքան քերձ ու մտերիմ լինեն ձեր փոխհարաբերությունները, ըստ այդմ, նույնքան զորեղ կլինեն նախ՝ ձեր զորամասը, ապա՝ Հայոց բանակը և ապա՝ մեր ազատ ու վերանկախացյալ Հայրենիքը:

Տա Աստված, որ ձեր հրամանատարության այս ոգեկերպիչ նախաձեռնությունը միայն գեղեցիկ արարողություն չնկատվի, այլ՝ արմատանա, անցնի հոգուց հոգի և յուրաքանչյուր զինվոր այս կերպ առավել քաջ գիտակցի իր պարտականության վեհությունը...»:

Աղոթենք ու հուսանք, որ այս գեղեցիկ խորհրդակատարությունն իր տեսակի մեջ եզակի չի մնա, այլ, ընդհակառակը, զորամասերում խոր արմատներ կնետի, կդառնա ավանդական: Սակայն տա Աստված, որ այսուհետ ոչ մի նորակոչիկ առանց մկրտվելու չզորակոչվի բանակ:

ՎԱՅՆ ՂԴԴԻՐ ԲԵԳՈՅԱՆ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՀԱՐԱՐԵՈՒՄ «ԴԱՐՁԻՐ ԱՌ ԱՍՏՎԱԾ. ՑՆԾԱ ՀՈՒՅՍԻ ՄԵՋ»

ՆՇԱՆԱԲԱՆՈՎ

(ղեկտեմբեր 3-14, 1998)

1998 թվականի դեկտեմբերի 3-14-ը Ձիմբաբվեի մայրաքաղաք Հարարեում գումարվեց եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Ը համաժողովը՝ «Դարձիր առ Աստված. ցնծա՛ հույսի մեջ» մշամաբանով:

Այն տեղի ռենցավ Աֆրիկայում՝ որպես արծազանց այս մայրցամաքի հարաճում հիմնահարցերի և անլուծելի թվացող խնդիրների:

Համաժողովի նպատակն էր՝ վերլուծել Կանբեռայի համաժողովից (1991) ի վեր ԵՀԽ կատարած աշխատանքները և ուղեմիջեր մշակել հաջորդ յոթ տարվա գործունեության համար, ինչպես նաև մեծ շուքով մշել ԵՀԽ հիմնադրության 50-ամյա հորեյանը:

Այսին համաժողովին իր լիարժեք և ակտիվ մասնակցությունը բերեց Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցին: Հայ եկեղեցու պատվիրակությունը գլխավորում էր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, ԵՀԽ ատենապետ Ս. Տ. Արամ Առաքինը: Պատգամավորի կարգավիճակով պատվիրակության կազմում էին Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ և Ճայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ Ս. Աղան արքեպս. Պալիոյանը, Ս. Վիգեն եպս. Այքազյանը (Երևան), Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Ս. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Ս. Օշական եպս. Զուլյանը (Նյու Յորք), Դամասկոսի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Ս. Սեպուի եպս. Սարգիսյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջեկեղեցական հարցերով օգնական Ս. Միքայել Ժ. վրդ. Աջապահյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Ս. Նարեկ Ժ. վրդ. Ալեմեզյանը, Ս. Մաշտոց արք. Զոբանյանը (Օսլո), Հարություն սրկ. Հարությունյանը (Ժնև), Կարեն Նազարյանը (Էջմիածին), Հայկ Մինասյանը (Երևան), Լևոն Դավթյանը (Թեհրան), Միլվա Ղազեյանը (Էջմիածին), Անահիտ Սիմոնյանը (Երևան), Ծովինար Ղազարյանը (Էջմիածին), Մանուշակ Բոյաջյանը (Բեյրութ) և Ռուբինա Փերումյանը (Լոս Անջելես): Համաժողովին այլ կարգավիճակներով մասնակցում էին նաև Թեմի Սիմոնյանը, Սալբի Էսքիմյանը (ԵՀԽ աշխատակազմ), Սեղա Փամբուկյանը (խորհրդական) և Հասմիկ Բախտիարյանը (սպասարկող):

Համաժողովը բացվեց դեկտեմբերի 3-ին՝ պաշտամունքային արարողությամբ, որը նախագահում էր Արամ Ա Կաթողիկոսը: Պաշտամունքից հետո

տեղի ունեցավ բացման լիազումար միստը՝ Արամ Ա Կաթողիկոսի ատենապետությամբ: Համաժողովը ողջունեցին Ձիմբաբվեի փոխնախագահ Սայմոն Սձենդան (նախագահ Ռոբերտ Մուզաբեմ այդ օրը բացակայում էր երկրից) և Ձիմբաբվեի եկեղեցիների խորհրդի նախագահ էնոս Չոմուտիլին:

Նոր անդամ եկեղեցիների ընդունելության արարողակարգից հետո, ընտրվեցին զանազան հանձնաժողովների կազմերը: Հանձնաժողովներում Հայ եկեղեցուց ընդգրկվեցին Նաթան եպս. Հովհաննիսյանը (Քաղաքականության ծրագրման հանձնաժողով), Սեպուհ եպս. Սարգիսյանը (Առաջադրման հանձնաժողով), Միքայել ծ. վրդ. Սջապահյանը (Պատգամի հանձնաժողով), Նարեկ ծ. վրդ. Ալեմեզյանը (Քաղաքականության ծրագրման հանձնաժողով), Մաշտոց աթղ. Չոբանյանը (Աշխատանքային հանձնաժողով), Անահիտ Սիմոնյանը (Ֆինանսական հանձնաժողով), Ծովիմար Ղազարյանը և Մանուշակ Բոյաջյանը (Ծրագրային ուղեմիջների հանձնաժողով) և Ռուբինա Փերունյանը (Հանրային խնդիրների հանձնաժողով):

Դեկտեմբերի 4-ի լիազումար միստին, որ նվիրված էր Համաժողովի նշանաբանին՝ «Դարձիր առ Ստված. ցնծա՛ր հույսի մեջ», ԵՀԽ նախագահ Պրիյանկա Մենդիսի (Շրի Լանկա) ներածական խոսքից հետո, հիմնական ուղերձները ներկայացրին Ալբանիայի արքեպիսկոպոս Անաստասիոսը, դոկտ. Վանդա Դեյֆելտը (Բրազիլիա) և դոկտ. Կոսուկե Կոյաման (ԱՄՆ), որոնց ճառերը համապատասխանաբար նվիրված էին հիշողությանը, ապաշխարությանն ու ցնծությանը:

Օրվա երկրորդ կեսին լավեցին ԵՀԽ ատենապետ Արամ Ա Կաթողիկոսի և ԵՀԽ ընդհանուր քարտուղար դոկտ. Կոնրադ Ռայգերի զեկուցումները, որոնց շուրջ տեղի ունեցան աշխույժ քննարկումներ:

Դեկտեմբերի 5-ի լիազումար միստը հայտարարություն ընդունեց Սարդուիրավունքների միջազգային դեկլարացիայի մասին՝ վերջինիս ընդունման 50-ամյակի առիթով:

Դեկտեմբերի 6-ի լիազումար միստը նվիրված էր ԵՀԽ «Ընդհանուր Ըմբռնումի և Տեսլականի» (Common Understanding and Vision /CUV/) փաստաթղթի քննարկմանը և ԵՀԽ Սահմանադրության մեջ առաջարկվող փոփոխություններին: Ատենապետ Արամ Ա Կաթողիկոսի ներածական խոսքից հետո, առաջին հարցի վերաբերյալ զեկուցումներով հանդես եկան Յունիս Սանթանան (Պուերտո-Ռիկո) և Ջաքարիաս Սար Թեոփիլոս եպիսկոպոսը (ԱՄՆ), իսկ երկրորդի մասին՝ Ջորջ Ցեցիսը (Շվեյցարիա) և Մարիոն Բեստը (Կանադա): «Ընդհանուր Ըմբռնումի և Տեսլականի» փաստաթուղթն իր հիմնական գծերի մեջ ընդունվեց, մինչ առաջարկված սահմանադրական փոփոխությունների մի մասը մերժման հանդիպեց:

Դեկտեմբերի 7-ի լիազումար միստը, ԵՀԽ նախագահ Վինտոն Անդերսոնի (ԱՄՆ) ատենապետությամբ, իր ուշադրությունը կենտրոնացրեց Կանանց Միջազգային Տասնամյակի վրա, որն ավարտվեց այս տարի: Քննարկման հիմնական առանցքը եկեղեցիների համերաշխության արտահայտությունն էր կանանց հետ՝ վերջիններիս պայքարում հանուն հավասարության: Նիստի

սկսվելուց առաջ ատենապետը բոլորի ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ այդ օրը լրանում է մահ Սպիտակի երկրաշարժի 10-ամյակը, և ներկաների հետ աղոթեց զոհերի հոգիների խաղաղության և Հայաստանի վերականգնման համար:

ԵՀԽ նախագահ Սիարոն Թոլենի (Կամերուն) ատենապետությամբ դեկտեմբերի 8-ի լիազումար միստը նվիրված էր Աֆրիկային և այս մայրցամաքի հիմնահարցերին: Սույն միստին ելույթ ունեցավ Զիմբաբվեի Հանրապետության նախագահ Ռոբերտ Մուզաբեն, որը շեշտեց ԵՀԽ դերը Աֆրիկայի ազատագրության պայքարում և կատարեց վերլուծումներ առաջիկայի համար:

Այս օրերին լիազումար միստերին զուգահեռ ընթացան մահ Հանձնաժողովների աշխատանքները, Սուրբգրական խմբակների քննարկումները, Եկեղեցիների կյանքն ու գործունեությունը ներկայացնող ցուցահանդեսները, պաշտամունքային արարողությունները: Սուրբգրական իրենց խմբակներում աշխույժ ներդրում ունեցան Միքայել Ժ. Վրդ. Սջապահյանը և Հարություն սրկ. Հարությունյանը՝ որպես խմբակների ղեկավարներ:

Կարեն Նազարյանի ջանքերով Հայ Եկեղեցին ունեցավ մահ իր ցուցահանդեսը՝ այլ Եկեղեցիների կողքին:

Դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ ԵՀԽ Կենտրոնական Կոմիտեի ընտրությունը, որտեղ մասնավորապես մեծ աշխուժություն առաջացրեց Մայր Աթոռի ներկայացուցիչների ընտրության հարցը: Միքայել Ժ. Վրդ. Սջապահյանի թեկնածությունը բուռն ընդդիմության հանդիպեց ֆեմինիստ պատգամավորների կողմից, որոնք պահանջում էին որպես երկրորդ ներկայացուցիչ ունենալ կին պատգամավոր: Արդյունքում Ադամ արքեպս. Պալիոզյանի հետ Կենտրոնական Կոմիտեի անդամ ընտրվեց Սիլվա Դազեյանը, որի հրաժարականը, հօգուտ Միքայել Ժ. վարդապետի, թողնվեց Կենտրոնական Կոմիտեի քննարկմանը: Կիլիկիո Կաթողիկոսությունից Կենտրոնական Կոմիտեի անդամներ ընտրվեցին Արամ Ա Կաթողիկոսը և Ռուբինա Փերումյանը:

Դեկտեմբերի 11-ին և 12-ին աշխատանքային լիազումար միստերը քննարկեցին Հանձնաժողովների ներկայացրած բանաձևերը Երուսաղեմի, Աֆրիկայի, ԵՀԽ ապագայի մասին, ինչպես մահ Համաժողովի պատգամը:

Դեկտեմբերի 12-ի երեկոյան մորըմտի Կենտրոնական Կոմիտեն Արամ Ա Կաթողիկոսին վերընտրեց ԵՀԽ ատենապետ հաջորդ յոթ տարվա համար:

Դեկտեմբերի 13-ը նվիրված էր ԵՀԽ հիսնամյակի տոնակատարությանը: Սույն միջոցառման իրենց ներկայությամբ հատուկ շուք հաղորդեցին Հարավային Աֆրիկայի Հանրապետության նախագահ Նելսոն Մանդելան և Զիմբաբվեի Հանրապետության նախագահ Ռոբերտ Մուզաբեն: Նելսոն Մանդելան հանդես եկավ ողջույնի խոսքով, որտեղ ի մասնավորի շնորհակալություն հայտնեց ապարտեիդի ու ռասիզմի դեմ պայքարում ԵՀԽ ցուցաբերած աջակցության համար: Ելույթ ունեցավ մահ Ամստերդամի Ա Համաժողովի (1948) պատգամավոր և ԵՀԽ նախկին ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերը: Տեսաֆիլմերի, երաժշտության ու խոսքի միջոցով ներկայացվեց ԵՀԽ անցած ճանապարհը հիսուն տարիների ընթացքում: Տոնակատարությունն իր գագաթ-

նակետին հասավ Ուխտի նորոգման պաշտամունքային արարողության ժամանակ, երբ եկեղեցիները վերահաստատեցին «միասին լինելու» իրենց վճռականությունը:

Համաժողովի վերջին օրվա ընթացքում ընդունվեցին Հանձնաժողովների ներկայացրած բոլոր փաստաթղթերը՝ որոշ սրբագրումներով: Համաժողովն ավարտվեց փակման աղոթքով և հատուկ արարողությամբ:

Հայ պատգամավորները Ձիմբաբվեում նշեցին Սպիտակի երկրաշարժի տասնամյակը հոգեհանգստյան արարողությամբ նախ դեկտեմբերի 6-ին՝ Հարարեի Ղպտի եկեղեցում, ապա դեկտեմբերի 7-ին՝ առավոտյան պաշտամունքի ընթացքում, մեծաթիվ պատգամավորների ներկայությամբ:

Դեկտեմբերի 7-ին, Երևանի ժամանակով ժամը 11.41-ին, Սուրբգրական խմբակներում լուսյան և աղոթքի րոպե հայտարարվեց:

Հարարեում, իրենց կեցության ընթացքում, հայ պատգամավորներն առիթ ունեցան հանդիպելու տեղի փոքրաթիվ հայ համայնքին, որի անդամներն այստեղ են տեղափոխվել Եթովպիայից, Լիբանանից, Ավստրալիայից, ինչպես նաև Հայաստանից:

Մայր Աթոռի պատվիրակները Համաժողովից հետո հնարավորություն ունեցան նաև այցելելու Ձիմբաբվեի հպարտությունը հանդիսացող Վիկտորիայի ջրվեժ և սքանչազան բնության այդ անկրկնելի հրաշալիքով:

ՄԻԶԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱԶԱՊԱՅՅԱՆ

ՆԱ ՄԻՇՏ ԲԱՐՁՐ ՄՆԱՅ ԻՐ ԱՊՐԱԾ ԺԱՄԱՆԱԿԻՑ

Անցնող տարվա այս վերջին օրերին, դեկտեմբերի 28-ին, կյանքից այնքան անժամանակ հեռացավ բանասիրական գիտությունների դոկտոր, Մաշտոցի անվան Մատենադարանի քաժմի վարիչ, Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի պետական հանձնաժողովի անդամ Արտաշես Ազատի Մարտիրոսյանը:



Ծնվել է 1930 թ. Լենինականում: 1952 թ. ավարտել է տեղի Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմա-բանասիրական ֆակուլտետը, 1958 թ.՝ Հայաստանի գիտությունների Ակադեմիայի ասպիրանտուրան՝ մույն թվականին ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1971 թ.՝ դոկտորի աստիճան: Թեկնածուական աշխատանքում, որը լույս է տեսել նաև առանձին գրքով, նվիրված է Մարտիրոս Ղրիմեցու մատենագրական ժառանգությանը: Այնտեղ ցույց է տրվում նաև Հայաստանի ու Բուլղարիայի պատմության առանձին հարցերի լուսաբանման համար Ղրիմեցու երկերի ունեցած կարևորությունը: Դոկտորական աշխատանքը վերաբերվում է Մերձավոր Արևելքի մ.թ.ա. 7-րդ դարի նշանավոր գրական հուշարձան Ախիկարի պատմությանը: Այն՝ «Պատմություն եւ խրատք խիկարայ իմաստնոյ», լույս է տեսել երկու հատորով (հտ. Ա, Երևան, 1969 թ., հտ. Բ, Երևան, 1972 թ.): Այս աշխատությունում, 100 ձեռագրերի հիման վրա, Մարտիրոսյանը վեց տարբերակով կազմել է Ախիկարի հայկական խմբագրության գիտահամեմատական բնագիրը՝ ցույց տալով, որ բուն բնագրի թուրքալեզու և սլավոնական տարբերակների սկզբնաղբյուրը ոչ թե մերձավորարևելյան այս հուշարձանն է, այլ՝ վերջինիս հայկական խմբագրությունը, և թե այս հանգամանքը արտահայտությունն է այն իրողության, որ Հայաստանը պատմա-մշակութային կամրջի դեր է խաղացել Մերձավոր Արևելքի և Արևելյան Եվրոպայի միջև:

1975-79 թթ. Մարտիրոսյանը «Պատմա-բանասիրական հանդես»-ում երեք հոդված տպագրեց՝ նվիրված 3-4-րդ դարերում Հայաստանի ու

Մասանյաճ իրանի փոխհարաբերություններին, ճշտելով նաև պարսից գահակալների ժամանակագրությունը Շապուհ երկրորդից մինչև Հագկերտ Բ, որոշակի ուղղումներ մտցնելով Նյուդեքերի և Բիքերմանի նշանավոր ցանկերում:

1982 թ. լույս տեսավ Մարտիրոսյանի «Մաշտոց» մեմագրությունը՝ մվիրված հայոց, վրաց և ադվանից գրերի ստեղծման պատմությանը և այդ գործում Հայոց պետության ունեցած դերին: Մահից առաջ հասցրեց ավարտել նաև «Թարգմանչաց դար» ուսումնասիրությունը:

Իր վերջին աշխատանքը դարձավ այս տարվա սեպտեմբերին «Հայաստանը և Բրիտանյա Արևելքը» գիտաժողովում Հայոց դարձի 301 թ. տեղի ունենալը հավաստող զեկուցումը: Նրանում հայկական, բյուզանդական և պարսկական աղբյուրներում վկայակոչված ու Հայոց Դարձի թվականի հետ հարաբերվող իրադարձությունների ժամանակագրորեն փոխադարձաբար ներդաշնակ կուռ մի համակարգի կազմությամբ հավաստվում է հայ ժողովրդի համար դարձակետային այս իրադարձության 301 թ. տեղի ունենալը, և ցույց են տրվում երրորդ դարի վերջում ստեղծված աշխարհաքաղաքական ու մշակութային այն բարենպաստ նախադրյալները, որոնք հնարավոր դարձրեցին, որ 301 թ. Հայաստանը Բրիտանյանությունը աշխարհում առաջինը պետականորեն ընդունի: Ժամանակագրական այս հիմնավորումը, հիշյալ նախադրյալների առավել խոր քննությամբ ու մեկնաբանությամբ, ցանկանում էր հրատարակել առանձին մի գրքով, սակայն սեպտեմբերին դարանակալ հիվանդությունն արդեն սկսել էր տարածվել՝ անկատար դարձնելով և այս ծրագիրը: Կյանքի վերջին օրերին, հիվանդության մահճում ցավով հիշելով կիսատ մնացած աշխատանքները, համաձայնվեց, որ այս զեկուցումը տպագրենք «Էջմիածին» ամսագրում, որը և կկատարենք առաջիկա համարներից մեկում:

Արտաշես Մարտիրոսյանի անժամանակ մահը ծանր և իսկապես անփոխարինելի կորուստ էր ոչ միայն գիտության, այլև գիտական ու հասարակական ընդհանուր բարոյական մթնոլորտի համար, որը դժբախտաբար գոնե առայժմ գահավեժ մի ընթացքով շարունակում է իր անկումը, որի առաջն առնողներից մեկը մնաց նա իր ողջ գիտահասարակական կյանքում:

Մարտիրոսյանը երբեք տուրք չտվեց ժամանակի պահանջարկին ու առաջարկին, գիտությունը վաճառվող ապրանքի չվերածեց, այլ գնահատող արժեք դարձրեց՝ ժամանակի քաղաքական վայրիվերումներում իր հասարակական-քաղաքացիական կեցվածքը պայմանավորելով անկաշառ գիտնականի գնահատականով, ուրվագծելով և իր ապրած ժամանակի հասարակական, պետական-քաղաքական ու ընդհանուր մշակութային պատկերը, դրանով իսկ հավաստելով այն իրողությունը, որ ճշմարիտ, իսկական և անկաշառ գիտնականը պետք է ունենա նաև քաղաքացիական կեցվածք, և այդ կեցվածքը արտահայտվելու է գրասեղանի մոտ:

Մաշտոցի անվան Մատենադարանի աշխարհականի իր խցի

պատուումներից մա աշխարհին ու իր ապրած ժամանակին միշտ մայեց հայ ժողովրդի ստեղծած հոգևոր-մշակութային անմահ արժեքների բարձունքից, իր գործերն ու կյանքը շարունակ հարաբերեց իր ապրած ժամանակի հետ, սակայն միշտ քարձր մնաց իր ապրած ժամանակից:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Հանուն Վեհափառ Հայրապետի, Արտաշես Մարտիրոսյանի անժամանակ մահվան առիթով, ցավակցական գիր է եղել Կաթողիկոսական Ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը.

ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

Սրտի խոր վշտով իմացանք Մաշտոցի անվան Մատենադարանի բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, 1700-ամյակի Պետական Հանձնաժողովի անդամ, ճանաչված գիտնական Արտաշես Մարտիրոսյանի մահվան ցավալի լուրը:

Նրա հարուստ վաստակը հայոց պատմության լուսաբանման և լեզվի ու գրականության ուսումնասիրության բնագավառներում անգնահատելի արժեք ունի: Իր «Մաշտոց» և այլ մենագրություններով ու ուսումնասիրություններով մա կարևոր ծառայություն է մատուցել 4-5-րդ դարերի պատմության և բանասիրության, ինչպես մաև Հայաստանում Քրիստոնեության ընդունման ու տարածման, հայոց գրերի արարման և մի շարք գիտական այլ հիմնահարցերի պարզաբանմանը և լուծմանը:

Հանուն Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միաբանության և պաշտոնեության, ներկայացնում ենք հանգուցյալի վշտակիր ընտանիքին, Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակիցներին և իր գիտական բոլոր գործընկերներին մեր խորազգաց ցավակցությունները:

Թող Բարձրալու Աստված հանգուցյալի հոգին ընդունի իր երկնային երանավետ խաղաղության մեջ, և Սուրբ Հոգին մխիթարություն և սգո փարատում պարգևի ձեր ընտանիքին:

Խունկ, աղոթք և օրհնություն հանգուցյալի արդար հիշատակին:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 2-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր, երեկոյան, վեհարանում տեղի ունեցավ միաբանական ժողով, որի ընթացքում միաբաններին ներկայացվեց վեհափառ Հայրապետի կոնդակը՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանին կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ նշանակելու մասին:

Դեկտեմբերի 6-ին, կիրակի.- Գ. կիրակի Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Բազումք են կոչեցեալք՝ եւ սակաւք են ընտրեալք» (Մատթ. Ի 16) բնաբանով:

Դեկտեմբերի 7-ին, երկուշաբթի.- Պահք: Սրբոցն Մինասայ, Երմոգինեայ, Գրաբոսի, եւ կամաւոր աղքատացն՝ Յովհաննու եւ Ալէքսիանոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան, Գևորգյան Հոգևոր Ընտանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաչարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Կա ժամանակ ծնանելոյ, եւ ժամանակ մեռանելոյ, ... ժամանակ քակելոյ և ժամանակ շինելոյ, ժամանակ լալոյ եւ ժամանակ ծիծաղելոյ» (Ժողովող Գ 1-3) բնաբանով (տե՛ս էջ 30):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ Ի հիշատակ 1988 թ. մեծ երկրաշարժի զոհերի տասներորդ տարելիցի:

Դեկտեմբերի 13-ին, կիրակի.- Դ. կիրակի Յիսնական:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար արքեպ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբն ընթերցեց Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ Անանիա եպս. Արաքսյանին արքության պատիվ շնորհելու մասին (տե՛ս էջ 19):

Անանիա արքեպս. Արաքսյանը քարոզ խոսեց՝ «Սիմովն Յովնանու, սիրե՛ս զիս առաւել քան զդոսա» (Հովհ. ԻԱ 15) քնարանով (տե՛ս էջ 95):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

Դեկտեմբերի 16-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական ժողով, որի ընթացքում քննարկվեց Հայաստանի ողջ տարածքում քրիստոնեական քարոզչությունն է՛լ ավելի ամուր հիմքերի վրա դնելու հարցը:

Դեկտեմբերի 20-ին, կիրակի.- Ե. կիրակի Յիսնական:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արմաշ արքեպ. Նալբանդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Աստուած, քաւեա զիս զմեղաւորս» (Ղուկ. ԺԸ 13) քնարանով:

Դեկտեմբերի 23-ին, չորեքշաբթի.- Պահք:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական ժողով, որի ընթացքում Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը միաբաններին պատմեց Զիմբաբվեում գումարված Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հերթական՝ 7-րդ համաժողովի աշխատանքների և այդ համաժողովին Հայ Առաքելական Եկեղեցու պատվիրակության մասնակցության մասին:

Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը, հավարտ միաբանական ժողովի, զրույց ունեցավ միաբան սարկավագների հետ:



Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանն ընդունեց Վրաստանի տրամապորտի նախարար Մերաբ Աղեիշվիլուն, փոխնախարարներ Զուրաբ Բիբիիշվիլուն և Բադրի Դարջանիային՝ Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գեորգի Խոսրոնի և ՀՀ տրամապորտի փոխնախարար Արթուր Ավանյանի ուղեկցությամբ:

Հանուն Վեհափառ Հայրապետի ողջունելով հյուրերին, Սրբազան Հայրն իր ուրախությունը հայտնեց Հայաստանի, Վրաստանի, ինչպես նաև Բուլղարիայի միջև հաղորդակցության բնագավառում ծրագրվող եռակողմ համագործակցության համար և հույս հայտնեց, որ համատեղ տնտեսական ծրագրերով եղբայրական ժողովուրդներին առավել դյուրին կլինի հաղթահարել ներկայիս դժվարին կացությունը:

Խոսելով Հայ և Վրաց Եկեղեցիների սերտ հարաբերությունների մասին, Սրբազան Հայրն իր ողջունը փոխանցեց Վրաց Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին:

Հանդիպմանը ներկա էր Գեղարքունյաց թեմի առաջնորդ գերշ. Տ. Անանիա արքեպս. Արարաջյանը:



Դեկտեմբերի 24-ին, հինգշաբթի.- Սրբոցն Դավթի մարգարէին եւ Յակովբայ Տեառնեղբայր առաքելոյն:

Այսօր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերշ. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանն ընդունեց Հայաստանում Իսրայելի արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Թբիլիսի) Էհադ Էլդամին:

Կարևորելով իր անդրաճիկ այցը Մայր Աթոռ, Իսրայելի դեսպանը նշեց, որ Երուսաղեմը տուժն է քրիստոնեության, իսկ Հայաստանն առաջինն էր աշխարհում, որ 1700 տարի առաջ այն հռչակեց իբրև պետական կրոն: Պրմ. Էլդամը նշեց նաև, որ, չնայած քաղաքական շահերի տարբերությանը, հայ և հրեա ժողովուրդներն իրենց ճակատագրերով բազմաթիվ ընդհանրություններ ունեն:

Հանուն Վեհափառ Հայրապետի ողջունելով հյուրին, Սրբազան Հայրը նշեց, որ, ի տարբերություն քաղաքական շահերի, երկու ժողովուրդների ճակատագրերի մեմությունը պարտավորեցնում է համագործակցություն այլ ուղղություններով, իսկ Հայ Եկեղեցու ներկայությունն Իսրայելում հայ և հրեա ժողովուրդների կապերի սերտացման լավագույն հիմք կարող է հանդիսանալ:

Իսրայելի սուրբ հողում Հայոց Եկեղեցու ներկայության մասին հիշատակությունները հասնում են մինչև չորրորդ դար, իսկ յոթերորդ դարից ի վեր գործում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Երուսաղեմի պատրիարքությունը: Սրբազան Հայրն ուրախությամբ փաստեց, որ ներկայումս էլ Երուսաղեմի պատրիարքությունը, անկախ առանձին խնդիրներից, շարունակում է անարգել գործել:

Անդրադառնալով Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին, Գարեգին Սրբազանը հիշատակեց, որ մինչ այդ ողջ քրիստոնյա աշխարհը կտոմի Քրիստոսի ծննդյան 2000-ամյակը, և բոլոր քրիստոն-

յաների հայացքը կողոպտի դեպի Իսրայելի սուրբ հողը, որտեղ ապրել ու գործել է Երկնառաք Վարդապետը: Սրբազան Հայրը՝ դեսպանին տեղեկացրեց, որ 1700-ամյակի տոնակատարության ծրագրերի շրջանակում եկող տարվա աշնանը դեպի սուրբ վայրեր ուխտագնացություն կկազմակերպի մաս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ միաժամանակ հույս հայտնելով, որ հորեյանական հանդիսությունները կստանան Իսրայելի կառավարության աջակցությունը:

Ջրույցի ընթացքում պրն. դեսպանը պատմեց Իսրայելցի ժողովրդի կրոնական կյանքի մասին, հետաքրքրվեց Երուսաղեմի հայոց պատրիարքության գործունեությամբ:

Դեկտեմբերի 26-ին, շաբաթ.- Սրբուն Ստեփաննոսի Նախավկային և առաջին մարտիրոսին:

Այսօր Մայր Տաճարում, Ս. Ստեփաննոսի խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար արքեպ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Որ քոյին յոճարական հանքերութեամբ զքարկոծումն յանձն առեր, շնորհեալ քեզ Աստուծոյ լինել չարչարակից Բրիստոսի. զի և մեզ ուսուցես փառատրել Սուրբ գերորդութիւնն» (Շարական) բնաբանով (տե՛ս էջ 37):

Դեկտեմբերի 27-ին, կիրակի.- Զ. կիրակի Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Աշոտ արքեպ. Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպ. Պողոսյանը՝ «Տուր զհամար տմոեսութեան քոյ» (Ղուկ. ԺԶ 2) բնաբանով:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ:

ԽՈՐԵՆ ԱՐԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ
(1974-1983)****ՎԱՆՔԵՐ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐ****Ա**

Ամապատ (Վանական համալիր
Կիչանի մոտ) 1406
Ատվածընկալի վանք (Ապարանի
շրջան) 674

Բ

Բաչկովոյի վանք (Բուլղարիա) 289

Գ

Գեղարդի վանք 14 1128

Ձ

Ձորաց եկեղեցի (Եղեգնաձոր) 42

Թ

Թալինի կաթողիկե 1245
Թեղենյաց վանք (Ապարանի շրջան)
544

Լ

Լմբատա վանք (Շիրակ) 879 1246

Խ

Խորանաշատ (Տավուշի մարզ) 427
Խոր Վիրապ 1228 1270

Կ

Կարմիր վանք (Շուղր անապատում,
Կիլիկիա) 662

Հ

Հաղբատի վանք 164 879
Հանկատար վանք 712
Հառիճ (Շիրակ) 879

Ս

Սաքենացոց վանք 295
Մխիթարյան միաբանություն (Վիեն-
նա) 1094
Մցխեթայի տաճար (Վրաստան)
458

Ն

Նարեկա վանք 333
Նորավանք (Վայք) 592

Շ

Շուղր անապատ (Կիլիկիա) 662

Ս

Սաղմոսավանք (Աշտարակ) 1126
Սենտ Անդրե (Բորոդոյի կաթողիկա-
կան Մայր Տաճար) 828
Սվեթիցխովելիի Մայր Տաճար
(Մցխեթա) 1458
Սուրբ Ալբանի եկեղեցի (Լոնդոն)
618
Ս. Ալեքսանդր Նեոսկու տաճար
(Սոֆիա) 298
Ս. Աննա տաճար (Մյունխեն) 1153

- Ա. Սստվածածին եկեղեցի (Գյումրի) 429 1446
- Ա. Սստվածածին վանք (Հրազդանի շրջան) 429 1446
- Ա. Սստվածածին եկեղեցի (Մեյդան, Իրաք) 630
- Ա. Սստվածածին եկեղեցի (Նիցցա) 839
- Ա. Սստվածածին եկեղեցի (Սոֆիա) 289
- Ա. Գայանե եկեղեցի (Էջմիածին) 631 1254 1358 1502
- Ա. Գեղարդի վանք 709 959 1229 1286
- Ա. Գեւորգ եկեղեցի (Երեւան, Նորագավթ) 1056
- Ա. Գեւորգ եկեղեցի (Թբիլիսի) 843 877
- Ա. Գեւորգ եկեղեցի (Լոնդոն) 1423
- Ա. Գեւորգ անապատ (Հերիեր) 30
- Ա. Գեւորգ եկեղեցի (Մուղնի) 548
- Ա. Գեւորգ եկեղեցի (Պլովդիվ) 736
- Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Բաղդադ) 600 630 966
- Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Բաքու) 732
- Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Բոմոն) 721
- Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Բուենոս Այրես) 232
- Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Սենթ-Գենթրիգ Կանադա) 978
- Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Կիրովաբադ) 203
- Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Մոմբաս) 793
- Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի (Սինգապուր) 738
- Ա. Գրիգոր վանք (Սրուճ) 1245
- Ա. Երրորդություն եկեղեցի (Բեյ Օղլու, Կ. Պոլիս) 784 1070
- Ա. Երրորդություն-Սերգիևսկի վանք (Զագորսկ) 1038
- Ա. Երրորդություն եկեղեցի (Ֆիլադելֆիա) 525
- Ա. Զորավոր եկեղեցի (Եղվարդ) 1424
- Ա. Թադեոս եկեղեցի (Սմման) 208
- Ա. Թեաստինյան տաճար (Սյուն-խեն) 1153
- Ա. Իրենիոսի տաճար (Լիոն) 1172
- Ա. Խաչ վանք (Եղեգնաձոր) 32
- Ա. Խաչ եկեղեցի (Պուրկազ) 596
- Ա. Ծննդյան այր (Բեթլեհեմ) 292
- Ա. Կարապետի վանք (Վերակունիս) 310
- Ա. Կարապետ եկեղեցի (Ալայազ) 1059
- Ա. Կարապետ եկեղեցի (Վայոց Ձոր) 485
- Ա. Հակոբ եկեղեցի (Արտաշատ) 1065
- Ա. Հակոբ եկեղեցի (Ժնև) 584
- Ա. Հակոբ եկեղեցի (Լիոն) 754
- Արքոց Հակոբյանց վանք (Երուսաղեմ) 76 292 471 524
- Ա. Հարություն եկեղեցի (Մոսկվա, Խայկական) 210 289 1062 1423
- Ա. Հարություն տաճար (Մոսկվա, ռուսական) 12
- Ա. Հարություն եկեղեցի (Նյու Պրիթ, Գնեթիքթի, ԱՄՆ) 974
- Ա. Հարություն եկեղեցի (Սաուր Միլոնցի) 1112
- Ա. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի (Փարիզ) 364 637 725 760 834 1062 1423
- Ա. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի (Փիշեք, Ռումինիա) 852
- Ա. Հովհաննես մատուռ (Սան Ռաֆայել, Ֆրանսիա) 678

Ա. Գոլիսիմն վանք 745 807 825
1094 1242

Ա. Գրեշտակապետաց եկեղեցի
(Բուխարեստ) 298 795 1164

Ա. Ղազար (Վենետիկ) 416

Ա. Մարիամ Ատվածածին եկեղեցի
(Իսի Լե Մուլինո) 258

Ա. Մարիամա եկեղեցի (Պլովդիվ)
289

Ա. Մարինե (Աշտարակ) 1065

Ա. Մարկոս եկեղեցի (Ափրիմկֆիլտ,
Մասսաչուսեթ) 1470

Ա. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի
(Օշական) 2 384 524 785 786

Ա. Նշան եկեղեցի (Ռոն Ալպ շրջանի
Պոն Դը Շերի քաղաք, Ֆրանսիա)
1391

Ա. Շողակաթ կամ Մարինե կույսի
վանք (Էջմիածին) 1091

Ա. Պետրոսի տաճար (Ժնև) 617

Ա. Պետրոս եկեղեցի (Լոնդոն) 297
618 1423

Ա. Պողոս տաճար (Լոնդոն) 618

Ա. Սահակ-Մեսրոպ եկեղեցի (Մարսել)
750 775 840 1116

Ա. Սարգիս եկեղեցի (Երեւան) 92 93
354 428 498 996 1034 1229
1349 1402 1503

Ա. Սարգիս եկեղեցի (Լոնդոն) 297
1423

Ա. Սարգիս եկեղեցի (Ղրիմ) 1390

Ա. Սարգիս եկեղեցի (Ատեփանա-
վան) 429

Ա. Սերգեյի վանք (Ձագորսկ) 24

Ա. Սիոն տաճար (Թբիլիսի, վրացա-
կան) 877

Ա. Սիոն անապատ (Դերիեր) 30

Ա. Ատեփանոս եկեղեցի
(Լմբատավանք) 1246

Ա. Ատեփանոս տաճար (Վիեննա)
1094

Վ

Վարազա Ա. Խաչ (Սոմուվիլ) 88
759

Վենետիկի Մխիթարյան միաբանու-
թյուն 416 534 624 945 1249

Վլադիմիրյան տաճար 12

ՈՒ

Ուեթմիստր աբբայարան 297

Ք

Քրոստերնոյուրգի վանք (Ավստրիա)
1094

Օ

Օխտը դոմի վանք Մոխրենիսի
(Հադրուբի շրջան, ԼՂՀ) 1266

Օծունի վանք 879

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբրակունիս 310
 Ադրբեջան 129 732 747 810 1135
 1353 1391 1452
 Աթարբեկյան գյուղ (Յրազդանի
 շրջան) 1095
 Աթենք 750 1104
 Ալայազ (Վայք) 1059
 Ալեքսանդրիա 2 56 80 148 381
 787 1024 1081 1238
 Ալֆորվիլ 827 1062
 Ակրա (Աֆրիկա) 191
 Ադթամար 1414
 Ադվանք 439
 Ամերիկա 8 71 81 88 140 141 232
 235 237 262 279 280 281
 309 332 337 381 385 387
 410 449 470 524 525 530
 559 560 625 658 659 682
 694 695 750 785 787 863
 864 892 941 948 974 984
 987 991 993 1018 1112 1123
 1195 1210 1229 1231 1252
 1256 1297 1302 1303 1318
 1320 1347 1481 1485
 Ամման 208.290
 Ամզլիա 270 378 565 604 787 912
 1423
 Ամթիլիաս 519 532 786 1254 1459
 Ամի 1102 1217
 Ամտիոք 884 1030 1196
 Աշտարակ 1065
 Առնուվիլ (Ֆրանսիա) 88 759
 Ավստրալիա 482 525 615 609 948
 Ավստրիա 382 523 945 1094
 Արգենտինա 521 779 1363
 Արեւելյան Գերմանիա 1386
 Արեւելյան Եվրոպա 481 893 1180
 Արեւելյան Հայաստան 602 623
 672 691
 Արեւելք 884 1030 1196

Արեւմտյան Բեռլին 118 798
 Արեւմտյան Եվրոպա 131 258 418
 441 461 734 746 831 1057
 1229 1443
 Արեւմտյան Հայաստան 885
 Արիզոնա (ԱՄՆ) 984
 Արտաշատ 1065
 Արցախ 1220 1405 1406
 Արուճ 1245
 Աֆրիկա 2 56 148 191 1024

Բ

Բազել 749
 Բաղդադ 80 136 600 630 652 785
 965 966 983 985 986
 Բաշկովո (Բուլղարիա) 1420
 Բասրա 82
 Բավարիա 1047 1153
 Բաքու 732 1135 1452
 Բեդրա 360
 Բեթղեհեմ 292
 Բելգիա 626
 Բելյուս 53 137 224 232 554 786
 880 881 973 979 982 1042
 1311 1465 1467
 Բելյոլու (Կ. Պոլիս) 784
 Բեռլին 945
 Բերկլի 1018
 Բրլց (Մոլդավիա) 1061
 Բյուրական 311 1433
 Բոմոն 721
 Բոստոն 659 750
 Բորդո 828
 Բորժոմի 877
 Բրյուսել 625 1085
 Բուդապեշտ 908 1180
 Բուենոս Այրես 232 977 1240 1309
 1464
 Բուլղարիա 121 142 207 234 283
 289 596 736 779 786 891
 944 1211 1229 1348 1420

Բուխարեստ 259 298 474 502 521

795 1129 1164 1327

Բուրսո (Ֆրանսիա) 258

Գ

Գալնոյկիոիսեն (Ավստրիա) 479

Գաղ 450

Գառնի 1228 1414

ԳԴՀ 90 1428

Գեղամա լեռներ 109

Գերմանիա 943

Գորի 877

Դ

Դամասկոս 237 528 785 994 1229

1488

Դանիա 966 980

Դավթի քերդ 292

Դեսին (Ֆրանսիա) 835

Դրեզդեն 1201

Դրոմի մահանգ (Ֆրանսիա) 833

Ե

Եգիպտոս 528 809

Եթովպիա 620

Եղվարդ 1424

Եվրոպա 221 483 625 1206

Երեւան 81 92 93 125 190 234

235 354 360 376 409 428

491 498 624 787 990 996

1033 1034 1040 1056 1139

1185 1247 1264 1349 1402

1456 1463 1503

Երրուաղեն 12 27 32 69 232 265

292 329 355 360 443 471

524 528 555 624 746 891

925 927 992 1009 1057 1150

1162 1199 1284 1336 1342

Եփեսոս 1089

Զ

Զագորսկ 12 24 101 145 457 482

1038 1291

Է

Էջմիածին 43 53 56 57 135-137

159-60 165 173 184 197 199

201 244 245 249 266-270

275 293 299 361 368 396

405 411 413 414 435 471

490 492 503 524 525 573

602 605 623 638 661 675

707 716 731 790 810 811

812 815 847 877 885 965-

